Ճանաչի՛ր ինքդ քեզ

# ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 24.04.2024թ. չորեքշաբթի թիվ 17-18 (1146-1147)

## Կգա օրը, եւ մենք կվերադառնանք Հայրենիք
## ...Լինի 109, թե էլի մի քանի տարի անց
### Ապրիլի 24-ին երկիրը խնկարկում է Հայոց Մեծ Եղեռնի զոհերի՝ սուրբ նահատակների հիշատակը

**1915-2024**
**Հայոց Ցեղասպանության**
**109-րդ տարելից**

***Հիշում եմ***
***եւ վերածնվում***

## Պատմության դասը

Հայ ժողովուրդն այլեւս երբեք թույլ չի տա իր հետ վարվել այնպես, ինչպես 1915 թվականին ու դրանից առաջ, դրանից հետո... Հայ ժողովուրդն այլեւս երբեք չի խաբվելու, որովհետեւ անվերադարձ թոթափել է մշուշը իր գիտակցության վրայից եւ այսուհետեւ ապավինելու է **միայն ու միայն իր սեփական ուժերին**...

Հայ ժողովուրդն այլեւս երբեք չի պարտվելու, որովհետեւ յուրացրել է արդեն պատմության մեծագույն դասը. *չկան լավ կամ վատ ժողովուրդներ, այլ կան միայն ազգային շահեր*, որոնք կարող են համընկնել կարճատեւ պահերի միայն, իսկ ընդհանրապես՝ գտնվում են հավերժական բախման ու պայքարի մեջ, եւ *«հաղթում է ոչ թե արդարը, այլ՝ ուժեղը»*:

* * *

Եվ ուրեմն՝ մեր գիտակցության ու մեր գործելակերպի մեջ ամրագրենք այս պարզագույն ճշմարտությունը. **մեր Վերածննդի, Հատուցման, Վերադարձի միակ երաշխիքը եղածը պահպանելն է, եղածը պաշտպանելը եւ հզորանալը՝ միայն մեր սեփական ուժերին ապավինելով:**

## Պիտի կերտենք նո՛ր արշալույս

Այն, ինչ տեղի ունեցավ 1915-ին ու դրանից առաջ եւ շարունակվեց մինչեւ 1923 թվականը, սկսվել էր 1878 թվականին, երբ միջազգային դիվանագիտության պատմություն մտավ Հայկական հարցը: Թուրքիան, օգտվելով առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորություններից, հղացավ մարդկային պատմության մեջ մինչ այդ չլսված, նույնիսկ իրենց՝ թուրքերի պատմության համար աննախադեպ հրեշավոր մի ծրագիր եւ ձեռնամուխ եղավ դրա պետականորեն կազմակերպված իրագործմանը՝ Հայկական հարցից ազատվել Հայաստանում հայ բնակչության ոչնչացմամբ, մեկընդմիշտ տիրանալ հայ ժողովրդի պատմական հայրենիքին:

Տարիներ հետո «հայր» Ստալինը պիտի ասեր՝ չկա մարդը, չկա պրոբլեմը: Ֆյուրեր Հիտլերը պիտի ավելացներ՝ ո՞վ է այսօր հիշում հայկական կոտորածները: Բայց իրենք՝ թուրքերը, արդյո՞ք բավականաչափ հիմքեր ունեին մտածելու, որ մնալու են անպատիժ: Եվ արդյո՞ք հայերի ցեղասպանության համար ողջ պատասխանատվությունը ընկնում է միայն Թուրքիայի վրա, թե՞ կան նաեւ մեղսակիցներ: Կայզերական Գերմանիա՞ն... Ռուսաստա՞նը... Անգլիա՞ն... Առայժմ մեզ անծանոթ են եվրոպական պետությունների, Ռուսաստանի դիվանագիտական խարդավանքների ու խաղերի բոլոր մանրամասները, որ հիմքեր դառնային ուղղակի մեղադրականի, Հայկական հարցի պատմության՝ 1915-ին նախորդած 37 տարիների ընթացքում: Սակայն տարրական տրամաբանությունը մեզ հուշում է, մանավանդ, երբ համադրում ենք պատմական իրադարձությունները եւ հայտնի բազմաթիվ փաստեր, որ ե՛ւ եվրոպական պետությունները, ե՛ւ Ռուսաստանը իրենց քաղաքական շրջապտույտներով այնուամենայնիվ նպաստեցին Թուրքիայի ոճրագործ դիրքորոշմանը...

Հիշենք Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, ապա՝ Բեռլինի կոնգրեսը եւ Խրիմյան Հայրիկի «Երկաթե շերեփի» պատվիրանը... Հիշենք դրանից առաջ քաջ զեյթունցիների՝ դեռեւս 1862-ին ժայթքած հերոսական ապստամբությունը: Ավաղ, 1915-ին Արեւմտյան Հայաստանի միայն մի քանի գավառներ ու քաղաքներ հետեւեցին քաջ զեյթունցիների օրինակին: Իսկ ընդհանրապես՝ 600 տարի պետականությունը կորցրած հայ ժողովուրդը, այլեւս անվստահ սեփական ուժերի հանդեպ, հույսեր էր փայփայում օտար միջամտությամբ եւ օգնությամբ ազատագրվել դեռեւս 11-րդ դարից Առաջավոր Ասիա եւ Հայաստան ներխուժած սելջուկ-թուրքերից... Սկսած 1722 թ. Դավիթ Բեկի ապստամբության օրերից, մասնավորապես արեւելահայոց մեջ ձեւավորվեց ռուսական կողմնորոշումը: Հայության մի զգալի մասն էլ ուներ արեւմտյան (եվրոպական) կողմնորոշում: Երկարատեւ քաղաքական դեգերումներից հետո, վերջապես, 1878-ին կարծես թե «հասանք» մեր ուզածին. մեր դատը հանձնված էր օտար բարձր ատյաններին, մտել էր օրակարգ... Շուրջ 40 տարի մեր «հովանավորները» առեւտուր արեցին, եւ բոլորն էլ ինչ-որ մի բան շահեցին՝ բացի մեզանից: Ռուս-թուրքական պատերազմները հայոց հույսը միշտ վառ էին պահում, սակայն դա միայն Ռուսաստանին ձեռնտու հետեւանքներ էր ունենում: Ի վերջո, Հայկական հարցի «մենաշնորհը» Ռուսաստանն իր ձեռքը վերցրեց: Սակայն Ռուսաստանին Հայաստանը պետք էր առանց հայերի: Տնտեսական տեսակետից ձեռնտու էր Հայաստանի բնիկ բնակչության աքսորումը եւ ռուսներով բնակեցումը: Ռուսաստանի քաղաքական շահը պահանջում էր խոչընդոտել Արեւմտյան Հայաստանի ազատագրությանը, որպեսզի վերջնականապես ծուլեր, յուրացներ, սեփականացներ 1828-ից իրեն անցած Արեւելյան Հայաստանը...

Հիշենք 1914-ին Պետական Դումայում դեպուտատ Մարկովի ելույթը. *«Ինչո՞ւ համար, իսկապես, Ռուսաստանը պետք է Կովկասի սահմանագլխում ստեղծի Մեծ Հայաստան: Դա ավելի վատ կլինի, քան Մակեդոնիան: Դա կստեղծի երկրորդ Լեհաստան: Հայերը լավ են ապրում, թե վատ, դա նրանց գործն է, իսկ մենք, եթե օժանդակենք ստեղծելու հայկական պետություն, նշանակում է՝ օժանդակենք կորցնել ամբողջ Կովկասը»*:

19-րդ դարի վերջին, հատկապես՝ 90-ական թվականներից, հայ ազգային-քաղաքական կյանքը զարթոնք էր ապրում: Թվում է՝ ուր որ է պիտի արվեր ազգային-ազատագրական պայքարի մի վերջին հզոր ճիգ, եւ վերականգնվում էր Պատմական Հայրենիքը: Սակայն այդպես էլ չկարողացանք ի մի բերել մեր ուժերը, ապավինեցինք օտարին ու ոչ միայն չհասանք մեր ազգային բնականոն երազի իրականացմանը, այլեւ եղեռնազարկ եղանք, եւ կորցրեցինք մեր հայրենիքի 9/10-րդ մասը...

***տես՝ նաեւ էջ 8-10***

## Հայաստա՛ն, երկի՛ր դրախտավայր, Դու մարդկայնո ցեղիս օրրան,
## Դու եւ բնիկ իմ հայրենիք, Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Հետահայաց

# Նահանջ հազար տարով

## Երկաթե շերեփի դասը

Ուզենք, թե չուզենք, լինենք հանրապետություն, թե միապետություն, ժողովրդավարությանն անկեղծորեն փարվենք, թե խաղանք ժողովրդավարություն, մեր իրական կամ արհեստականորեն մեր կողքին հայտնված հարեւանների հետ լինենք պատերազմի, թե բարիդրացիական հարաբերությունների մեջ, միեւնույնն է, մեր **խնդիրը** մնում է նույնը արդեն հազար տարի: Իսկ թե որն է մեր ընդհանրական խնդիրը, գիտե անգամ յուրաքանչյուր հայ երեխա. ձեւակերպենք այն գեղարվեստորեն՝ **վերադարձ դեպի Արարատ,** կուսակցականորեն՝ **ազատ, անկախ, միացյալ,** պատմագիտորեն՝ **Պատմական հայրենիքի վերականգնում**... թե մի այլ եզրով՝ էական չէ: Բովանդակությունը նույնն է: Ու քանի դեռ խնդիրը լուծված չէ, միշտ մնում է այժմեական:

Մեր (միջին սերնդի) պատանության տարիներին միջազգային դիվանագիտությունն ու նրա պատմությունը մեզ համար հետաքրքրական էին հենց այն մասերով, որ առնչվում էին **Հայկական հարցին**: Հետագայում այս հասկացության փոխարեն ավելի հաճախ սկսեցին կիրառվել **Հայ դատի խնդիր, պահանջատիրություն** եզրերը: Վերջին տարիներին առավել գործածականը **Հայոց ցեղասպանության ճանաչում** հասկացությունն է:

Առաջին հայացքից՝ երեքն էլ նույն իմաստն ունեն կարծես, բայց նրբերանգային մեծ տարբերություն կա դրանց միջեւ եւ նույնիսկ՝ ակնհայտ նահանջ: Ստացվում է, որ մեր *հազար տարով նահանջը* նորից նահանջ է ապրում: Այնինչ, Արցախի ազատագրական պայքարը եւ հաղթանակը որոշակիորեն կանգնեցրին մեր հազարամյա նահանջը. **վերականգնված է Հայաստանի Հանրապետությունը**՝ իբրեւ անկախ եւ ինքնիշխան պետություն, եւ **ազատագրված է** *Պատմական հայրենիքի* արեւելյան կողմի մի հատվածը: Թվում է, թե ժամանակն է պետականորեն անդրադառնալ **Սեւրի** դաշնագրից բխող մեր իրավունքներին...

Սակայն քաղաքագետը կամ պետական քաղաքականության մեջ գործող անհատը կարող է մեզ դիվանագիտական խրատ տալ, թե՝ քաղաքականությունը **հնարավորի** իրագործման արվեստն է, եւ Հայոց ցեղասպանության ճանաչումով այսօր բավարարվելը տրամաբանորեն ճշգրիտ տարբերակ է: Գուցե դա ճիշտ է արտաքին դիվանագիտության դաշտում, բայց ոչ երբեք՝ մեր *հասարակական գիտակցության* մեջ: Նկատի ունենք մեր հազարամյա նահանջի պատմական ցավալի փաստը եւ վերածնված Հայաստանի առաջիկա հաջողությունների հանդեպ մեր մեծ ակնկալիքը: Այն հզոր ներուժը, որ ունի աշխարհասփյուռ հայ ժողովուրդը, թերեւս կարոտ է հայության բոլոր հատվածները միմյանց սոսնձելու կարողությամբ օժտված մի **գաղափարախոսության**, որը չի վախենա **ազգայնական** հորջորջվելուց եւ միանշանակ կտարփողի **ազգային շահը**՝ առանց որեւէ այլեւայլության... մինչեւ որ դա կարողանանք անել նաեւ *պետականորեն*:

Ամեն մի կառույց, անգամ տիեզերքը՝ Արարչագործությունից առաջ, նախ հանդես է գալիս իբրեւ *միտք, գաղափար, նախագիծ* եւ նոր միայն *իրական* տեսք է ստանում: Ունենք մեր երազների երկիրը՝ իբրեւ **Հոգեւոր Հայաստան, Պատմական հայրենիքի** *տեսիլ*, այժմ արդեն պիտի ունենանք՝ իբրեւ *գաղափար, նախագիծ* ու *ծրագիր*: Ամեն մի ծրագրի (խնդրի) իրագործման համար անհրաժեշտ են **ռեսուրսներ** (թող ներվի *պաշար* բառի փոխարեն օտար բառի գործածումը)՝ *հոգեւոր, բարոյական, գաղափարական, տնտեսական, նյութական* եւ այլն...

Ուրեմն՝ ունենանք **գաղափարը** մեր ուղեղներում, **հավատը**՝ մեր սրտերում, **ծրագիրը**՝ մեր գործերում ու անդուլ, անդադար կուտակենք անհրաժեշտ պաշարները (ռեսուրսները)՝ առանց երկմտելու, առանց երկնչելու, առանց տարբեր ախտերով միմյանց վարակելու եւ, ամենակարեւորը՝ **ազատվելով ստրկախտից:** Կա ***քարերը հավաքելու*** ժամանակը, կա ***քարերը նետելու*** ժամանակը: Մենք միշտ այդ ժամանակը դիմավորել ենք *առանց քարերի, թղթե շերեփով* (հիշենք **Խրիմյան Հայրիկի** խրատը), դրա հետեւանքով էլ քարերը հավաքելու եւ քարերը նետելու ժամանակները հերթագայել են միմյանց (արդեն հազար տարի), ու այդպես էլ չի եկել **մեր ժամանակը**:

Արդ, ժամանակն է նախապատրաստելու *մեր ժամանակը*: Երկար թե կարճ, մեծ թե փոքր, ամեն մի ճանապարհ կամ գործ սկսվում է առաջին քայլից:

Սկսենք նաեւ մենք: Թեկուզ մեզ հետ տեղի ունեցածը հստակ պատկերացնելու, մեր պատմությունն ու մեզ ճանաչելու պարզ քայլից:

***Գ.Մ.***

***«Կրթություն», թիվ 17-18, 22.04.2009 թ.***

# Հարգանքի տուրք՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** ՀՀ նախագահ **Վահագն Խաչատուրյանի,** Ազգային ժողովի նախագահ **Ալեն Սիմոնյանի** եւ երկրի բարձրագույն ղեկավարության հետ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցել Մեծ Եղեռնի 1,5 միլիոն զոհերի հիշատակին:

Նիկոլ Փաշինյանը ծաղկեպսակ է դրել հուշակոթողին, ծաղիկներ խոնարհել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ:

* * *

Դեռեւս ապրիլի 23-ի երեկոյան, լույս 24-ի գիշերը, ապա բացված օրվա ողջ ընթացքում չէր դադարում երեւանցիների, ՀՀ բոլոր մարզերից, Սփյուռքից եկած մեր հայրենակիցների եւ բազմաթիվ օտարերկրացիների հոսքը դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր...

# ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձը՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 109-րդ տարելիցի կապակցությամբ

Սիրելի՛ ժողովուրդ, Հայաստանի Հանրապետության սիրելի՛ քաղաքացիներ,

Այսօր մենք ոգեկոչում ենք Հայոց ցեղասպանության, Մեծ եղեռնի 1.5 միլիոն զոհերի հիշատակը, ովքեր 1915 թվականից Օսմանյան կայսրությունում սրի քաշվեցին հայ լինելու համար:

Այս մասշտաբային ողբերգությունը տեղի ունեցավ առաջին աշխարհամարտի տարիներին, եւ պետականություն չունեցող, պետականությունը հարյուրամյակներ առաջ կորցրած, պետականության ավանդույթն, ըստ էության, մոռացած հայ ժողովուրդն աշխարհաքաղաքական խարդավանքների ու սին խոստումների զոհ դարձավ՝ զուրկ լինելով առաջին հերթին աշխարհն ու նրանում գործող կանոններն իրեն հասկանալի դարձնելու ընդունակ քաղաքական մտքից:

Մեծ եղեռնը համազգային ողբերգություն եւ հոգեցնցում դարձավ մեզ համար, եւ, առանց չափազանցության, մեր սոցիալ-հոգեբանությունը կանխորոշող գործոն է: Մենք այսօր էլ աշխարհը, մեր միջավայրը, ինքներս մեզ ընկալում ենք Մեծ եղեռնի հոգեցնցման տիրապետող ազդեցության ներքո եւ չենք հաղթահարել այդ հոգեցնցումը:

Սա նշանակում է, որ լինելով միջազգայնորեն ճանաչված պետություն՝ մենք հաճախ այլ երկրների, միջազգային հանրության հետ հարաբերվում ու մրցակցում ենք հոգեցնցման վիճակում, եւ այս պատճառով երբեմն չենք կարողանում ճիշտ զատորոշել իրողություններն ու գործոնները, պատմական ընթացքներն ու

կանխատեսվող հորիզոնները:

Գուցե նաեւ սա է պատճառը, որ մենք ստանում ենք նորանոր ցնցումներ՝ Հայոց ցեղասպանության հոգեցնցումը վերապրելով արդեն որպես ժառանգություն եւ որպես ավանդույթ:

Այս իմաստով, չափազանց կարեւոր եմ համարում Մեծ եղեռնի ներքին հայեցումը: Հայոց ցեղասպանության, Մեծ եղեռնի մասին խոսելիս մենք մշտապես հղում ենք անում արտաքին աշխարհին, խոսում արտաքին աշխարհի հետ, բայց մեր ներքին խոսակցությունն այս թեմայով այդպես էլ չի կայանում:

Ի՞նչ պիտի անենք եւ ի՞նչ պիտի չանենք, որպեսզի հաղթահարենք ցեղասպանության հոգեցնցումը եւ բացառենք այն որպես սպառնալիք: Սրանք հարցեր են, որ մեր քաղաքական, քաղաքագիտական, գեղագիտական ու փիլիսոփայական մտքի քննարկման առանցքային առարկան պիտի լինեն, բայց Մեծ եղեռնի փաստի հետ հարաբերվելու այսպիսի դիտանկյունը տարածված չէ մեզանում:

Սա հրամայական է, անհետաձգելի հրամայական, ու մենք պիտի գնահատենք Մեծ եղեռնի եւ Հայաստանի Առաջին Հանրապետության հարաբերությունները, մենք պետք է Մեծ եղեռնի ընկալումը հարաբերենք Հայաստանի Հանրապետության՝ մեր ազգային պետականության կենսական շահերի հետ:

Մեծ եղեռնը, հայրենազրկումը դատավճիռ չէ մեզ համար, որ պիտի կրենք որպես կորուսյալ հայրենիքի շարունակական փնտրտուք: Մենք պետք է դադարենք հայրենիքի փնտրտուքը, որովհետեւ գտել ենք այդ հայրենիքը, մեր Ավետյաց երկիրը, որտեղ կաթ եւ մեղր է հոսում: Մեծ եղեռնի նահատակների ոգեկոչումը մեզ համար պետք է ոչ թե կորուսյալ, այլ գտնված եւ իրական հայրենիքը խորհրդանշի՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության, որի մրցունակ, լեգիտիմ, մտածված եւ ստեղծագործ քաղաքականություններն են, որ կարող են բացառել կրկնություն:

Այլեւս երբե՛ք: Մենք սա ուրիշներին չպետք է ասենք, այլ ինքներս մեզ: Եվ սա ամենեւին էլ մեղադրանք չէ ինքներս մեր հասցեին, այլ դիտանկյուն, որտեղ մենք, միայն մենք ենք մեր ճակատագրի պատասխանատուն ու տնօրենը եւ պարտավոր ենք ունենալ բավարար միտք, կամք, խորք ու իմացություն՝ այդ պատասխանատվությունը մեր ինքնիշխան որոշումների ու ընկալումների տիրույթում կրելու:

Թող Հայաստանի Հանրապետությամբ մխիթարված ննջեն Մեծ եղեռնի եւ մեր բոլոր մյուս նահատակները:

Եվ կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

# Հայոց ցեղասպանության Սուրբ նահատակների բարեխոսական կարգ

Ապրիլի 24-ին **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ ոգեկոչելու Հայոց Ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը:

Հուշահամալիրում՝ անմար կրակի առջեւ, ծաղկեպսակի զետեղումից հետո Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Հայոց Ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

Օրվա առիթով՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր էր բերվել նաեւ Հայոց Ցեղասպանության սրբոց նահատակաց մասունքարանը:

* * *

Ինչպես հաղորդում է *«Արմենպրես»*-ը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը հայ ժողովրդին համերաշխ ու միասնական լինելու կոչ հղեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում լրագրողների հետ զրույցի ժամանակ:

*«Հայրական մեր պատգամն ենք բերում մեր ժողովրդին: Առկա անվտանգային սպառնալիքների հանդիման լինենք համերաշխ, լինենք միաբան ու միասնական, որպեսզի կարողանանք անկորուստ պահպանել հայրենի մեր երկիրը եւ անխռով՝ ազգային մեր կյանքը:*

*Սիրելի՛ հայ ժողովուրդ, ապրենք առ Աստված ապավինությամբ, հավատքով ու հույսով, հզոր աննկուն, չտկարանանք դժվարությունների առջեւ: Մեր Սուրբ նահատակների բարեխոսությամբ Աստված երկնային բարձունքներից հեղելու է մեր կյանքին խաղաղության, ապահովության ու անվտանգության իր օրհնությունները: Մշտահունչ պահենք մեր հոգիներում եւ մեր սրտերում աղոթքն առ Աստված: Աստված միշտ օգնական է լինելու եւ պահապան է լինելու մեր ժողովրդին այսօր եւ հավիտյանս: Ամեն»,-* նշեց Գարեգին Երկրորդը:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Հայոց ցեղասպանության Սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով

Սիրելի՛ ժողովուրդ հայոց ի հայրենիս եւ ի սփյուռս,

Վերստին աղոթքով եւ խոնարհումով հիշատակում ենք Հայոց Ցեղասպանության մեր սուրբ նահատակներին, ովքեր ամուր պահելով իրենց հավատքը, սերն ու նվիրումը առ ազգն ու հայրենին՝ մարտիրոսության պսակն ընդունեցին:

Հայոց Ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը նշում ենք մի շրջանում, երբ մեր ժողովուրդը գտնվում է գոյաբանական նոր սպառնալիքների եւ անվտանգային լրջագույն հիմնախնդիրների հանդիման: Հայրենի Արցախում իրականացված ցեղասպանական գործողություններից եւ Արցախի հայաթափումից հետո ներկայիս մտահոգիչ ծանր իրավիճակ է Հայաստանի սահմանային տարածքներում:

Սուրբ Նահատակների լույս հիշատակի առջեւ մեր նվիրական պարտքն է՝ պաշտպանել ամբողջականությունը մեր հայրենի երկրի, նախանձախնդիր լինել հայոց անկախ պետականության զորացմանը եւ որպես սրբազան մասունք պահպանել մեր նախնյաց ավանդներն ու ժառանգությունը:

Մեր ժողովուրդը հզոր է իր հերոսական անցյալով, չարի ու չարիքի դեմ պայքարի վճռականությամբ եւ նույն ոգով պիտի հեռացնի իր կյանքից ազգային շահերին հակառակ կործանարար դրսեւորումները, առկա բարդ իրադրությունից ջանքերի մեկտեղումով ելքի ուղիներ գտնի եւ կերտի իր հաղթական ապագան:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, այս նվիրական օրը միասիրտ աղոթքով հայցենք մեր սուրբ նահատակների բարեխոսությունը, որ հարուցյալ



Քրիստոսի շնորհների եւ օրհնության ներքո խաղաղ, անվտանգ ու բարօր լինեն մեր հայրենիքն ու ազգը, եւ մենք հավատով ու հույսով հաստատենք մեր ընթացքը ապահովության ու առաջընթացի շավիղներում:

Թող Տիրոջ սերն ու խնամքը հովանի լինեն մեր հայրենիքին ու համայն մեր ժողովրդին այսօր եւ միշտ. ամեն:

Հետահայաց

# Կգա օրը, եւ մենք կվերադառնանք Հայրենիք

Ուզենք, թե չուզենք, համարենք պարտություն, թե պատմական անարդարություն, Հայոց ցեղասպանությունը **իրողություն է**: Ոչ թե սոսկ պատմական մի փաստ, որ եղել է անցյալում, այլ՝ իրողություն, որի ոչ թե հետեւանքները, այլ ինքն իր ողջ **բովանդակությամբ շարունակվում է** ահա արդեն **92** տարի, իսկ սկսվել է դրանից էլ շատ առաջ:

Ճանաչեն, թե չճանաչեն, անվանեն *ողբերգություն*, թե *գենոցիդ*, միեւնույնն է, այդ իրողությունն ունի մի պարզ ձեւակերպում. **մեզանից գողացել են մեր Հայրենիքը**:

Այսօր մենք ստիպված ենք պայքարել **1915-23** թվականներին տեղի ունեցած Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար... Միջազգայնորեն **ցեղասպանություն** է դիտվում անգամ մեկ մարդու սպանությունը՝ իր ազգային պատկանելության պատճառով... Մեզ հետ տեղի ունեցածը լոկ ցեղասպանություն չէր: **Էթնոցի՞դ** էր... Մի ողջ ժողովրդի՝ էթնոսի ոչնչացմանը նպատակաուղղված կազմակերպված ծրագրի իրագործո՞ւմ... Եւ ոչ միայն: Մեզ հետ տեղի ունեցածը **հայրենա՛սպանություն** էր... Եվ ուզենք, թե չուզենք (հպարտանալու բան չէ), անօրինակ մի բան, որի հետ չեն կարող համեմատվել ոչ հրեաների Հոլոքոստը, ոչ էլ մի այլ ժողովրդի դեմ գործված որեւէ ոճիր: Հրեաներին ոչնչացնում էին **ո՛չ իրենց հայրենիքում**: Եվ այսօր, երբ նույն հրեաները հաճախ դժկամությամբ են համեմատում կամ անհամեմատելի են համարում իրենց հետ տեղի ունեցածը մեզ հետ տեղի ունեցածի հետ, իրավացի են: Մեզ հետ տեղի ունեցածը, այո՛, **ցեղասպանություն** էր, բայց՝ ոչ միայն: Մեզ հետ տեղի ունեցածը **էթնոցիդ** էր՝ ժողովրդասպանություն, եւ ոչ միայն: Մեզ հետ տեղի ունեցածը **հայրենասպանություն** էր... եւ դարձյալ՝ ոչ միայն: Որովհետեւ մեր **Հայրենիքը** միայն հայրենիք չէ, լոկ մեզ համար մի անգին պարգեւ, որի կորուստը չի կարող ենթադրել որեւէ այլ փոխհատուցում, բացի միա՛յն նրա **վերադարձից** կամ մեր վերադարձից դեպի մեր Հայրենիքը: Մեր Հայրենիքը **Ավետյաց** երկիրն է, Մարդկության **բնօրրանը**, Երկրագնդի Երկիր **դրախտավայրը**, որ **Աստծո** կամքով տեղադրված է **Հայկական լեռնաշխարհում**, **որտեղ կիզակետվում են տիեզերական բանականության բոլոր շնորհները** եւ ապա նոր տարածվում ամբողջ աշխարհի վրա: Ուրեմն՝ մեզ հետ տեղի ունեցածը, միջազգային սահմանումով, թե առանց դրա, աննախադեպ, անօրինակ, որեւէ բնութագրականի մեջ չտեղավորվող ոճիր էր **Մարդկության** դեմ, **Տիեզերքի** դեմ, **Աստծո** դեմ... Ու **նախաստեղծ**, **Աստվածարյալ** մեր տեսակին էր վիճակված անցնել այդ **Գողգոթան**, ինչպես **Աստվածորդին** խաչի վրա, ու մեր տեսակին էլ վերապահված է նաեւ **Հարության Արշալույսը**:

Եւ դարձյալ՝ ուզենք, թե չուզենք, աշխա՛րհը չէ, **մե՛նք**, միա՛յն մենք պիտի նախ ճանաչենք, հասկանանք, թե ինչ է տեղի ունեցել մեզ հետ, ապա ըմբռնենք, գիտակցենք, հավատանք ու ավելի կազմակերպված, քան մեզ հետ տեղի ունեցածը կազմակերպողները (ոչ միայն իրագործողները), վերցնենք այն, ինչ մե՛րն է **Աստծո կամքով**, վերադառնա՛նք դեպի **Արարատ**, դեպի մեր **Պատմական Հայրենիքը**, որպեսզի շարունակվի՛ մեր բնականոն **Առաքելությունը** Երկրի վրա, որ մեկնարկել է **Աստված՝ Արարչագործությամբ**... էլ ումի՞ց ենք վախենում...

**Աստծունը՝ Աստծուն, հայերինը՝ հայերին**:

Եղիցի՛:

***Գ.Մ.***

***«Կրթություն», թիվ 18-20, 25.04.2007 թ.***



Հետահայաց

# Համընդհանուր խռովքի թելադրանքով Կամ՝ մի քիչ թվաբանություն

Այդ ե՞րբ եղավ... Ինչպե՞ս եղավ... Ինչո՞ւ եղավ... Ո՞րն էր այն առաջին ճակատագրական զիջումը, նահանջը, որ շարունակվեց 10 տարի, 100 տարի, 5 դար, հազարամյա՜կ... Դարձավ 1045-ի՝ Անիի կործանումից, **Գագիկ Երկրորդ** վերջին **Բագրատունի** արքայի եղերական վախճանից մինչեւ **1915**-ի ցեղասպանությունը ձգվող մի չարչարանաց հավերժություն... Այդքա՜ն երկա՜ր մի հոգեվա՞րք... Այդքա՜ն հզոր, ամե՜ն բանով հզոր, մարդկային պատմության ամե՜ն նոր հանգրվանի առաջամարտիկ, **Քրիստոնեությունն** առաջինը պետականորեն ընդունած, աշխարհին ամենից ինքնատիպ ու փառահեղ քաղաքակրթություններից մեկը պարգեւած, այդքա՜ն կարող ու այդքա՜ն անքեն ու ամենասե՜ր, այդքա՜ն ամենքին նման ու ամենքին հարմարվող, ամենքին տե՛ր ու ամենքին ծառա՜, բայց այդքան ինքնասպա՞ն...

Ո՞վ էր, ի՞նչն էր ստիպում **Պատմահորը** գրել *«Թեպետ եւ եմք ածու փոքր...»*... Ախր, այդ ումի՞ց էիր փոքր, Քերթողահա՛յր, այդ քանի՞ ազգ ու ազգություն կար աշխարհում, եւ դրանց ո՞ր մասն էր քեզանից մեծաքանակ կամ քեզանից առաջավոր ու հզոր... Այդ *«փոքր»* բառը մնաց ոչ միայն քո *«Հայոց պատմության»* կամ մեր պատմագիտության մեջ իբրեւ դառնացած մի պահի ասված խոսք, այլեւ դարձավ հոգեբանությո՜ւն, անհաղթահարելի՛ մի հիվանդությո՜ւն, որ ժամանակների մեջ ո՛չ միայն չբուժվեց, այլեւ վերածվեց *«ստրկախտի»*՝ ընդհուպ մինչեւ 20-րդ դարավերջ...

Ո՞վ, ի՞նչը ստիպեց քեզ, **Փո՛քր Մեր**, որ անհա՜ղթ էիր, անպարտելի՛ ու անմա՛հ, հեռանա՜լ աշխարհից, ինքնակա՛մ գնալ ու փակվե՜լ *Ագռավաքարում...*

**Սասունցի՛ Դավիթ**, որքան ուժեղ, այնքան միամի՜տ Դավիթ, մինչեւ **Չենով Օհանը** չկանչեց, չելար հորից... Ի՞նչ է, չէի՞ր հավատում, որ հենց քեզ թափ տաս, ելնելու ես հորից, ինքնուրո՛ւյն, եւ քո՛ ուժով, որքա՜ն էլ որ հորը խորը լինի կամ հսկա քարերով փակված...

Անպարտելի՛, անասելի՛ հզոր ու այդքան անվստա՞հ... Եղե՞լ է գեթ մի դեպք, որ օտարից հոգնած՝ ապավինես միայն **Քո՛** ուժին, ու սխալված ու պարտված լինես: Երբե՛ք: Միշտ սխալվել ու պարտվել ես, երբ հույսդ դրել ես ուրիշի օգնության վրա:

Քո աստեղային ժամերին, երբ սթափվել ես մի պահ ու թափ ես տվել Քեզ Քո էպոսի հերոսի նման, մի՛շտ հաղթել ես, ու չկա՛ մի ուժ այս արեւի ներքո, որ կասեցնի Քո հաղթական ելքը ամենաանելանելի վիճակից անգամ... Եթե միայն Ի՜նքդ, Ի՜նքդ կամենաս ու քայլդ անես միայնա՛կ, մեն-մենա՛կ, ինքնուրո՛ւյն, Քո՛ սեփական բազկի ու մտքի ուժին ապավինած... Ինչպես **Սարդարապատում,** ինչպես **Արցախում**...

Այդ ումի՞ց ես փոքր կամ փոքրաթիվ... Աշխարհում շուրջ **5000** ազգ ու ազգություն կա: Դրանցից միայն մոտ **200**-ը ունեն պետություն, որոնց աշխարհը ճանաչել ու հաշվի է առնում որպես այդպիսին: Դրանց շարքում Դու Քո բնակչության թվով **առաջին** հարյուրյակի մեջ ես, տվյալ լեզվով խոսողների թվով **75**-րդն ես, իսկ աշխարհում տարածվածության հաշվարկով **հայերենը** գտնվում է աշխարհի ամենատարածված լեզուների **առաջին տասնյակում**... Դե, ասա՛, այդ ի՞նչ հաշվարկով ես Դու փոքր... Ու ասա՛ նաեւ՝ ումի՞ց ես պակաս եւ ինչո՞վ... Խելքո՞վ: Քաջությա՞մբ: Ծագումո՞վ: Լեզվո՞վ: Մշակույթո՞վ... Գուցե ռազմական տաղանդո՞վ... Վիրավորվեցի՞ր... **Անդրանիկն** աշխարհի միա՛կ զորավարն է, որ որեւէ ճակատամարտ երբեւէ տանուլ չի տվել... Հապա այդ ինչպե՞ս եղավ, ինչո՞ւ եղավ...

***շարունակությունը՝ էջ 11***

Գիտությունների ազգային ակադեմիա

# Ամփոփվել են 2023 թ. գործունեության հիմնական արդյունքները

Տեղի է ունեցել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցել են ՀՀ նախագահ **Վահագն Խաչատուրյանը,** ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը,** ՀՀ Աժ նախագահի տեղակալ **Հակոբ Արշակյանը,** ԳԱԱ նախագահ **Աշոտ Սաղյանը,** ակադեմիայի նախագահության անդամներ, ՀՀ-ում հավատարմագրված դեսպաններ, գիտական հանրույթի ներկայացուցիչներ:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը ներկայացրել է ակադեմիայի եւ համակարգի կազմակերպությունների 2023թ. գործունեության հիմնական ուղղությունները ու արձանագրված արդյունքները:

Աշոտ Սաղյանը տեղեկացրել է՝ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ԳԱԱ համակարգում աշխատում է 3522 մարդ, որոնցից 2239-ը կամ ընդհանուրի 63.6%-ը գիտական աշխատողներ են: Գիտական աշխատողներից 1305-ը (58.3%) ունեն գիտական աստիճան, որից 277-ը՝ գիտությունների դոկտորի, իսկ 1028-ը՝ թեկնածուի: Ընդ որում՝ ակադեմիայի աշխատողների 53.7%-ը եւ գիտաշխատողների 54.3%-ը կանայք են:

Նրա խոսքով՝ Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում ներկայում ուսուցանում են 68 ասպիրանտներ, որոնցից 21-ն ընդունվել է 2023թ.-ին: 2023թ.ին տպագրվել է 1528 հոդված գրախոսվող գիտական ամսագրերում, որից 670-ը՝ արտասահմանում, հրապարակվել են 171 մենագրություն եւ ժողվածու, որից 19-ը՝ արտասահմանում:

*«Ընդհանուր առմամբ՝ 2022թ.-ի համեմատ՝ 2023թ.-ին նկատվում է հրապարակումների 3-5% աճ: Արտասահմանյան ամսագրերի հրապարակումների թվով ֆիզիկայի եւ աստղաֆիզիկայի, մաթեմատիկայի եւ տեխնիկական գիտությունների, բնական գիտությունների, քիմիայի եւ Երկրի մասին գիտությունների բաժանմունքների շրջանում հրապարակումներն ավելացել են, իսկ հայագիտության եւ սոցիալական գիտությունների բնագավառների համար հրապարակումների թիվը նախորդ երկու տարիների համեմատ մնացել է նույնը»,-* ասել է Աշոտ Սաղյանը:

ԳԱԱ նախագահը նշել է՝ 2023թ. շարունակվել է Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի կողմից իրականացվող գիտության ոլորտի ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման ծրագիրը: Մասնավորապես՝ ԳԱԱ կազմակերպությունների կողմից 2023թ. ձեռք են բերվել շուրջ 4 մլրդ դրամ արժողությամբ սարքեր/սարքավորումներ, իսկ 2019-23թթ. ընթացքում կազմակերպված մրցույթների արդյունքում ԳԱԱ համակարգի կազմակերպություններին տրամադրված ֆինանսական միջոցների հաշվին՝ 147 սարքավորումներ:

2023 թվականին ԳԱԱ-ն շարունակել է միջազգային համագործակցությունն արտասահմանյան գիտական կառույցների եւ գիտությունների ակադեմիաների հետ: Մասնավորապես՝ ստորագրվել են գիտական համագործակցության պայմանագրեր Չեռնոգորիայի, Մոլդովայի, Իրանի, Չինաստանի գիտությունների ակադեմիաների հետ:

Անդրադառնալով ոլորտի ֆինանսավորմանը՝ Աշոտ Սաղյանը տեղեկացրել է, որ ակադեմիայի ֆինանսավորման ընդհանուր ծավալներն աճել են 54%-ով: Նրա խոսքով՝ եթե համեմատենք 2019 եւ 2023թ. տվյալները, ապա բազային ֆինանսավորումն ավելացել է 35%-ով, թեմատիկ ֆինանսավորումը՝ 460%-ով, բյուջետային այլ մուտքերը՝ 41%-ով, իսկ նպատակային ծրագրայինը նվազել է 37%-ով:

Տարեկան ժողովի ընթացքում զեկույցով հանդես է եկել նաեւ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը՝ շեշտելով, որ գիտության ոլորտի պետական ֆինանսավորումը շեշտակի աճել է:

*«ՀՀ կառավարությունը, իշխանության ներկայացուցիչներն իրենց հիմնական նպատակը եւ գերխնդիրը համարում են գիտության եւ կրթության զարգացմանն առավելագույն կերպով նպաստելը: ԳԱԱ-ում մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքները հուշում են, որ հաստատության հիմնական նպատակն ավելի կիրառական մասնակցություն ունենալն է այսօրվա տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխություններում»,-* ասել է ՀՀ նախագահը:

ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի ընթացքում անդրադարձ է կատարվել ակադեմիական քաղաքի կառուցման նախագծին:

* * *

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն այսօր մասնակցել է Գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովին եւ դրա շրջանակում կազմակերպված *«Գիտություն»* բացօթյա ցուցահանդեսի բացմանը:

Ցուցահանդեսին ներկայացված էին ԳԱԱ գիտական կազմակերպությունները, ՀՀ պետական խոշոր բուհերը եւ գործընկեր կազմակերպությունները: Ցուցահանդեսի տաղավարներում ցուցադրվել են գիտական փորձեր, անցկացվել վիկտորինաներ:

Միջոցառմանը մասնակցել են ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանը, ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը, ուսանողներ, գիտական հանրույթի ներկայացուցիչներ: ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը շրջել է ցուցահանդեսի տաղավարներով, ծանոթացել ներկայացված աշխատանքներին ու գիտական փորձերին:

Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել Գիտությունների ազգային ակադեմիային նմանօրինակ նախաձեռնության համար՝ առանձնակի ընդգծելով դպրոց-բուհ-գիտություն կապի ամրապնդմանն ուղղված ջանքերը: ԿԳՄՍ նախարարն այս համատեքստում կարեւորել է նաեւ գիտության հանրամատչելիության ու հանրայնացման կարեւորությունը՝ դեռահասների եւ երիտասարդների համար դեպի գիտություն տանող ճանապարհը գրավիչ եւ տեսանելի դարձնելու տեսանկյունից:

*«Կարեւոր է, որ այդ առումով՝ մենք ակադեմիայի հետ գործում ենք մեկ միասնական դաշտում ու հարթակում, քանի որ այդ կապի ամրապնդմանն է ուղղված նաեւ ՀՀ կառավարության քաղաքականությունը: Մեր դպրոցականները, իսկապես, ունեն հրաշալի գաղափարներ, որոնց իրագործման համար պետք է ստեղծենք անհրաժեշտ պայմաններն ու հնարավորությունները՝ վստահ լինելով, որ ապագա գիտնականների հրաշալի խումբ ունենք: Առանձնահատուկ պատասխանատվություն է, որ այսօր մեր գործող գիտնականները ճանապարհ հարթեն այն երիտասարդների համար, որոնք հետաքրքրված են գիտությամբ եւ արդեն իսկ իրենց առաջին քայլերն են կատարում երեւույթները հետազոտելու, կապերը բացահայտելու եւ հանրության համար օգտակար աշխատանք անելու ուղղությամբ»,-* ասել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարի խոսքով՝ վերջին տարիներին ՀՀ կառավարության պետական քաղաքականությունը միտված է գիտության ոլորտի պետական ֆինանսավորման շարունակական աճին. իրականացվում են տարաբնույթ ծրագրեր, որոնց շնորհիվ արձանագրվում է գիտնականների եւ հետազոտողների աճ, որտեղ մեծ է երիտասարդների թիվը:

***շարունակությունը՝ էջ 6***

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողով

# «Հայաստանը, որպես պետություն, չի կարող զարգացում ունենալ՝ առանց գիտության եւ կրթության»

Հանրապետության նախագահ **Վահագն Խաչատուրյանը** մասնակցել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովին:

Ողջունելով ներկաներին՝ նախագահը մասնավորապես ասել է. *«Հայաստանը՝ որպես պետություն չի կարող զարգացում ունենալ առանց գիտության եւ կրթության: Սա աքսիոմա է, որի իրականացումն այժմ կատարում է մեր երկրի գործող կառավարությունն ու իշխանությունը: Մենք ունենք մարդուն, Հայաստանի Հանրապետության քաղաքացուն որպես գլխավոր ուժ: Չունենք նյութական ռեսուրսներ, հետեւաբար մարդը պետք է լինի զարգացած, կրթված եւ միտված իր երկրին ծառայելուն եւ նրա համար նոր արժեք ստեղծելուն»:*

Հայաստանի նախագահը մեջբերել է մի քանի վիճակագրական տվյալներ՝ ներկայացնելով 2020-2024 թթ պետական բյուջեի ծախսերի համեմատականը: Ըստ այդմ՝ 2020 թվականին ծախը կազմել է 1,9 տրիլիոն դրամ, 2024 թվականի համար նախատեսվում է ծախսել 3,2 տրիլիոն, տոկոսային արտահայտությամբ 24 տոկոս ավելին է նախատեսված: Սրա մեջ՝ 2020 թվականին պետության կողմից գիտության ոլորտի ծախսերի ծավալը կազմել է 13 միլիարդ դրամ, 2024 թվականին՝ նախատեսվում է ծավալը հասցնել 36 միլիարդի: Եթե գիտության ոլորտի ծախսերը 2020 թվականին կազմել են բյուջեի ընդհանուր ծախսերի 0,7 տոկոսը, ապա 2024 թվականի ցուցանիշը 1,12 տոկոս է: 2023 թվականի համեմատ՝ ծախսերն ավելացել են 43 տոկոսով, իսկ 2020 թվականի համեմատ՝ 2,7 անգամ: Կրթության ոլորտի ծախսերի ընդհանուր ծավալը 2020 թվականին կազմել է 144 միլիարդ դրամ, 2024 թվականին կկազմի 288 միլիարդ դրամ: Բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ կրթության ոլորտի ծախսերը 2020 թվականին կազմել են 7,6 տոկոս, ընթացիկ տարվա համար ցուցանիշը 9 տոկոս է: Պաշտպանության ծախսեր՝ 2020 թվականին եղել է 308 միլիարդ, 2024 թվականին՝ 557 միլիարդ դրամ:

*«Հայաստանի կառավարությունը, իշխանության ներկայացուցիչներն իրենց հիմնական նպատակը, գերխնդիրը համարում են գիտության եւ կրթության զարգացմանն առավելագույն կերպով նպաստելը: Այն, ինչ տեղի է ունենում զուտ ակադեմիայի կարգավիճակի հետ կապված քննարկումներում, ապա դրանք պետք է շատ արագ ավարտվեն, քանի որ անորոշությունն իր հերթին բերում է լրացուցիչ խնդիրներ ու լրացուցիչ խոսակցություններ, այլ կարծիքներ, որոնք նպաստավոր չեն թե՛ պետության, թե՛ Ազգային ակադեմիայի համար: ԳԱԱ-ում մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքները հուշում են, որ իսկապես տվյալ հաստատությունը փոխվելու մեծ ձգտում ունի, որի հիմնական նպատակը ավելի կիրառական մասնակցություն ունենալն է այսօրվա տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխություններում»,-* ասել է նախագահ Խաչատուրյանը:



Նախագահի դիտարկմամբ՝ պետության կողմից ֆինանսավորումը մեծանում է հատկապես գիտահետազոտական աշխատանքներին օժանդակելու առումով:

*«Ռազմարդյունաբերական համալիրի համար գիտահետազոտական, փորձարարական, կոնստրուկտորական աշխատանքներին հատկացված գումարը կազմում է շուրջ 6 միլիարդ դրամ: Վերջին 3-4 տարվա ընթացքում նման բան չի եղել, ինչը լրացուցիչ հնարավորություն է, որպեսզի մեծ դաշտ բացվի գիտելիքի համար: Բայց, ցավոք սրտի, մեր բիզնեսի մասնակցությունն այդ աշխատանքներում շատ ցածր է: Երբ ուսումնասիրում ենք արտասահմանյան փորձը, տեսնում ենք, որ զարգացած երկրներում գիտահետազոտական աշխատանքների մեջ հիմնական ներդրում անողը հենց բիզնեսն է: Պետության մասնակցությունը շատ ավելի քիչ է: Բիզնեսի ակտիվ մասնակցությունը պայմանավորված է խրախուսական տարբեր, հիմնականում տնտեսական մեխանիզմներով: Ժամանակն է, որպեսզի անդրադառնանք հենց այս հարցին: Մենք վստահաբար կարող ենք նույնն անել, պարզապես պետք է բիզնեսին ներգրավելու համարձակություն ունենանք: Ընդ որում, նրան պետք է շահագրգռել, որովհետեւ բիզնեսը, եթե շահ չունենա, ոչինչ չի անելու, ինչն, ըստ էության, տրամաբանական է եւ ընդունելի»,-* ասել է նախագահ Խաչատուրյանը:

Հանրապետության նախագահի խոսքով՝ եթե բիզնեսի ներկայությունը չլինի կրթության ոլորտում, ապա այդ բնագավառը չի ունենա զարգացման այն տեմպերը եւ չի արձանագրի այն արդյունքները, ինչ ցանկանում է պետությունը: *«Այն, ինչ կատարվում է գիտական հայտնագործությունների առումով, գոհացուցիչ չի կարող է լինել: Մենք պետք է կարողանանք դուրս գալ միջազգային շուկաներ, կարողանանք իսկապես մեր գիտելիքն ու գիտական արտադրանքը ներկայանալի դարձնել միջազգային շուկայում: Անհրաժեշտ է հասկանալ, թե որտեղից պետք է սկսել այդ գործընթացը: Կարծում եմ՝ կրթական համակարգից, հետեւաբար, ավագ դպրոցների ու ինստիտուտների ամբողջ շղթան պետք է վերանայել ու գտնել շահագրգռող նոր մեխանիզմներ, որպեսզի ավելի մեծ թվով մարդիկ ձգտեն զբաղվել գիտությամբ: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջավայր, որի պայմաններում ամբողջ համակարգը միտված կլինի նախեւառաջ բնական գիտելիքներ տալուն եւ այդ ուղղությամբ բարձրորակ մասնագետներ պատրաստելուն: Համոզված եմ, որ մեզ կհաջողվի լուծել այդ խնդիրները, պարզապես հիմա տուժում ենք ժամանակի մեջ եւ, ցավոք, հետ ենք մնում համաշխարհային գիտական փոփոխություններից»,-* նշել է ՀՀ նախագահը:

Անդրադառնալով ակադեմիական քաղաք կառուցելու նախաձեռնությանը՝ նախագահն ընդգծել է, որ այդ ուղղությամբ ճիշտ քայլերի ընտրությունը հնարավոր է հենց նման քննարկումների շնորհիվ: *«Ոչ ոք չի ուզում որեւէ բան քանդել, առավել եւս իշխանությունը: Մենք ավելի շատ ունենք ինչոր բան ստեղծելու ցանկություն, ինչն անելու ենք համատեղ ջանքերով: Եթե իսկապես կան կառուցողական առաջարկներ՝ ակադեմիական քաղաք հիմնելու համար, ապա պետք է միասին անցնենք այդ ճանապարհը: Ավելորդ աղմուկն ու չհիմնավորված կարծիքների հնչեցումն օգուտ չի տա այս գործընթացին: Եթե յուրաքանչյուր բուհ կարծում է, որ կարող է գոյատեւել ինքնուրույն, ապա պետք է դա ապացուցի իր արդյունավետ գործունեությամբ: Այդ դեպքում միավորվել-չմիավորվելու հարցը կունենա այլ բնույթի քննարկում: Բոլոր դեպքերում մենք պետք է կարողանանք դուրս գալ կոմֆորտային վիճակից՝ ավելի առաջ գնալու համար, հետեւաբար չարժե ստեղծել ապոկալիպտիկ տրամադրություններ»,-* իր խոսքում, մասնավորապես, ասել է Նախագահը:

Ավարտելով խոսքը՝ Նախագահն ասել է. *«Մաղթում եմ ձեզ ստեղծագործական հաջողություններ, նոր ձեռքբերումներ, որովհետեւ ձեր նոր ձեռքբերումները մեր պետության հաջողություններ են, զարգացման գրավականը»:*

Հետահայաց

# Ներգաղթ

2015 թվականին Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված աննախադեպ ընդգրկումով միջոցառումներն ամբողջ աշխարհում մեր հարության, մեր Մեծ Վերածննդի գործընթացի մեկնարկը վկայեցին...

100 եւ ահա եւս մեկ երկար եւ ծիգ տարիներ համբերել ենք՝ սպասել ճանաչման, դատապարտման, հատուցման... Բայց արդեն, կարծես թե, դասեր ենք քաղել պատմությունից, վերջապես համոզվել, որ մե՛ր խնդիրը մե՛նք պիտի լուծենք՝ մեր մտքի ու բազկի ուժով... Ամենից երկար ու դժվար ճանապարհն անգամ սկսվում է առաջին քայլից: Բայց ճի՛շտ քայլից: Ուղի՛ նշող քայլից: Վաղ թե ուշ, մեր Հարցը լուծվելու է: Լուծելու ենք: Բայց երբ էլ եւ ինչպես էլ լուծենք, դրանից առաջ ու դրանից հետո մենք մե՛ր կարիքն ենք զգալու, մեր որակի հետ մեր քանակի՛ կարիքը, մեր հայրենիքում մեր գոյությունը հավաստող, մեր գոյությունը ապահովող մեր ներկայությա՛ն կարիքը...

Աստված մեզ հրաշալի երկիր է պարգեւել՝ մարդու կենսագործունեության համար լավագույն վայրը երկիր մոլորակի վրա: Արեւային օրերի ամենից մեծ քանակ, լեռնային մաքուր օդ, խմելու ջրի գրեթե անհատնում պաշար, հարուստ ընդերք, բարեխառն կլիմա, բուսական եւ կենդանական օգտակար բազմազանություն... Իր ներկայիս տարածքների մեջ Հայաստանի Հանրապետությունը, համապատասխան կացութաձեւի կազմակերպման դեպքում, կարող է լավագույն կենսամակարդակ ապահովել շուրջ 5 միլիոն բնակչության համար: Արցախի Հանրապետությունը դա կարող է անել 1 միլիոն մարդու համար... Ու եթե մենք պահպանել ենք մեր տեսակին բնորոշ հոգեկերտվածքն ու նկարագիրը, մեր բնատուր ընդունակությունների՝ աստվածաշնորհ տաղանդի ու աշխատասիրության առկայության պայմաններում ինչո՞ւ պիտի չմտածենք ներգաղթի՛ մասին... Հզոր, որակապես՝ պատմական նոր շրջափուլ ապահովող, Հայոց Մեծ Եղեռնին հակակշիռ՝ 1.5 միլիոն հայերի հայրենադարձության մասին... Որքան էլ առաջին հայացքից խենթ, բայց իրատեսական մի երազանք-առաջարկ-ծրագիր է սա, որ հաստատ կարող ենք գլուխ բերել, եթե իրագործմանը հավատա՛նք ազգովի ու ազգովի՛ ձեռնամուխ լինենք կատարմանը:

Մի պահ պատկերացրեք, որ պետությամբ ու ժողովրդով, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցով, հայրենի եւ ավանդական բոլոր կուսակցություններով, Հայաստանի Հանրապետության եւ Սփյուռքի բոլոր հասարակական կազմակերպություններով, քիչ թե շատ ֆինանսական հնարավորություններ ունեցող հայաստանցի եւ սփյուռքահայ բոլոր գործարարներով՝ կազմակերպված եւ համակարգված աշխատանքով սկսում ենք ներգաղթի նախապատրաստումը եւ իրագործումը: Նման խանդավառությունը եւ միասնականությունը ընդամենը 3-4 տարում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում՝ 1 միլիոն, եւ կես միլիոն հայրենադարձ կարող է բնակեցնել Արցախում: Հավատացե՛ք, վերադարձող հայն իր հետ կբերի ե՛ւ կապիտալ, ե՛ւ գաղափար, ե՛ւ միտք, ե՛ւ բազուկ... Եվ չենք էլ հասցնի զարմանալ, թե ինչպես ինքնաբերաբար կստեղծվի ե՛ւ բնակարանը, ե՛ւ աշխատատեղը, ե՛ւ վաստակը: Եվ որքա՜ն սքանչելի կարող է լինել գործի ավարտը՝ երբեւէ տոնած մեր ամենամեծ հաղթանակը, որ համազգային բերկրանքի հետ նաեւ Պատմական Հայրենիքի ազատագրումը կդարձնի ավելի քան իրական: Ընդամենը եւս մեկ - երկու տարվա խնդիր:

*«Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, այս լեռանը կասեք՝ տեսափոխվի՛ր այստեղից այնտեղ, եւ կտեղափոխվի, եւ որեւէ բան ձեզ համար անհնարին չի լինի»,-* ասում է Աստված (Մատթ. 17.19)... Միայն թե հավատա՛նք: Միայն թե հավատա՛նք:

***Գ.Մ.***

***«Կրթություն», թիվ 18-19, 27.04.2016 թ.***



Հիշում եմ եւ վերածնվում

Գարեգին ՆԺԴԵՀ

## Ասույթներ

❖ Ես տեսայ մեր վարած ճակատամարտերում, տեսայ ամենաընտիրը հայու – մեռնելու մտքի հետ հաշտուած, ամէն գնով յաղթելու անտեղիտալի վճռականութեամբ դէպ թշնամին խոյացող հայ զինուորը:

Ճանաչեցի եւ ամենավատը հայու – վախկոտութեան յանցանքի մէջ բռնուած անարին:

Առաջինը կը մեռնէր ապրեցնելու համար իր ազգն ու նրա զէնքի հմայքը, երկրորդը կ'ապրէր ամեն գնով՝ ապրեցնելու համար թշնամու փառքը:

❖ Արի է նա, ով իր մէջ սպանել է իր կաշւի համար դողացող անասունը:

❖ Երբէք եւ ո՛չ մի տեղ՝ առանց հոգեւոր հայրենիքի:

❖ Հայրենի՛ք: Երկիւղած սէր եւ յարգանք դէպ մեր նախահայրերի յիշատակը, դէպ մեր կրօնը, որ ցեղի սիրտն է, դէպ մայրենի լեզուն, որ հայրենասիրութեան թթխմորն է, դէպ տոհմիկ գրականութիւնը եւ արուեստները, որ ցեղի մտքի եւ հոգու կեանքն են, ազգային պատմութիւնը, որ «ցեղի հոգին ամրացնելու ճիգերի պատմութիւնն է», իրար յաջորդող սերունդների՝ հայրենի հողի վրայ թափած քրտինքն ու արիւնը, գեղջուկի հորովելն ու Տիգրան Աշխարհակալի սուրը, դէպ Անիի աւերակներն ու Հայկայ եռաթեւ աղեղը, դէպ մեր հեթանոս աստուածներն ու փառատաճարները, անսասան հաւատը դէպ մեր մեծ Յոյսը. Գումարի՛ր, ընթերցո՛ղ, գումարի՛ր այդ բոլորը, եւ կը ստացւի հոգեւոր հայրենիքը:

❖ Մարդկային ուժերից վեր է մի ժողովրդի պատմութիւնը սպանել, մի ժողովրդի հոգեւոր հայրենիքը նուաճել:

❖ Չկան մեծ եւ փոքր ազգեր: Կան հաւասար իրաւունքով անդամները մարդկութեան ընտանիքի: Եւրոպական դիւանագիտութեան կեղծ լեզուն է ստեղծել «մեծ» եւ «փոքր» անունները: Ճշմարիտ մեծութիւն չէ թուական գերազանցութիւնը:

❖ Տգիտութիւն, եսականութիւն եւ աշխարհաքաղաքացիութիւն - ահա երեքը հայրենասիրութեան անհաշտ թշնամիներից:

❖ Հայրենիքը պիտի սիրել անկախ քաղաքական ռեժիմից, ինչպէս եւ անկախ մեր քաղաքական համոզմունքներից:

❖ Կոյր եւ բարբարոս կուսակցամոլութիւնը - մի զարհուրելի ախտ, որ պիտ թուլանայ, որ ուժեղանանք ազգովին:

❖ Եղի՛ր ուժեղ, էլի՛ ուժեղ, եւ մի՛շտ ուժեղ: Ժողովուրդները վերջ ի վերջոյ տէր են մնում ոչ թե նրան՝ ինչ որ նրանց տրւում է, ինչ որ մուրում են, այլ միայն նրան՝ ինչի որ արժանի են, ինչ որ իրենց սեփական ուժերով ապահովել են կարողանում:

Այցի շրջանակում

# Վարչապետը ներկա է եղել դպրոցական ներկայացմանը

Վարչապետ **Նիկոլ Փաշինյանն** այցելել է Կոտայքի մարզի Զառ բնակավայրի միջնակարգ դպրոց եւ ներկա գտնվել *«Պապ թագավոր»* ներկայացմանը: Դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները վարչապետի էլեկտրոնային հասցեին նամակ են ուղարկել եւ հրավիրել իրենց բեմադրած ներկայացմանը, ինչը սիրով ընդունվել է:

Վարչապետին ուղեկցել են ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը** եւ Կոտայքի մարզպետ **Ահարոն Սահակյանը:**

Դպրոցի տնօրենի պաշտոնակատար **Լարիսա Վարդազարյանը,** մինչ ներկայացումը, շնորհակալություն է հայտնել վարչապետին՝ հրավերն ընդունելու եւ ներկայացմանը ներկա գտնվելու համար: Նա նշել է, որ Զառի դպրոցը կառուցվել է 1976 թվականին, դպրոցում սովորում է 260 աշակերտ, կա նախակրթարան, որտեղ այցելում է 33 սան: Դպրոց հաճախում է նաեւ Արցախից բռնի տեղահանված 8 աշակերտ, 4 մանկավարժ էլ ապահովվել է աշխատանքով:

Դպրոցն ընդգրկված է կառավարության *«300 դպրոց եւ 500 մանկապարտեզ»* ծրագրում, եւ առաջիկայում նախատեսված է կառուցել նոր ուսումնական մասնաշենք:

Ներկայացման ավարտին վարչապետը շնորհակալություն է հայտնել հրավիրելու համար: Կառավարության ղեկավարը ողջունել է աշակերտների համարձակությունն ու խիզախությունը՝ այսպիսի բարդ թեմաների անդրադառնալու համար: Վարչապետն ընդգծել է նաեւ աշակերտների ինքնուրույն մտածելու, վերլուծելու, եզրակացությունների գալու համարձակությունն ու մղումը:

Ամփոփելով խոսքը՝ Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել ներկաներին հիշարժան օր նվիրելու, դրական լիցքեր հաղորդելու համար:

# Ամփոփվել են 2023 թ. գործունեության հիմնական արդյունքները

*սկիզբը՝ էջ 4*

*«Սա նշանակում է, որ ընթանում ենք ճիշտ ճանապարհով: Այս տարի եւս մեկ կարեւոր անելիք ունենք. մշակվելու է Գիտության զարգացման ռազմավարությունը: Հույս ունեմ, որ նաեւ այս աշխատանքի հիման վրա կկարողանանք ճիշտ սահմանել թիրախներն ու անելիքները, որոնք նպաստելու են գիտության ոլորտի զարգացմանը եւ ապահովելու են ավելի բարձր արդյունքներ»,-* ասել է ԿԳՄՍ նախարարն ու պատրաստակամություն հայտնել աջակցելու նմանօրինակ նախաձեռնությունների իրականացմանը, ինչպես նաեւ առաջարկել դիտարկել ՀՀ մարզերում եւս գիտության ցուցահանդեսներ եւ այլ միջոցառումներ կազմակերպելու հնարավորությունը:

ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանը տեղեկացրել է, որ *«Գիտություն»* բացօթյա ցուցահանդեսը կրելու է շարունակական բնույթ եւ կազմակերպվելու է տարին առնվազն երկու անգամ:

*«Գիտությունների ազգային ակադեմիան կարեւորում է այս ձեւաչափով գիտության ցուցահանդեսների անցկացումը, քանի որ դրանք յուրահատուկ հարթակ են դպրոցականների, ուսանողների եւ գիտաշխատողների միջեւ շփումների համար: Սա, հատկապես, կարեւոր է այն տեսանկյունից, որ երեխաներն արդեն դպրոցից ծանոթանում են Գիտությունների ակադեմիային, պատկերացում են կազմում գիտության եւ գիտական գործունեության մասին, ինչպես նաեւ շփվում են տարբեր գիտնականների հետ, մասնակից դառնում տարբեր գիտական փորձերի: Այս ամենը, իսկապես, շատ կարեւոր է նաեւ մասնագիտական կողմնորոշման տեսանկյունից: Ցանկացած պետության եւ հասարակության համար դպրոցական-գիտություն կապի փոխկապակցված զարգացումն առանցքային նշանակություն ունի: Դպրոցականների, ուսանողների եւ գիտաշխատողների միջեւ շփումների սերտացումը եւ կապերի զարգացումը ԳԱԱ կարեւոր ռազմավարական ուղղություններից են»,-* նշել է Աշոտ Սաղյանը:

ԳԱԱ նախագահի խոսքով՝ առաջիկայում նմանօրինակ միջոցառում կազմակերպվելու է նաեւ ԼՂ-ից բռնի տեղահանված աշակերտների եւ ուսանողների համար:

Ժառանգություն

# «Հուշարձանների հանդեպ վերաբերմունքը պետք է դառնա կրթության բաղադրիչ»

Ի նշանավորումն Հուշարձանների եւ տեսարժան վայրերի միջազգային օրվա՝ Գեղարքունիքի մարզի *«Բերդկունք»* (*«Սպիտակ բերդ»*) ամրոցում Նախարար **Ժաննա Անդրեասյանը** եւ Եվրոպական միության պատվիրակության ղեկավար **Վասիլիս Մարագոսը** պատվոգրեր են հանձնել *«Եվրոպական ժառանգության օրեր»* ծրագրի *«Եվրոպական ժառանգության երիտասարդ կերտողներ»* մրցույթի մասնակիցներին: Այցին ներկա է եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ալֆրեդ Քոչարյանը:**

Նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհավորել է՝ Հուշարձանների եւ տեսարժան վայրերի միջազգային օրվա առթիվ եւ ողջունել մրցույթի մասնակից աշակերտներին՝ նշելով, որ այն եւս մեկ առիթ է՝ շեշտելու, թե որքան կարեւոր է ճանաչել եւ պահպանել պատմական ժառանգությունը, հոգածություն ցուցաբերել շրջապատում գտնվող հուշարձանների նկատմամբ:

Ըստ նախարարի՝ Եվրոպական ժառանգության օրերի շրջանակում անցկացված մրցույթը կարեւոր է հայրենաճանաչության առումով. *«Երեխաներից յուրաքանչյուրը գտել էր որեւէ արտահայտչամիջոց՝ կոմիքս, լուսանկար, բանաստեղծություն՝ ներկայացնելու իր վերաբերմունքը հուշարձանի նկատմամբ: Երեխաներն իրենց մոտեցումներով փաստում են, որ մեր հուշարձանների մասին կարող ենք պատմել եւ խոսել տարբեր ժանրերով եւ ձեւերով, ու դրանք բոլորը կարող են լինել հետաքրքիր: Երբեմն տեսնում ենք, որ հուշարձանների տարածքները հենց մեր համաքաղաքացիների ոչ պատշաճ վերաբերմունքի պատճառով աղտոտվում են: Այս առումով՝ չափազանց կարեւոր է, որ պատմական ժառանգության եւ հուշարձանների հանդեպ վերաբերմունքի ձեւավորումը դառնա կրթական գործընթացի բովանդակային բաղադրիչ, որպեսզի երեխաները ճանաչեն եւ գիտակցեն հուշարձանների նշանակությունը»,-* նշել է նախարարը:

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ *«Բերդկունք»* (*«Սպիտակ բերդ»*) ամրոցը շատ հետաքրքիր հուշարձան է նաեւ գեղագիտական պատկերի առումով՝ Սեւանա լճի հիասքանչ տեսարանով. *«Այս հուշարձանը պետք է ավելի ճանաչելի դարձնել եւ նպաստել, որ այցելություններն այստեղ ավելի շատ լինեն: Մեզանից յուրաքանչյուրը պետք է ինքն իր համար հայտնաբերի եւ վերարժեւորի մեր երկրի 25 հազար հուշարձանները, որոնք մեր պատմության եւ քաղաքակրթական ժառանգության կարեւորագույն մասն են: Մեր այցերն ու ճանաչողական էքսկուրսիաները հուշարձանների տարածքներում պետք է դառնան ավելի հաճախակի»,-* ասել է նա:

Նախարարը տեղեկացրել է, որ *«Բերդկունք»* ամրոցի տարածքում նախարարության հատկացումներով իրականացվում են պեղումներ, որոնց հիման վրա պատվիրվել է ամրոցի վերականգնման նախագիծ. այն նախատեսվում է ավարտել մինչեւ տարեվերջ: Պեղումներն իրականացնում է *«Պատմամշակութային արգել-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն»* ՊՈԱԿ-ը: Պեղումների ավարտից հետո կիրականացվի նաեւ հուշարձանի հանրահռչակում:

*«Պետության վերաբերմունքը հուշարձանների ոլորտին կոնկրետ փաստերով եւ ֆինանսական հատկացումների ծավալով է արտահայտվում. այս տարի հուշարձանների ամրակայման եւ վերականգնման ոլորտին հատկացվել է 1,3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ՝ կրկնակի ավելի է: Սակայն եթե համեմատենք, օրինակ, 5-6 տարի առաջվա տվյալների հետ, ապա հուշարձաններին հատկացվող բյուջեն ավելացել է մի քանի անգամ: Միայն այս տարի 14 հուշարձանների նորոգման եւ ամրակայման աշխատանքներ են իրականացվում, եւս 9 հուշարձանների տարածքներում պեղումներ եւ նախագծման աշխատանքներ են ընթանում, եւ այս ամենը մեր ամենօրյա աշխատանքի կարեւոր մասն է»,-* նշել է նախարարը՝ ընդգծելով, որ հատուկ ուշադրություն է դարձվում պետականության խորհրդանիշ համարվող հուշարձանների հանրահռչակմանը:

*«Եվրոպական ժառանգության երիտասարդ կերտողներ»* մրցույթն ուղղված է պատմամշակութային ժառանգության հանրահռչակմանը. այն ԿԳՄՍ նախարարության համակարգմամբ իրականացրել է Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը:

Մրցույթն իրականացվել է *«Եվրոպական ժառանգության երիտասարդ կերտողներ»* համաեվրոպական հարթակի համատեքստում՝ *«Եվրոպական ժառանգության օրեր»* ծրագրի շրջանակում, որին Հայաստանը մասնակցել է առաջին անգամ: Հայաստանը մրցույթին ներկայացել է 11-17 տարիքային խմբում, ներկայացվել է 41 աշխատանք. պատանեկան խմբերն ու անհատները մրցել են ազգային ժառանգության մասին իրենց պատկերացումներով՝ ներկայացնելով տեսասահիկներ, կոմիքսներ, անիմացիոն սյուժեներ, նկարչական աշխատանքներ, մինչեւ 5 րոպե տեւողությամբ տեսանյութեր: Ներկայացված աշխատանքներից 6-ն ընդգրկվել է եզրափակիչ փուլում: Հայաստանից եւ արտերկրից 21 հայազգի մշակույթի գործիչներից կազմված հանձնաժողովի գնահատման արդյունքում՝ հաղթող է ճանաչվել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքը ներկայացնող *«ՀԱՅելիցներ»* թիմը՝ *«Գեղարդ»* տեսանյութը:

Նախարար Ժաննա Անդրեասյանը եւ ԵՄ պատվիրակության ղեկավար Վասիլիս Մարագոսը զրուցել են մասնակից երեխաների հետ, հետաքրքրվել նրանց ներկայացրած նախագծերով: ԵՄ դեսպանը նշանավորել է երեխաների բարձր մասնակցայնությունը եւ հետաքրքրվածությունը մշակութային ժառանգության պահպանման գործում:

Նախարարն ու ԵՄ պատվիրակության ղեկավարը, ինչպես նաեւ միջոցառման մյուս մասնակիցները շրջել են ամրոցի տարածքում, ծանոթացել պատմությանը, ընթացող աշխատանքներին:

Օրվա շրջանակում պատմական հուշարձանի՝ *«Բերդկունք»* (*«Սպիտակ բերդ»*) ամրոցի տարածքում տեղադրվել է տեղեկատվական ցուցանակ:

ԿԳՄՍՆ պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պետ **Հարություն Վանյանի** խոսքով՝ Հայաստանում այսօր կան շուրջ 15 արգելոց-թանգարաններ: Յուրաքանչյուր տարի նախարարության առաջարկով եւ Կառավարության որոշմամբ այդ թիվը կարող է ավելանալ:

*«Այս տարի, օրինակ, նախատեսել ենք ներառել Նորատուսի խաչքարերը, Բերդկունք ամրոցը, որի ուսումնասիրությունն արդեն իսկ սկսված է: Դա ենթադրում է պահպանության ավելի խիստ ռեժիմ՝ որպես արգելոցի տարածք: «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայությունե ՊՈԱԿ-ն ունենալու է հաստիքային աշխատակիցներ՝ հուշարձանի պահպանումն իրականացնելու համար,-* ասել է Հարություն Վանյանը եւ հավելել,- *նպատակն ամրոցի վերականգնումն է, ինչը կախված է պեղումների արդյունքից եւ ճարտարապետների ներկայացրած նախագծից: Վերականգնումն ընդհանրապես հնարավոր է գիտական տվյալների հիման վրա. ինչքանով գիտականությունն ու աղբյուրները, բեկորները, առկա քարերը եւ չափագրությունները հնարավորություն տան այն իրականացնելու»:*

*«Բերդկունք»* (*«Սպիտակ բերդ»*) ամրոցը բազմաշերտ հուշարձան է, թվագրվում է մ.թ.ա. II–I հազարամյակով, վերակառուցվել եւ զարգացման բարձրակետին է հասել միջնադարում: Ամրոցի դիրքն այնքան գերիշխող է շրջապատի նկատմամբ, որ միջնադարում կիկլոպյան ամրոցի փլատակների վրա կառուցվել է մի նոր՝ ամրակուռ ամրոց, որի անունով էլ այն կոչվում է *«Սպիտակ բերդ»* (*«Իշխանաց բերդ»*):

Հիշում եմ եւ վերածնվում

Արշակ ՉՈՊԱՆՅԱՆ

## «Ես ազգայնական եմ»



*«Ես ազգայնական եմ - ու հպարտությամբ կը հայտարարեմ զայդ - որովհետեւ ճիվաղային պիտի նկատեի ուրիշ բան ըլլալ՝ իմ ազգիս արդի վիճակին մեջ, եւ ես գիտեմ ֆրանսացի ընկերվարականներ, անիշխանականներ, որ ըսած են ինծի. «Եթե հայ ըլլայինք, մենք անշուշտ ազգայնական պիտի ըլլայինք»: Ես ազգայնական եմ, որովհետեւ իմ պարտքս է ծառայել ամենեն առաջ իմ ազգիս, որուն կը պարտիմ կյանքս, լեզուս, հոգվույս հիմնական գծերը: Ես ազգայնական եմ, որովհետեւ իմ ազգս դժբախտ է, ավելի դժբախտ, քան ոեւէ ազգ, եւ իմ պարտականությունս անոր հանդեպ ավելի մեծ է, քան ազատ եւ ուժեղ ազգի մը զավակինը դեպի իր ազգը: Ես ազգայնական եմ վերջապես՝ որովհետեւ իմ ազգս հառաջդիմության, քաղաքակրթության տարր մըն է ի բնե, լույսի գործիք մըն է, գեղեցկության աղբյուր մըն է, ազատության կայծ մըն է: Իմ ազգայնականությանս նպատակը շրջակա ազգերուն վնասել, անոնց չքացմամբը իմ ազգս մեծցնելը չէ, այլ չեզոքացնելը հառաջդիմության խոչընդոտի դերը, զոր կը կատարեն մեզ շրջապատող հետամնաց, տգետ եւ բիրտ զանգվածները, տալ միջոցներ, որ իմ ազգս, աշխատող, արտադրող, շենցնող, ազատասեր, արվեստագետ իմ ազգս՝ իր բոլոր ձիրքերը, իր բեղուն հոգիին բոլոր ուժերը կարենա ազատորեն գործածել՝ հոգուտ ոչ միայն իրեն, այլ բոլոր արեւելքին, բոլոր մարդկության: Եվ ահա ինչու իմ ազգայնականությունս ավելի իրական ազատասիրություն է, ըլլալով ավելի գործնական, ավելի մարդկային, ավելի անմիջական...»:*

***«Անահիտ» 1906, թիվ 3-4-5, «Ռուսիա եւ հայերը»***

# Եղեռն...

**Գարուն ա, ձուն ա արել...**

1915-ի սկզբին, մի շարք գաղտնի խորհրդակցություններից հետո, թուրքական կառավարությունը (Թալեաթի, Էնվերի, Ջեմալի գլխավորությամբ) որոշեց, անկախ սկսված համաշխարհային պատերազմի ելքից, բնաջնջել արեւմտահայությանը: Մշակվեց գործողությունների հստակ ծրագիր. որ քաղաքում, որ գյուղում, երբ եւ ինչպես, ինչ միջոցներով: Նախեւառաջ 18-45 տարեկան հայ տղամարդկանց զորահավաքներ անցկացվեցին, ապա նորակոչիկներին եւ բանակում մինչ այդ ծառայող հայ զինվորականներին մաս-մաս ոչնչացրեցին: Հաջորդը մտավորականությունն էր: Ապրիլի 11-ի գիշերը (հին տոմարով) Պոլսում առանձին-առանձին դավադրաբար ձերբակալվեցին 800 հայ մտավորականներ: Նրանց բոլորին գազանաբար սպանեցին: Նրանց մեջ էին... Զարմանալի՞ զուգադիպություն. թերեւս երբեք այդքան պայծառ դեմքեր միաժամանակ չէին ապրել ու ստեղծագործել, ինչպես այդ եղերական տարիներին:

Հայ զինվորականների գնդակահարություններին, մտավորականության նահատակությանը, մի խումբ ազգային գործիչների մահապատժին (կախաղանի միջոցով) հաջորդեցին զանգվածային տեղահանությունները եւ կոտորածները... Ինչպե՞ս հաշվել՝ որքա՞ն մանուկ, որքա՞ն կին, որքա՞ն ծերեր, որքա՞ն մտքի եւ կամ որքա՞ն հողի մշակներ... Ու այդպես մինչեւ տարեվերջ՝ 1.500.000... Ու յուրաքանչյուրին՝ ամենաբիրտ տանջանքներով ու մարդկային լեզվով անպատմելի եղանակներով... Ցեղասպանությունը կատարվում էր ե՛ւ Արեւմտյան Հայաստանում, ե՛ւ Օսմանյան Թուրքիայի այլ տարածքներում: Հիրավի, ինչպես հոխորտացել էր Թալեաթը, երեք ամսում ավելին արվեց, քան արյունարբու սուլթան Համիդը արել էր 30 տարում...

Ողջ Արեւմտահայությունը կամ կոտորվեց, կամ աքսորվեց ու զոհվեց ճանապարհներին, մի մասն էլ արտաքսվեց ի սփյուռս աշխարհի, ուր կարողացավ գոյատեւել առայսօր՝ սպասելով հատուցման օրվան:

... Սրանք հանրագիտարանային տվյալներ են, որ ծանոթ են յուրաքանչյուր հայի: Ու ամեն անգամ յուրաքանչյուր հայաստանցի, բարձրանալով Ծիծեռնակաբերդ, գլուխ է խոնարհում Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին ու ամեն անգամ ցավով հայտնագործում, որ անդառնալի են մեր կորուստները... Կորցրած հողը կարելի է հետ նվաճել: Հայրենիքը երբեք չի կորչում: Վաղ թե ուշ այն կրկին իր տիրոջն է պատկանելու: Նոր մանուկներ են ծնվելու հայոց աշխարհում, բայց զոհված ու չկայացած մանուկ հանճարների կորուստը անդառնալի է: Նոր Կոմիտասներ են ստեղծագործելու հայոց աշխարհում, բայց այն, ինչ պիտի աներ միայն **Կոմիտասը**, այլեւս ոչ ոք չի անելու... Ու նաեւ **Զոհրապը**, **Վարուժանը**, **Սիամանթոն**... ու բոլոր 1,5 միլիոնը՝ հատ-հատ: Նրանք են մեր կորուստը... ու նրանց զավակները, նրանց զավակների զավակները, որ մեզ այսօր այնքա՜ն պետք են ու չկան, ու չեն լինելու երբեք...

«*Արեւելքում մեռնում է մեր քույրը... մեռնում է միայն այն բանի համար, որ մեր քույրն է: Նրա հանցանքն այն է, որ նա բաժանել է մեր զգացմունքները, սիրել է այն, ինչ սիրել ենք մենք, մտածել է այնպես, ինչպես մենք եւ մեզ նման ընկալել է իմաստություն, բանաստեղծություն ու արվեստ: Դրա մեջ է նրա հանցանքը...*», - գրել է մեր ժողովրդի բարեկամ **Անատոլ Ֆրանսը**: Բայց գուցե մեր հանցանքը դա՞ չէր միայն, այլ այն, որ մենք առաջինն էինք ստեղծել քրիստոնեական քաղաքակրթություն ու սնել նույն Եվրոպան: Եվ եթե նույնիսկ նա լիներ ոչ թե պաշտպանի, այլ անաչառ դատավորի՝ դերում... Բայց մեր հանցանքը շատ ավելին էր. մեր հանճարի, մեր կենսունակության, տնտեսական բարգավաճման առանձնահատուկ շնորհքի պատճառով մենք վտանգավոր էինք, ու մեր անկախությունը մոտակա մրցակցության ակնկալիք է ծնում պատմության ասպարեզի վրա ճեմող պետությունների դիվանագիտական ուղեղներում, եւ նրանց ձեռնտու չէ մեզ ունենալ իրենց հավասա՜ր իրավունքներով... Գոյությա՜ն կռիվ է...

Մի բանում անվերապահորեն ճիշտ է Անատոլ Ֆրանսը. «*Հայաստանը մեռնում է, բայց նա կվերածնվի... նրան մնացել է շատ քիչ բան, թանկագին արյուն, որից կծնվի մի հերոսական սերունդ*»:

# Հերոսամարտեր...

**Զա՛րկ, լաո, զարկողին՝ զա՛րկ...**

1915 թվականին Արեւմտյան Հայաստանի մի շարք գավառներում եւ քաղաքներում հերոսական ինքնապաշտպանության դիմեց ժողովուրդը եւ արարեց խիզախության զարմանահրաշ դրվագներ: Եվ եթե թուրքական կառավարությունը դիվանագիտական աջակցություն չունենար, եւ հայ զանգվածներն էլ ապավինած լինեին միայն սեփական ուժերին եւ նախօրոք լինեին պատրաստ, 1915-ը հնարավոր է երջանիկ տարեթիվ դառնար...

Վանի, Շապին-Գարահիսարի, Մուսա լեռան, Տարոնի, Ուրֆայի... հայ քաջորդիները տասնապատիկ ավելի թանկ վաճառեցին ռազմիկի իրենց կյանքը՝ դառնալով Թուրքիային հավերժական սարսափ, իրենց սերունդներին՝ անշեջ օրինակ:

## Վան

Վանի հերոսամարտի եռանդուն կազմակերպիչներից էր 1915-1919 թվականների հայ ազատագրական պայքարի եւ գաղափարական խմորումների ամենապայծառ դեմքերից մեկը՝ **Արամ Մանուկյանը**: Նրա՛ հետ էին Խրիմյան Հայրիկի՝ դեռեւս Վարագա վանքի վանահայրության ժամանակներից հայրենասիրության դասեր առած վառ ոգով եւ մարտական նկարագրով մի խումբ կորովի այրեր: Նրանց ջանքերով Վանի եւ նրա արվարձան Այգեստանի ինքնապաշտպանությունը տեւեց մեկ ամիս (1915, ապրիլ) եւ պսակվեց հաղթանակով: 1915-ի մայիսի 1-ին Արամ Մանուկյանը հռչակվեց ինքնավար Վանի նահանգապետ:

## Շապին-Գարահիսար

Այս գյուղաքաղաքում ազգային խմորումները սկսել էին 1880-ական թվականներից: Այստեղ են ստացել իրենց առաջին ֆիդայական մկրտությունը **Անդրանիկը** եւ **Մուրադը**:

... 1915-ի հունիսի 2-ից 20-ը քաղաքի փոքրաթիվ ինքնապաշտպանական ջոկատը (150 մարդ) անօրինակ խիզախությամբ հետ է մղում թուրքական հրոսակների (թվով՝ 5-6 հազար) գրոհները: Այդ առասպելական դիմադրությունը թուրքերը հաղթահարում են միայն խորամանկ դավադրությամբ...

## Մուսա լեռ

Մուսա լեռը գտնվում է Միջերկրական արեւելյան ափին: Նրա բարձունքների վրա վեց հայկական գյուղեր կային: Այդ վեց գյուղերի 4231 բնակիչներ (1171 կին, 1237 այր, 1883 անչափահաս) նախընտրեցին անապատներում մեռնելու փոխարեն խուսափել տարագրությունից, մնալ իրենց լեռան վրա եւ կռվել թշնամու դեմ: 1915-ի օգոստոսից մինչեւ սեպտեմբեր (40 օր) ձգվում է հերոսական պաշտպանությունը եւ ավարտվում ֆրանսիական նավերի օգնությամբ մուսալեռցիների անվտանգ գաղթով: Մանրամասները շարադրված են Ֆրանս Վերֆելի հայտնի գրքում: Ասենք միայն, որ ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարն էր 21-ամյա **Մովսես Տեր-Գալստյանը**:

## Տարոն

Տարոնի նահանգի (Բաղեշ, Մուշ, Սղերդ, Կենճ, Սասուն, Մանազկերտ) ինքնապաշտպանության կազմակերպիչներն էին **Ռուբենը**, **Կորյունը**, **Կոմսը**՝ իրենց խիզախ ընկերներով: Առավել տեւական էր դիմադրությունը Մուշում եւ Սասունում՝ 1915-ի մայիսից մինչեւ 1916-ի փետրվար: Թշնամին պարտվում էր, բայց նորանոր կանոնավոր ուժեր էին ներգրավվում... Այնուամենայնիվ, հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ բնակչության զգալի մասը, ապաստանելով լեռներում, փրկվում է կոտորածից:

## Ուրֆա

Միջագետքի հյուսիսում էր գտնվում Ուրֆան (Ուռհա, Եդեսիա), որ ուներ շուրջ 30.000 հայ բնակչություն... Ուրֆայի հերոսամարտի կազմակերպիչներն էին **Մկրտիչ Յոթնեղբայրյանը** եւ **Հարություն Ռասթկելենյանը**...

# Արդարահատույց...

**Եղեգնյա գրչով վրեժ երգեցի...**

Հայ ազգային-ազատագրական պայքարը ծնեց ֆիդայիների՝ ազգային հերոսների մի լուսափառ համաստեղություն: Ֆիդայական շարժման մասին պատմական ճշմարտությունը քիչ թե շատ ծանոթ է ընթերցողին: Սակայն կա ազգային հերոսների մի այլ աստղաբույլ, որոնց մասին շատ կցկտուր տեղեկություններ կան հրատարակված մեզանում. հայ վրիժառուները, որ շարունակեցին մեծ հայդուկների գործը՝ նոր պայմաններում ու նոր ձեւերով: **Արաբոյի, Աղբյուր Սերոբի, Քեռու, Անդրանիկի, Մուրադի, Գեւորգ Չաուշի, Հրայրի, Սաքոյի, Մախլուտոյի** եւ այլոց անուններին հետ հայ սերունդները երախտապարտ փառաբանելու են **Արամ Երկանյանին, Սողոմոն Թեհլերյանին, Արշավիր Շիրակյանին, Ստեփան Ծաղիկյանին, Միսաք Թորլաքյանին**...

## Արամ Երկանյան

Կարնեցի է, ծնված 1900թ.: Եղեռնից մազապուրծ՝ ապաստանել է Կովկասում: Մասնակցել է Բաշ-Ապարանի ճակատամարտին: Հայաստանի Հանրապետության օրերին եղել է ՀՅԴ կուսակցության տրամադրության ներքո: Թիֆլիսում ահաբեկել է (1919 եւ 1920 թթ.) Ղասիմբեկովին եւ Սարաֆովին: 1922թ. Բեռլինում ահաբեկել է Բեհաէդդին Շաքիրին: Այնուհետեւ ապրել է Ռումինիայում, Արգենտինայում... Մահացել է 1934-ին:

***

*«Այնքան թեթեւ կ'ըզգայի, կարծես լեռ մը ինկած էր կուրծքիս վրայեն:*

*Վստահ էի գնդակիս մահացության մասին:*

*Հատուցված էր ուխտը հայ մեռելոցին»:*

## Սողոմոն Թեհլերյան

Ծնվել է 1886-ին, Դարանաղյաց գավառում: 9 տարեկան հասակում ընտանիքով մեկնել է Երզնկա: Եղեռնի ընթացքում կորցրել է իր գերդաստանի 85 անդամների...

1919-ին գնում է Պոլիս՝ Թալեաթի հետքերով: Այնուհետեւ՝ Բեռլին: Հաստատվում է որպես ուսանող: Ճշտում է Թալեաթի նոր անուն-ազգանունը, հասցեն... 1921թ. մարտի 15-ի առավոտյան, երբ Թալեաթը դուրս է գալիս բնակարանից եւ սկսում առաջանալ փողոցով, Թեհլերյանը ընդառաջ է դուրս գալիս եւ դիմահար կրակում մարդասպանի գլխին... Այնուհետեւ Սողոմոնը ձերբակալվում է եւ երկարատեւ դատավարությունից հետո ազատ արձակվում: Մահացել է 1960թ., Ամերիկայում:

***

*«Համակված էի հոգեկան այնպիսի մի ներքին գոհունակությամբ, որի նմանը չէի ապրել երբեք: Արճիճի պես վրաս ծանրացած տեւական մղձավանջը չքացել էր հանկարծ: Ամեն բան փոխվել էր կարծես. կաշկանդված հոգիս ազատ ու լայնարձակ թռչում էր. կարծես էությամբ ձերբազատված, մտքերս շրջան էին անում աշխարհի ծանոթ բոլոր անկյուններում...»:*

## Արշավիր Շիրակյան

Տակավին պատանի, Պոլսից մեկնում է Հռոմ եւ հետապնդում Սայիդ Հալիմին, որի վարչապետության օրոք էր տրվել 1915-ի կոտորածների որոշումը: 1921թ. դեկտեմբերի 5-ին ցատկում է փողոցով սուրացող կառքի ելքի աստիճանի վրա եւ սպանում նախկին վարչապետին: Իտալական թերթերը կախարդական հերոսություն են նկատում կատարվածը: Այնուհետեւ Հռոմից անցնում է Բեռլին, Արամ Երկանյանի հետ հետամուտ լինում Բեհաէդդին Շաքիրին եւ Ջեմալ Ազմին: Միեւնույն օրը, երբ Երկանյանը ահաբեկում է Շաքիրին, նույն պահին էլ Շիրակյանը գնդակահարում է Ջեմալ Ազմին:

## Ստեփան Ծաղիկյան

Ծնվել է 1886-ին, Խոտորջուրի Մոխրկուտ գյուղում: Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում գտնվում էր Խարկովում: Այնտեղից անցնում է Կովկաս, միանում կամավորներին: Հայաստանի խորհրդայնացումից հետո մնում է տեղում՝ իրականացնելու չիրագործված մահապատիժներ: 1922թ. հուլիսի 21-ին Թիֆլիսում գնդակահարել է Ջեմալ փաշային: Չեկայի կողմից ձերբակալվել է եւ անհետ կորել:

## Միսաք Թորլաքյան

Ծնվել է Տրապիզոնում: 1916-ին՝ կամավոր: Ապա անցնում է Պոլիս, հետապնդում Բաքվի հայկական կոտորածի պատասխանատու Ջիվանջիրին, որին էլ դիմահար գնդակոծում է 1921թ. հուլիսի 8-ին:

***

Ծագումով դարաբաղցի, քաղաքացիական կռիվների հրամանատար, Միջին Ասիայում բասմաչների դեմ մարտերի հերոս **Հակոբ Մելքումովը** 1922թ. օգոստոսի 4-ին գնդակահարում է Էնվերին:





# ... 3 տարի անց

**Ազատությունը բախում էր մեր դուռը, իսկ մենք պատրաստ չէինք...**

Կա ավանդական մի չափանիշ. պատկերացնելու համար հաղթանակի մեծությունը՝ շեշտվում է հակառակորդի ուժը... Մեր հակառակորդը տարիներ, դարեր նա էր, որի մասին Հյուգոյի թեւավոր խոսքը հնչում է այսպես. *այստեղով թուրքն է անցել, մնացել են միայն ավերակներ*: Իսկ այդ հակառակորդը, թշնամին, թեեւ ոչ ուղղակիորեն, այնուամենայնիվ, օժանդակություն ստացավ եւ Ռուսաստանից, որին ապավինել էր մեր ազգի կեսը եւ որին հավատում էր մյուս կեսը եւս, եւ Եվրոպայից, որը Հայկական հարցին նայում էր միայն որպես մշտական կռվան՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու...

Ուրեմն որքա՞ն հերոսական պետք է լիներ 600 տարի իր պետականությունը կորցրած ժողովուրդը, որ հաղթահարեր՝ երբեմն խաչվող, երբեմն զուգահեռ ընթացող այդ երեք ուժերը: Եղեռնն անգամ չկասեցրեց ոչ միայն նրա գոյատեւումը, այլեւ՝ կորցրածը հետ բերելու անսասան կամքը եւ տվյալ պահին խիստ անհրաժեշտ հավատը սեփական ուժերի նկատմամբ:

Հայոց մեծ եղեռնից երեք տարի անց տեղի ունեցավ Սարդարապատի ճակատամարտը... 1915-ին ամայացել էր Արեւմտյան Հայաստանը: Բայց դեռ կար Արեւելյանը... 1917-ի Հոկտեմբերյան հեղափոխությամբ տապալվել էր ցարական իշխանությունը, եւ Արեւելյան Հայաստանը իրերի բերումով հայտնվել էր ինքնուրույն դրության մեջ: Վերջին 600 տարիների ընթացքում առաջին անգամ հայության մի հատվածը ազատվել էր կապանքներից եւ, թեեւ արյունաքամ, քայքայված տնտեսությամբ, բայց արդեն միայն իր սեփական, թեկուզեւ նվազագույն, ուժերը տնօրինելու հնարավորությամբ... Բնական էր ստեղծված իրադրության մեջ թուրքական նոր արշավանքը: Արեւմտյանի ճակատագիրը կարող էր կրկնվել եւ Արեւելյան Հայաստանում... Բայց... Սարդարապատի հաղթանակը իր ունեցած նշանակությամբ իրավացիորեն համեմատվել է Ավարայրի հետ: Հայ ժողովրդի համար չափազանց վճռորոշ այդ հաղթանակը պարզապես պարգեւեց գոյատեւում... Հաղթանակից ընդամենը 2-3 օր անց հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը: Պատկերացնել է պետք հայոց ոգեւորությունը. Եղեռնից երեք տարի անց, եղեռնազարկ, լիովին քայքայված, կողոպտված եւ լքված, վերջին ուժերը Սարդարապատում փորձարկած Արեւելյան Հայաստանը իրագործում է իր 600-ամյա երազանքը. անկախ պետականությունը վերականգնվում է...

1918-ի մայիսի 28-ից սկսվում է Հայ դատի պահանջատիրության (Հայկական հարցի) նոր փուլը: Առաջինը իր քառասնամյա տարեգրությամբ ավարտվել էր եղեռնով... Երկրորդը տեւեց ընդամենը երկուսուկես տարի եւ ավարտվեց Հայաստանի խորհրդայնացումով...

1918-ի մայիսի վերջին Հայկական Հանրապետության տարածքը կազմում էր ընդամենը 10.000 ք. կիլոմետր: Երկու տարի անց՝ 1920-ի կեսերին՝ 70.000 ք. կիլոմետր: Յոթնապատիկ այս հաջողությունը ամենից մեծ կռվանն է հօգուտ որեւէ ազգի անկախության: Ընդամենը երկու տարի հայ ժողովուրդը ապավինել էր միայն սեփական ուժերին եւ կարճ ժամանակամիջոցում հաղթահարել ռազմական, տնտեսական, քաղաքական բազում դժվարություններ ու առաջադիմել նաեւ դիվանագիտության մարզում: 1920թ. օգոստոսի 10-ին կնքված Սեւրի դաշնագրով Հայաստանին հատկացվում էր եւս 100.000 ք. կիլոմետր տարածք. գրեթե ամբողջությամբ լուծվում էր Հայկական հարցը... Սակայն, Ավետիս Ահարոնյանի հստակ բնորոշմամբ, ազատությունը բախում էր մեր դուռը, իսկ մենք պատրաստ չէինք նրան ընդունել... Նորից կողմնորոշումներ, տարաձայնություններ, չհաղթահարված ստրկախտի դրսեւորումներ...

Հայաստանի Հանրապետության թիկունքում սկսվում է ռուս-թուրքական քաղաքական մի նոր խաղ. ցարական Ռուսաստանի՝ Հայաստանի հանդեպ ունեցած նկրտումներն այս անգամ դրսեւորվում են արդեն բոլշեւիկյան Ռուսաստանի՝ համաշխարհային հեղափոխության շահերով... Կնքվում են ռուս-թուրքական պայմանագրեր, Ռուսաստանը նորից իր ձեռքն է վերցնում Հայաստանի եւ Հայկական հարցի տնօրինումը... Օտար՝ երրորդ ուժին ապավինելու հին հիվանդությունը խարխլում է հայոց միասնությունը:

Անդրանիկի հաշվարկներով Հայաստանը 65.000 զորաբանակով կարող էր իրականություն դարձնել Սեւրի դաշնագրով արտոնված Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստանը, սակայն գաղափարական տարաձայնությունները քայքայում են նույնիսկ առկա ուժերը, եւ Հյուսիսի ու Հարավի ճնշման միջեւ Հայկական Հանրապետությունը ստիպվում է ոչ միայն հրաժարվել նոր տարածքներից, այլեւ ընդհանրապես՝ անկախ պետականությունից...

Հայ դատի պահանջատիրության երրորդ փուլը (1920-1965) որեւէ նշանակություն պարունակում է միայն Սփյուռքի գործողություններում: Մայր հայրենիքում սկսվում է մի երկարատեւ լռություն...

# ... 50 - ամյակ

**Թող որոտա իմ գլխին...**

1965 թվականով սկսվեց հայ դատի պահանջատիրության նոր հանգրվանը: Մինչ այդ եղել էր 1937-ը, հետո՝ 1949-ը, հետո եկել էր 1953-ը: Մի ամբողջ 45 տարի *«Եղեռն»* կամ *«Հայկական հարց»* արտահայտությունները ուղղակի հանված էին մեր բառապաշարից, ինչպես ժամանակին օսմանյան Թուրքիայում արգելված էր *«Հայաստան»* բառի գործածությունը: Միայն 1965-ին ժողովուրդը, մի խումբ ընտրյալների ջանքերով, նշեց Հայոց Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցը: Եղան հանրահավաքներ, բազմամարդ ցույցեր, երթեր, կիզակետում էին հրապարակները, Կոմիտասի անվան զբոսայգին... Սա առաջին համաժողովրդական պոռթկումն էր Խորհրդային Հայաստանում: Նույնիսկ *«Պրավդան»* այդ օրերին հոդված տպագրեց եղեռնի մասին: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին մայր հայրենիքում եղեռնի 50-ամյա տարելիցի նշման ողջ նշանակությունը: 1965-ից հետո մեզանում սկսեցին լույս տեսնել բազմաթիվ գրքեր՝ հայոց ցեղասպանության մասին: Իհարկե, դեռեւս չէր վերհանվում ողջ ճշմարտությունը, սակայն մեր պատմության այդ մի դրվագը եւս մտավ մեր մշակութային շրջանառության մեջ, մեր հիշողության մեջ, ու արդեն գիտեինք, որ ունենք Հայ դատ ու պահանջատիրություն:

1965-ը անհամեմատ մեծ ընդգրկումով նշվեց Սփյուռքում: Ոգեկոչման արարողություններ կատարվեցին Լիբանանում, Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում, Արգենտինայում, Կանադայում, Իտալիայում եւ այլուր: Արտասահմանյան բազմաթիվ երկրներում, հատկապես՝ թուրքական դեսպանատների առջեւ, տեղի ունեցան ցույցեր, քայլարշավներ... Բեյրութում հրատարակվեց *«Հուշամատյան Հայոց Մեծ Եղեռնի»* մեծածավալ աշխատությունը... Ամենատարբեր երկրներում եւս լույս տեսան բազմաթիվ գրքեր, հոդվածներ:

*«Մոնդ»* թերթում հրապարակված իր հոդվածում հայագետ **Ֆրեդերիկ Ֆեյդին** գրեց. «*Բոլոր մարզերում մեջ, հակառակ իրենց փոքր թվին, հայերը կնպաստեն քաղաքակրթության համաշխարհային գործին*»:

«Յումանիտեն» նշեց, որ «*Հայերի մասսայական կոտորածը ցեղասպանության առաջին ոճիրն էր 20-րդ դարի սկզբին, 1914-18 թթ. պատերազմի ընթացքում: Եվ այդ ոճիրը երբեք չդատվեց ու չդատապարտվեց*»:

**Ժան Մարի Գառզուն** իր «Մի իսկական ցեղասպանություն» գրքում հանգամանորեն ներկայացրեց Հայոց Մեծ Եղեռնը, վերլուծելով նրա հետեւանքները:

**Իվ Տեռոնը** Հայաստան այցելելուց հետո հրատարակեց *«Հայերը. մի ցեղասպանության պատմություն»* աշխատությունը...

Հարկ չկա բոլորը թվարկել: Հայությունը չէր մոռացել իր պատմությունը, իր դատը, աշխատում էր օրնիբուն, փնտրում ու գտնում կատարվածի արդար հատուցման համակիրներ:

# ... Զսպանակ

**Զեզ ո՞վ էր ասում՝ մեզ սեղմեիք այդքան...**

Ի՞նչ կար Հայաստանում 1965-88 թվականներին: Երկրում «ծաղկում» էր «լճացումը»: Հայաստանում այն ուներ մի ուրիշ երանգ եւս. ծովանում-ամբարվում էր ժողովրդի հիշողությունը, որ այլեւս արթնացել էր ստալինյան «անհատի պաշտամունքի» պսակազերծումից ու մանավանդ 1965-67թթ. ժողովրդական ընդվզումներից հետո... Ճիշտ է, դա արտահայտվում էր ոչ զանգվածայնորեն, հատկապես՝ գրական-մշակութային եւ պատմագիտական ոլորտներում, բայց, այնուամենայնիվ, գոյատեւող ժողովուրդը այլեւս թեւակոխել էր իր արդար պահանջատիրության նոր փուլը եւ ապրում էր մի յուրատեսակ նախապատրաստական շրջան: Այդ տարիներին ստեղծագործական վերելքներ ապրեց **Հովհաննես Շիրազը**, ի հայտ եկան մշակութային այնպիսի հզոր երեւույթներ, ինչպիսիք էին **Պարույր Սեւակը, Մինաս Ավետիսյանը, Մուշեղ Գալշոյանը**... Ավելացնենք **Հրանտ Մաթեւոսյանի** արձակը, **Տիգրան Մանսուրյանի** երաժշտությունը, **Համո Սահյանի** պոեզիան, **Սերո Խանզադյանի** պատմավիպասանությունը... Բոլորը չես թվարկի... Ստեղծվում էին արժեքներ, որոնցով կրթվում էր նոր սերունդը, մանավանդ որ պատմագիտության բնագավառում եւս դրական տեղաշարժերն ակնհայտ էին (Զոն Կիրակոսյան եւ ուրիշներ): Եվ մոտալուտ գարնան շունչը զգացվում էր օրավուր:

1967թ. նոյեմբերի 28-ին տեղի ունեցավ Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա կառուցված 1915թ. Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Հուշարձան-կոթողի բացումը: Մի քանի ամիս անց, այս անգամ՝ պատշաճ օրը, 1968-ի մայիսի 25-ին, հանդիսավորապես բացվեց Սարդարապատի ճակատամարտին նվիրված հուշահամալիրը: Այդպիսով նշվեց մեր պատմության փառահեղ այդ իրադարձության 50-ամյակը եւ *«Եղեռն»* բառ-հասկացության հետ շրջանառության մեջ դրվեց *«Սարդարապատ»* հասկացությունը: Իհարկե, պատմական ճշմարտությունները դեռեւս կարելի էր քաղել միայն Սփյուռքում լույս տեսնող գրքերից ու պարբերականներից, իսկ մայր հայրենիքում լոկ դրանց, ասենք, Հանրային գրադարանում պահպանվող եզակի օրինակներից:

Նույն՝ 1968-ի հոկտեմբերի 18-ին հանդիսավորապես նշվեց Երեւանի հիմնադրման 2750-ամյակը: Ոգեւորությունը համազգային էր: Ու թեեւ մի **Պիոտրովսկի** (անշուշտ, մեր գիտնականների օժանդակությամբ) կարողացավ աշխարհին զարմացնել, թե տեսեք, մի նոր, անհայտ աշխարհ եմ հայտնաբերել, մի Ուրարտու, մի առանձին քաղաքակրթություն, հայ ժողովուրդը մեծ խմբերով բարձրանում էր Արին-Բերդ բլուրը, դեպի էրեբունի ամրոցը, եւ բնավ չէր կասկածում, որ էրեբունին Երեւանն է եւ նույնքան հայկական, որքան Վանը, Տիգրանակերտը, Վաղարշապատը... Իսկ բլրան ստորոտին շրջիկ-վաճառողները ազգային կիրառական արվեստի նմուշներ ու նաեւ Անդրանիկի լուսանկարներն էին վաճառում... Դե գնա ու ասա, թե Ուրարտուն Արարատը չէ, Հայաստանը չէ, թե հայոց լեզուն 6 հազար տարեկան է, բայց հայ ժողովուրդը... ընդամենը 2,5 հազար, որովհետեւ 3,5 հազար տարի կազմավորման ընթացքի մեջ է եղել... Ժողովուրդներ են եկել ու գնացել պատմության թատերաբեմից, իսկ հայերը ժողովուրդ չեն եղել, ազգ չեն եղել, այլ ինչ-որ անհայտ ու տարանուն ցեղերի մի խառնարան-ամբոխ... Այդպիսի անհեթեթությունների միայն «գիտնականները» կարող են հավատալ: Ժողովուրդը հո գիտի, մեկին գումարած մեկի պես պարզ է՝ կար հայոց լեզուն, ուրեմն կար եւ այդ լեզվով խոսող, այսինքն՝ հայ ժողովուրդը...

Եվ հետո՝ հո լճացումը անսահման չէ՞ր տեւելու: Անցնելու էր եւս քսան տարի, եւ Անդրանիկին հավասար Նժդեհն էր պաշտվելու, եւ սուտ *«ուրարտացի»* բառին փոխարինելու էր ճշմարիտ *«արիացին»*...

1978թ. ապրիլի 14-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը հաստատեց Հայկական ԽՍՀ սահմանադրությունը: Լճացում էր, բայց ժողովուրդն արդեն ընդվզել գիտեր ու իր կամքով ստիպեց սահմանադրության մեջ կրկին վավերացնել, որ Հայկական ԽՍՀ պետական լեզուն հայ ժողովրդի մայրենի լեզուն է, հայերենը...

Նույն թվականի աշնանը պետականորեն նշվեց Ռուսաստանի հետ Արեւելյան Հայաստանի միավորման 150-ամյակը, Հայաստանը 3-րդ անգամ պարգեւատրվեց Լենինի շքանշանով: Բայց թե ժողովուրդն արդեն հոգնել էր կեղծ պատմություններից, անհիմն եւ անարդար «ինտերնացիոնալիզմներից», բայց իներցիայի ուժով «լճացումը» դեռ շարունակում էր գոյատեւել, եւ նրան բնորոշ կարգախոսն էր՝ «*Շիրակո շագայետ Ազերբայջան*», որ համահունչ էր երկրի հիմնին՝ «*Շիրակա ստրանա մայա...*»...

1967թ.-ից սկսած, արդեն թույլատրված կարգով, ամեն տարի ապրիլի 24-ին ժողովուրդը գնում էր Ծիծեռնակաբերդ: Պատմահոր անմահ *«Հայոց պատմության»* ու Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյա հոբելյաններն էր նշում, համոզվում ու հավատում, որ աշխարհն անճանաչելի է, որովհետեւ անվերջ է, բայց նաեւ՝ թեեւ փոքրաքանակ ժողովուրդ ենք, մեր պատմության մեջ շատ են հերոսական դեպքերն ու դեմքերը, որ ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է... Սփյուռքը շարունակում էր իր պայքարը ազգապահպանման համար՝ ուծացման դեմ, հայ դատի պահանջատիրության նորանոր եղանակներ փնտրում, մենք զսպանակի պես սեղմվում էինք ու հոգեւոր պաշար կուտակում, որ մեր թիկունքի հսկա պատմությանն ու մշակույթին ապավինած՝ սովորենք արժանապատիվ ապրել, արժանապատիվ պահանջել, արժանապատիվ պայքարել... Դեռ գալու էր Փետրվարը, որ լիներ Զարթոնք, որ պահանջատիրությունը լիներ վստահ ու հաստատակամ, սեփական ուժի ու բարոյականության ինքնագիտակցմամբ:

# Փետրվար...

### Գարուն ա, արեւ ա արել...

Արցախահայությունը, իբրեւ անքակտելի մասը հայության, նույնպես անցավ 19-րդ դարավերջի ու 20-րդ դարասկզբի թոհուբոհերով (հատկապես՝ 1918-21թթ.): Հայոց ազգային-ազատագրական պայքարի՝ Արցախի բաժինը կասեցվեց 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի տխրահռչակ որոշումով: Սակայն մի՞թե հնարավոր է ժողովրդի կամքը ոտնահարել եւ զսպաշապիկի մեջ պահել մշտապես... 1923թ. ստեղծված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը հայոց պատմական Արցախ աշխարհի մի հատվածում (անկուշտ հարեւանը միշտ աչք է տնկում ունեցվածքիդ, ու երբ դատավորդ կաշառառու է, պատառ-պատառ կողոպտում է հողդ) պահպանեց իր գոյությունը, շարունակական ցեղասպանությունների պայմաններում (վկա՝ Նախիջեւանը) անաղարտ պահեց իր հայեցի նկարագիրը ու մի կերպ դիմանալով *«տիրոջ»*, մեղմ ասած, խորթություններին, սպասեց իր *«աստեղային ժամին»*, որ գալու էր անպայման... 1988 թվականի փետրվարի 20: Երեւանի Թատերական հրապարակում հարյուր հազար հայաստանցի հայեր՝ առաջին անգամ մայրաքաղաքում հանրահավաքի եկած, սպասում են Արցախից լուրերի. Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի արդյունքներին... *«Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանի որոշումը՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ կազմի մեջ անցնելու վերաբերյալ Ադրբեջանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առջեւ միջնորդելու մասին, ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին...»*, ու թնդում է Թատերական հրապարակը հազարաձայն *«մի-ացում»*-ից, ու երկինք բարձրացած բռունցքներից, թվում է, դողում է մեր մոտ անցյալի ճակատագիրը...

Ու հաջորդ օրը, ու մյուս օրը, ութ օր շարունակ, թվում է, ողջ հայությունն է Թատերական հրապարակում, որ դրանից հետո Ազատության վերանվանվեց: Հայաստանը, թվում է, տեսանելի լարերով մեկ ակնթարթում կապվել է ողջ սփյուռքահայության, ողջ աշխարհի հետ... 100.000, 500.000, 700.000 ու ավելի մարդիկ, հայեր, միակամ, միաբռունցք իրենց պահանջատիրությունն են ավետում Մոսկվա, Նյու Յորք, համայն մարդկության: Ու արձագանքներ ու շարժումներ, թվում է՝ ողջ Եվրոպան մեր միտինգերից է ցնցվում. ոչ մի օրինազանցության դեպք, մի ծաղիկ անգամ չի տրորվել, բժիշկները օգնության են հասնում վայրկենապես, անվճար ուտելիք եւ ըմպելիք են բաժանում... Ու այսպես մի շաբաթում դառնում ենք Միասնական ազգ, Ազատ ժողովուրդ... Այն ո՞վ էր ասում, թե միաբան չենք: Այդ ի՞նչ էր, ուրեմն, հրա՞շք, մի շաբաթվա մեջ ինչպե՞ս միացանք: Միասին էինք մի՛շտ, ժա՛մը պիտի գար, որ ելնեինք ոտքի...

... Ու միանգամից, մի քանի օր, մեկերկու ամիս, փոխվում է քաղաքը, փոխվում է Հայաստանը, ու Սարոյանը էլ չի ասում, թե՝ հայերը Հայաստանում ապրում են այնպես, ինչպես Ամերիկայում, այսինքն՝ իրենց ապրելով այդ երկիրը Հայաստան չեն դարձնում...

Հիմա Սարոյանը հարցնում է. *«Ամբողջը հայե՞ր են»*, ու երբ դրական պատասխան է լսում, հրճվում է մանկան պես, իր կիսված սրտի նման մի օր իր հայրենիքն էլ է միացյալ դառնալու, ու բացականչում է. *«Ապա մի փորձեք կործանել այս ցեղը, ասացեք՝ դարձյալ 1915 է, ու աշխարհի աչքը պատերազմի ծխով բռնված: Կործանեցեք Հայաստանը, տեսեք՝ կկարողանա՞ք հարուստ հայրենիքը: Իրենց շեն տներից քշեք նրանց անապատ: Չմոռանաք խլել ձեռքերի հացն ու ջրի վերջին ումպը: Իրենց ու իրենց Աստծո տները վառեցեք: Տեսե՛ք, թե նրանք դարձյա՞լ չպիտի ապրեն: Տեսեք՝ ցեղը դարձյա՞լ չպիտի հառնի, երբ նրանցից երկուսը իրար գտնեն մի գարեջրատան մեջ, թեկուզ տասը, թեկուզ հարյուր տարի հետո, եւ խնդան ու խոսեն իրենց մայրենի լեզվով: Զանացեք, տեսեք՝ կարողանա՞ք պիտի, շանորդիներ, արգելել նրանց, որ չծաղրեն ձեր մեծ-մեծ ճռճռան գաղափարները, որ աշխարհում երկու հայ չխոսեն իրար հետ, փորձեք ջնջել նրանց»...*

Փետրվարը, լինելով արթնացած հայոց ոգու վառ արտահայտությունը, ինչ-որ մի տեղ դեռ արտաքին հուզական փայլ էր լոկ, ձեւ, որ անպայմանորեն պայմանավորեց եւ բովանդակությունը, առջեւում Գործն էր, որ արդեն ունեցավ իր առաջին շոշափելի արդյունքները:

# Ազատագրում...

### Պիտի կերտենք նոր արշալույս

Ղարաբաղյան շարժմանն ի պատասխան՝ ադրբեջանցիները կազմակերպեցին հերթական ցեղասպանություն Սումգայիթում: Նույն ծանոթ ձեռագիրը. թուրք խուժանը հագուրդ է տալիս իր արնախում բնազդին՝ իր իշխանության սցենարով... Ադրբեջանի հայաշատ բնակավայրերից կրկին ելան գաղթականների քարավաններ: Թալանված, հալածված, մազապուրծ բազմաթիվ հայեր (հարյուր հազարավորներ՝ միայն Բաքվից) մի կերպ հասան Հայաստան՝ ճանապարհին թողնելով ոչ միայն տասնամյակների աշխատանքով ձեռք բերված ունեցվածք, այլեւ հարազատների մարմինները... Մի՞թե կրկնվելու էր պատմությունը...

Մինչ Հայաստանում քաղաքական նորագույն խմորումները ձեւավորում էին ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը, 1988-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժը հերթական անդարմանելի աղետը բերեց հայ ժողովրդի գլխին... Բայց, օ՜ ճակատագիր. 1915-ից երեք տարի անց՝ 1918-ին հիմնադրվել էր Առաջին Հանրապետությունը, եւ ահա, 1988-ի աղետից դարձյալ երեք տարի անց, 1991-ի սեպտեմբերի 21-ի հանրաքվեով հիմնադրվեց Հայաստանի Երրորդ Հանրապետությունը:

Մինչ երկիրը պատրաստվում էր պետական շինարարության, ազերի վայրենին սանձազերծեց պատերազմ արցախահայության դեմ՝ նախահարձակ լինելով նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Սակայն, ի հեճուկս թշնամու, 1992-94թթ. տեղի ունեցած մարտական գործողությունների հետեւանքով ազատագրվեց Արցախի մարզը՝ հարակից շրջաններով... Սարդարապատից 74 տարի անց ճակատագիրը մեզ արտոնեց հպարտանալ մի նոր՝ Շուշիի հաղթանակով:

Հաղթանակը ձեռք բերվեց հայ ազատամարտիկների արյան գնով: Կնքվեց զինադադար... Սակայն պատերազմը դեռ ավարտված չէր: Արցախի հիմնախնդիրը, որ համայն հայության կենսականն էր ու Հայկական հարցի մերօրյա առանցքային բովանդակությունը, լուծված չէր իրականում, եւ ազատագրումը դեռ վավերացված չէր միջազգային իրավական դաշտում... Մանավանդ, որ ոսոխը դեռ վնգստում էր...

Արցախյան ազատամարտը ընթացավ անկախացած երկրի վերաշինության առաջին քայլերին զուգահեռ: Անկախության խորհրդանիշները, պետականության հիմնական հաստատությունները մեկը մյուսի ետեւից դարձան իրողություններ: Տարիներ անց մի նոր աղետ՝ 1999-ի հոկտեմբերի 27-ը փորձեց կասեցնել ստեղծագործ աշխատանքով երկրի վերականգնման գործընթացը... Սակայն, ի պատիվ ժողովրդի, իշխանությունների ու ընդդիմության, ճգնաժամը հաղթահարվեց...

Տարածաշրջանում ամենաժողովրդավարական հասարակությամբ, դեռեւս ամենամարտունակ բանակով, վերականգնվել սկսվող ու զարգացող տնտեսությամբ եւ, ամենակարեւորը, համազգային միասնությամբ՝ Հայաստանը քայլ առ քայլ ամրանում ու մոտենում էր իր ապագային...

# Երկու ծաղկով գարուն

### Իմ նոր Հայրենիք, Հզոր Հայրենիք...

Հայաստանը արեւելյան եւ արեւմտյան հատվածների առաջին անգամ բաժանվեց 387թ.-ին (Բյուզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ): Ճիշտ է, հետագայում տարբեր վարչական բաժանումներ ունեցավ Հայաստանը, վերականգնեց պետականությունը իր պատմական հայրենիքում (922-1045, Բագրատունյաց հարստություն), սակայն այդ, ասես, ճակատագրով նախասահմանված սահմանագիծը այդպես էլ չանհետացավ հայոց երկրի ու քարտեզի վրայից: Հետագայում Բյուզանդիային փոխարինեց Օսմանյան Թուրքիան: 1828 թվականին Արեւելյան Հայաստանը միավորվեց Ռուսաստանին: Արեւմտյան Հայաստանը դատապարտվեց կործանման: 1895-1923թթ. ցեղասպանություններից հետո Արեւմտյան Հայաստանը ամայացավ գրեթե ամբողջապես, արեւմտահայությունը սփռվեց աշխարհով մեկ՝ ստեղծելով նոր գաղթօջախներ եւ կամ ստվարացնելով նախկինում եղածները: Հայության երկու հատվածները արդեն կոչվեցին, դարձան Սփյուռք ու Մայր Հայրենիք...

Մեզ բաժանել են, որ տիրեն: Մենք գոյատեւելու ենք մեկս մյուսով: Առանց Մայր Հայրենիք՝ Սփյուռքը դատապարտված է ուծացման: Առանց Սփյուռք՝ Հայրենիքը տկար է եւ միայնակ:

Այսօր մենք արդեն ունենք միասին լինելու գիտակցությունը: Չէ, ո՛չ երկրաշարժը, Արցախյան շարժո՛ւմը, ազգային Զարթոնքը բերեց մեզ մեկ ժողովուրդ, մեկ հավատ, մեկ լեզու, մեկ հայրենիք ինքնագիտակցությանը: Ղարաբաղը արթնացրեց Սփյուռքին, իսկ մեզ հուշեց՝ նրան պահպանելով նրան ապավինելու կարեւորությունը: Երկրաշարժը, որ ցնցել էր արդեն իսկ ողջ աշխարհը, սրտահույզ գթասրտության ալիք տարածեց սփյուռքով մեկ. այդ ինչպե՞ս, ուրեմն մեր հայրենիքը կարող է եւ չլինե՞լ... Ու Ղարաբաղով արթնացած սփյուռքահայոց ոգին շարժեց նաեւ սիրտը սփյուռքահայոց...

Անշուշտ, դա այդպես է: Բայց մեզ միացնողը, ավելի ճիշտ՝ մեր միջեւ եղած անջատումները (մի ազգի երկու մասերի միջեւ «ջերմ կապեր» հասկացությունն անգամ սառն է հնչում) վերացնողը եղավ մեր ազգային Զարթոնքը: Նորից վերարթնացան հայոց երազները, հայոց իղձերն իրագործելի ծրագիր դարձնելու ելքեր որոնվեցին: Հայոց դատի պահանջատիրությունը որչափ Սփյուռքինը, նույնքան եւ ավելի դարձավ Մայր Հայրենիքինը:

1992-94 թթ. եւ ապա 2016թ. ապրիլի 2-5-ը Արցախյան ազատամարտում տարած մեր փայլուն հաղթանակներն ամրապնդեցին Արցախի անվտանգությունը՝ աննախադեպ ոգեւորություն պարգեւելով աշխարհասփյուռ հայության բոլոր հատվածներին եւ մեզ դարձնելով պատմականորեն միասնական ազգ նաեւ նոր ժամանակներում (բացառյալ վերջին դավադիր պատերազմը եւ արցախահայության բռնի տեղահանությունը՝ իրենց բնօրրանից):

Երբ միասին ենք, հաջողություններն ակնհայտ են: Մանավանդ, որ հասկացել ենք, որ պիտի ապավինենք միայն մեր սեփական ուժերին... Սփյուռքի եւ Մայր Հայրենիքի միացյալ ուժերով պիտի ամբողջանա մեր կիսատված տունը, շենանա Թումանյանի երազած մեր *«Նոր հայրենիք, հզոր հայրենիքը...»*:

*«Մի ծաղկով գարուն չի գա»*,- ասում է ժողովուրդը, թեեւ եթե ունես Գեւորգ Մարզպետունու անկոտրում հավատը, կարող է եւ գալ: Իսկ երկու ծաղկով գարունը, թվում է, ուր որ է պիտի գա: Հայրենիքի ու Սփյուռքի՝ ամեն ձեռնարկ ու խնդիր լուծելիս միշտ միասին լինելու դիրքորոշմամբ կկարողանանք հասնել Հայ դատի պահանջատիրության ցանկալի հանգրվանին եւ, ի վերջո, լուծել Հայկական հարցը:



***Գ. Մ.***

# Համընդհանուր խռովքի թելադրանքով Կամ՝ մի քիչ թվաբանություն

*սկիզբը՝ էջ 4*

**Դու արդեն ելել ես Ագռավաքարից**: Վկա՝ Քո 25-ամյա անկախությունը: Ե՞րբ պիտի մոռանաս «բարեկամ» օտարի գոյությունը, որպեսզի այլեւս երբեք չպարտվես ոչ բարեկամ օտարներին... Թույլ տուր՝ հավատամ, որ այսօր, ապրիլյան այս վերջին քառօրյա պատերազմում Քո հերթական հաղթանակից հետո, Դու վերջնականապես սթափվել ես Քո հազարամյա նիրհից ու Քո **արքայական** արժանապատվությամբ քայլ առ քայլ վերականգնելու ես նաեւ Քո **Մեծ Հայրենիքը**: Քո՛, միա՛յն Քո մտքով, ու Քո, միա՛յն Քո բազկի ուժով, ամբողջությա՛մբ, առա՛նց որեւէ զիջումի, որովհետեւ Դու Քո բոլոր զիջումներն արել, ապրել ու սպառել ես արդեն հազար տարի...

... Տասը տարի առաջ՝ հունվարի առաջին օրերին, լրատվամիջոցները տեղեկացրին ադրբեջանցիների հերթական բարբարոսական արարքի մասին... ցուցադրվում էին Իրանի տարածքից նկարահանված կադրեր, որոնցում ազերի զինվորները հսկա մուրճերով ջարդուխուրդ էին անում հայկական մշակույթի վերջին բեկորները՝ նախիջեւանյան 10.000 խաչքարերի վերջին մասունքները... Քանի՞ եկեղեցի, քանի՞ խաչքար, հայկական մշակույթի քանի՞ անգին վկայագիր է ոչնչացվել 1920-ից ի վեր... Ո՞վ է հաշվել: Այդ թվականից սկսած՝ ռուս բոլշեւիկների կողմից արհեստականորեն ստեղծված Ադրբեջան վարչական միավորին բռնակցված Նախիջեւանում (փառք Աստծո, Արցախն այսօր ազատագրված է) քանի՞ հայ է սպանվել, տարհանվել... Պատմագիտական տվյալներն ու իրողությունները չթվարկենք: Մանավանդ որ պատմություն չունեցող եւ այդ պատճառով էլ պատմագիտություն չսիրող մեր սինլքոր թշնամու մի ներկայացուցիչ (հիշո՞ւմ եք 80-ականների վերջերին ազերիների՝ գրողների միության Անար անունով նախագահին) կարող է բարբաջել, թե հայերը մազոխիստ են...

*«Լա՛վը չես, խեղճ ես, լավը չես, զավա՛կս, որդիս, առաջնեկս, իմ հույսս, իմ թանկս, լա՛վը չես, մեջդ վրեժ չկա... Ինչ իմացողի հարցնում եմ՝ գովում ու ծիծաղում է - իբր թե լավն ես, խղճով ես, եւ էդ ծիծաղն իմ սրտին դանակ է դառնում, զավակս, զավակս... մարդ չպիտի էնքան քաղցր լինի՝ որ կուլ տան ու չպիտի էնքան դառը լինի՝ որ թքեն: Քեզ կուլ են տվել ու գովում են, զավակս, քեզ կուլ են տալիս: Ասում ես խիղճ, բայց խիղճը գիտե՞ս երբ է խիղճ - երբ գազանի մեջ է: Քոնը խիղճ չի, խեղճություն է»,* - ասում է Հրանտ Մաթեւոսյանը... Ինչո՞ւ խղճացինք: Պահը եկել էր՝ դարավոր ոսոխի այդ մի հատվածը աշխարհի երեսից ի սպառ ջնջելու... Էլ ինչո՞ւ ենք պաշտում **Նժդեհին.** *«Ուժն է ծնում իրավունք»,* եթե չպիտի լինենք նրա պես վճռական: Էլ ինչո՞ւ ենք հպարտանում պատմությամբ ու հիշում պատմահորը. *«Սահմանք քաջաց՝ զենք յուրյանց»*, եթե... շիրմաքար պղծողին պետք է պարզապես ոչնչացնել... Լու՞յս իջնի հոգուդ, **Խրիմյան Հայրիկ**, *«երկաթե շերեփի»* Քո դասը դեռ չենք սերտել ինչպես որ հարկն է ու դարձյալ ապավինում ենք թղթե «շերեփներին»... Մինչեւ ե՞րբ...

Մշակութային այդ եղեռնագործությունից օրեր անց հայ սպային Եվրոպայի կենտրոնում կացնահարած սինլքոր մարդասպանին Ադրբեջանը հռչակեց տարվա մարդ... Ի՞նչ մարդ... Իր հավաքական ամբողջության մեջ լույսի թշնամի, խաղաղության հակոտնյա ոսոխը (թուրք, թե ազերի) չի կարող հանդուրժել եւ ոչ մի **բարի գոյություն՝** անգամ իր տիրապետության ներքո... Իր **չար** բնույթը թույլ չտվեց հանդուրժել անգամ նախիջեւանյան խաչքարերի վերջին փշուրների լուռ վկայությունը իր **գողացած տարածքում**... Ո՞րը թվարկել եւ ինչո՞ւ թվարկել: Ամեն օր, ամեն ժամ իր վայրագ դեմքը թաքցնել անգամ չփորձող գազանը եղել եւ մնում է վտանգավոր, քանի դեռ ոչնչացված չէ **ի սպառ**...

... Ուզենք, թե չուզենք, մենք ակամա ներքաշված ենք մեծ պատերազմի մեջ: Այն սկսվել է 1000 տարի առաջ, երբ առաջին անգամ թուրք տարրը մտավ Հայկական Լեռնաշխարհ: Չենք ուզեցել, չէ՞, բայց նա տարիներով, դարերով խմել է մեր արյունը, մեր հայրենիքում ստեղծել է պետություն, երկիր, ոչնչացրել է մեզ ու մեր ստեղծած քաղաքակրթությունը 1000 տարի՝ ընդհուպ մինչեւ ցեղասպանություն... 1000 տարի մեր խաղաղասեր էության թելադրանքով մենք մեզ միշտ խաբել ենք, թե պատերազմն ավարտվել է, թե վերջապես մեզ բաժին մնացած այս մի փշրանք հողակտորի վրա գոնե կարող ենք ապրել ու ստեղծել խաչով ու գրչով, բահով ու մուրճով, մտքով, քանքարով...

Ավա՜ղ... պատմության դասերն այդպես էլ մինչեւ վերջ չենք սերտում ու մերթընդմերթ ստիպված ենք լինում ինքներս մեզ հիշեցնել, որ ազգերի միջեւ, ինչպես բնության մեջ, գործում է **գոյության կռվի սկզբունքը**:

Մանավանդ, որ գողը մտել է տունդ, դու, ուզես, թե չուզես, նա գիտի, որ գող է, նա վախենում է քեզանից: Որքան էլ դու մոռանաս, նա չի մոռանում, վախից կծում է... անընդմեջ, անընդհատ, ամեն անգամ, երբ երախը հասնում է կրնկիդ... Իսկ դո՞ւ... *«Թե՞ էդքան դուրեկան է ծնկներն օջախին դեմ անել, ժպտալով ննջել ու հուսալ ու հավատալ, թե աշխարհը բարի է»,* - դարձյալ ասողը Հրանտն է... Չգիտեմ... Գուցե ավելո՞րդ են զգացական այս դատողությունները, որ կարող են լինել ու կան յուրաքանչյուր հայի գիտակցության մեջ: Բայց ինչո՞ւ մեր փորձը, մեր քաջությունը, մեր հայրենասիրությունը, մեր ազատասիրությունը արդեն 1000 տարի չեն դառնում թշնամուն չներող ու արժանի հարված հասցնող իրա՛կան ուժ (բացառյալ աստեղային ժամերին դրսեւորվող բռնկումները): Նույնիսկ Արցախն ազատագրելուց հետո էլ (կարծես թե մեղավո՜ր ենք եղել, որ հաղթել ենք մեր դեմ սրով ելածին) մեր ենթագիտակցության մեջ երբեմն գլուխ է բարձրացնում փոխզիջման գաղափարը: Ի՞նչ փոխզիջում, Տե՛ր Աստված... Հաղթողին չե՛ն դատում: Իսկ եթե փորձում են դատել, հաղթողը կրկի՛ն է հաղթում... ու այնքան, մինչեւ որ այլեւս չեն դատում...

Ուզենք, թե չուզենք, քնենք, թե արթուն մնանք, թշնամին չի՛ քնում երբեք: Ուրեմն, ուզենք, թե չուզենք, ստիպվա՛ծ ենք լինել զգոն, արթուն, արագ եւ համապատասխան հարված հասցնող... *«Ուժեղի մոտ միշտ էլ թուլն է մեղավոր»...* Հերի՛ք է, որքան արդար եղանք, փորձե՛նք լինել նաեւ ուժեղ: Այլընտրանք չունե՛նք: Պատերազմը չի՛ ավարտվել: Իսկ եթե պատերազմ է, չխաբվե՛նք զինադադարներին: Պատերազմի ժամանակ իրավունքի՛ խնդիր չկա, կա միայն հարվածելո՛ւ, ամեն գնով ու միջոցով թշնամուն ոչնչացնելո՛ւ խնդիր: Մանավանդ որ հակառակորդը հենց այդպես էլ վարվում է մեզ հետ արդեն 1000 տարի:

1994 թվականին կնքված զինադադարից հետո Աստծո գրեթե յուրաքանչյուր օր այն խախտվել է՝ ընդհուպ մինչեւ 2016-ի ապրիլյան ուխտադրուժ հարձակումը, որ ե՛ւ անսպասելի էր, ե՛ւ սպասելի... Պետք չէ զարմանալ, առավել եւս՝ վրդովվել: «Գորշ գայլը» իր կաշին չի փոխել արդեն հազար տարի: Եվ արդեն հազար տարի պատերազմ է հայտարարել մեզ եւ գործում է՝ ինչպես պատերազմում: Եվ պետք է իրերին նայել, առավել եւս՝ հակառակորդի հետ մեր հարաբերություններն ընկալել ոչ թե մեր խաղաղասեր ոգու տեսանկյունից, այլ պատկերացնել եւ ետադարձել՝ ինչպես պատերազմում:

Աշխարհը փոխվում է: Փոխվում են հարաբերությունների ձեւերը, բայց մնում է մրցակցությունը, գոյության կռիվը... Փոխվում են պատերազմի զենքերը, բայց չի փոխվում թշնամին, մանավանդ, եթե գոյատեւում է քեզանից զավթած քո հայրենիքում եւ պիտի քեզ հարվածի՝ քանի դեռ դու կաս, եւ քանի դեռ ինքը պարտված չէ վերջնականապես:

**Զա՛րկ, լաո, զարկողին՝ զա՛րկ:**

**Պատերազմում՝ ինչպես պատերազմում:**

***Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ***

***«Կրթություն», թիվ 17, 20.04.2016 թ.***

Կառավարության որոշումով

# Փոփոխություններ՝ հանրակրթական դպրոցների կանոնադրությունում

ՀՀ կառավարության որոշմամբ՝ փոփոխություններ են կատարվել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունում:

Գործադիրի նիստում հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը:** Նրա խոսքով՝ այս փոփոխություններով եւս մեկ անգամ հստակեցվում են հանրակրթության ոլորտի բարեփոխումների գործընթացները:

*«Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հանրակրթության ոլորտի կառավարման բարեփոխումներին: Օրենսդրական փոփոխությամբ արդեն իսկ առանձնացվել է վարչատնտեսական կառավարումը բովանդակայինից, որի արդյունքում ամբողջությամբ վերանայվել է տնօրենների նշանակման կարգը. այժմ գործում է նշանակման եռափուլ գործընթաց: Վարչատնտեսական կառավարման մասով առանձնացրել ենք վարչատնտեսական համակարգողների հաստիքը, եւ այժմ քննարկում ենք վարչատնտեսական գործառույթները պատվիրակված իրականացնելու հնարավորությունը: Ֆինանսների նախարարության գործընկերների հետ արդեն իսկ նախապատրաստել ենք գնումների եւ հաշվապահության գործընթացները պատվիրակված իրականացնելու փաթեթը»,-* հարցի զեկուցման ժամանակ նշել է նախարարը:

Նրա խոսքով՝ նախագծով ամրագրվում է դպրոցների կառավարման ոլորտի տարանջատման գործընթացը թե՛ գործառույթների տեղաբաշխման, եւ թե մի շարք հստակեցումների իրականացման առումով, որոնք թույլ կտան այս բարեփոխումները հասցնել իրենց տրամաբանական ավարտին:

Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ մյուս կարեւոր փոփոխությամբ ամրագրվում է կրթահամալիրները համայնքային զարգացման կենտրոնների վերածելու գաղափարը: Ըստ այդմ՝ կանոնադրությամբ հաստատության խորհրդին են վերապահվում մի շարք վերահսկողական գործառույթներ, մասնավորապես՝ այն պետք է հաստատի կրթահամալիրի մարզադահլիճի եւ հանդիսությունների սրահի միջոցառումների եւ մրցումների տարեկան պլանը:

Խորհուրդը պետք է նաեւ քայլեր ձեռնարկի, որ նմանատիպ համայնքային դպրոց-կենտրոնում ապահովվի նախադպրոցական եւ դպրոցական կրթություն, ոչ ֆորմալ կրթություն, մարզաձեւերով զբաղվելու հնարավորություն, իրականացվի շարունակական կրթություն մեծահասակների համար, ինչպես նաեւ համայնքի բնակիչներին լիարժեք ծառայություն տրամադրելու հնարավորություն ստեղծվի:

Հաջորդ կարեւոր փոփոխությամբ սահմանվել են մասնագիտացված հանրակրթական դպրոցների առանձնահատկությունները, որոնք մինչ այժմ բավականին խնդիրներ էին առաջացնում այդ դպրոցների գործունեության համար: *«Առանձին հաստատվում է հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների կանոնադրությունը, որը ներառական կրթության իրականացման համատեքստում հատուկ դպրոցների վերափոխման եւս մեկ քայլ է: Նպատակ ունենք դեռեւս գործող հատուկ դպրոցները վերածել ռեսուրս կենտրոնների, որոնք կտրամադրեն մասնագիտական ծառայություններ եւ աջակցություն հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին եւ կվերապատրաստեն համապատասխան մասնագետներին»,-* ընդգծել է նախարարը՝ փաստելով, որ նախագիծը հանրակրթության բարեփոխման գործընթացների հստակեցմանը միտված քայլ է:

Վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** հետաքրքրվել է, թե արդյոք կան դպրոցներ, որտեղ արդեն ներդրված է կառավարման նոր մոդելը, եւ արվե՞լ է գնահատում, թե ինչ ազդեցություն է թողնում նոր մոդելը հանրակրթության համակարգի վրա:

ԿԳՄՍ նախարարը պարզաբանել է՝ վարչատնտեսական համակարգողները նշանակվում են այն դպրոցներում, որտեղ նախկին իրավակարգավորմամբ աշխատող տնօրենի պայմանագրային ժամկետն ավարտվում է, եւ հայտարարվում է ընտրություն՝ նոր ընթացակարգով, ըստ որի՝ նշանակվում է վարչատնտեսական համակարգող, որը պատասխանատու է դպրոցի ֆինանսատնտեսական կառավարման համար եւ տնօրեն, որը պատասխանատու է ուսումնական գործընթացի համար: 2023 թվականի վերջին շուրջ 170 դպրոցներում արդեն նշանակված են վարչատնտեսական համակարգողներ, 2024 թվականի ապրիլի դրությամբ՝ եւս 48 դպրոցներում, կառավարման նոր մոդելի ներդրմամբ պայմանավորված, աշխատանքի են անցնելու վարչատնտեսական համակարգողները:

*«Մենք հիմա առանձնացրել ենք տնօրենի եւ վարչատնտեսական համակարգողի գործառույթները, սակայն արդյունավետության եւ ազդեցության գնահատում կատարելու համար պետք է նաեւ պատվիրակման գործընթաց կազմակերպենք որոշակի ծառայությունների մասով»,-* ասել է նախարարը՝ հստակեցնելով, որ խոսքը դպրոցներում սննդի, անվտանգության, մաքրման աշխատանքների, գնումների, հաշվապահության եւ տնտեսական սպասարկման կազմակերպման մասին է:

Առաջին փուլով նախատեսվում է իրավաբանական անձանց պատվիրակվել գնումների եւ հաշվապահության գործառույթները, որը հնարավորություն կտա դպրոցներում ունենալ այդ ծառայությունների միասնական ստանդարտ եւ ապահովել ծախսարդյունավետություն:

Ըստ ԿԳՄՍ նախարարի՝ զուգահեռաբար մշակվում են պատվիրակման գործընթացի ամբողջական կազմակերպման առաջարկները՝ համագործակցելով Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների, Ֆինանսների նախարարությունների եւ այլ պետական գերատեսչությունների հետ:

Ժաննա Անդրեասյանը, անդրադառնալով հանրակրթական դպրոցների տնօրենի նշանակմանը, նշել է, որ գործընթացը եռափուլ է. տնօրենի պաշտոնին հավակնորդները նախ հավաստագրվում են, որով հավաստվում են նրանց՝ օրենսդրության ոլորտի իմացությունները: Հավակնորդը, մասնակցելով տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին, ներկայացնում է զարգացման ծրագիր, որը ենթարկվում է փորձաքննության: Զարգացման ծրագրի փորձաքննությունը կատարվում է մրցույթով ընտրված երկու անկախ կազմակերպության կողմից: Այն հավակնորդները, որոնց ներկայացրած զարգացման ծրագրերը հաղթահարում են փորձաքննության դրական շեմը, հրավիրվում են հարցազրույցի, որն իրականացվում է ԿԳՄՍ նախարարությունում՝ լիազոր մարմնի՝ մարզպետարանների եւ Երեւանի քաղաքապետարանի հետ համատեղ կազմված հանձնաժողովի կողմից: Հարցազրույցի արդյունքում կայացվում է տնօրենի նշանակման որոշումը:

ԿԳՄՍ նախարարի խոսքով՝ ներկայացված զարգացման ծրագրերի միայն 15 տոկոսն է հաղթահարում փորձաքննության դրական շեմը: Հարցազրույցի հրավիրվածների շուրջ 60 տոկոսը չի կարողանում հաղթահարել վերջին փուլը, ինչը նշանակում է, որ կարողությունների զարգացման լուրջ խնդիր կա, եւ այդ ուղղությամբ այժմ ծրագիր է մշակվում:

***Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

# Հաստատվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտորի ընտրության արդյունքը

ՀՀ կառավարության նիստում գործադիրը հաստատել է *«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»* հիմնադրամի ռեկտորի պաշտոնում **Դավիթ Գյուրջինյանի** ընտրության արդյունքները:

Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը՝** ընդգծելով, որ Կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը բխում է *«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին»* օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից: Համաձայն դրա՝ պետական բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորն ընտրվում է բաց մրցույթի կարգով՝ ուսումնական հաստատության խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Ռեկտորի ընտրության արդյունքները հաստատում է հիմնադիրը:

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի կանոնադրության համաձայն՝ համալսարանի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ

կառավարության: Ըստ նույն կանոնադրության՝ ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել ՀՀ գործունակ չափահաս այն քաղաքացին, որն ունի գիտական աստիճան եւ առնվազն հինգ տարվա ակադեմիական եւ գիտական գործունեության ստաժ:

Նախարարը տեղեկացրել է, որ 2024 թվականի մարտի 29-ին տեղի է ունեցել *«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»* հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ, որն ընթացել է՝ ընտրության ընթացակարգին համաձայն: Նիստին մասնակցել է խորհրդի 20 անդամներից 18-ը: Փակ գաղտնի քվեարկությանը մասնակցած խորհրդի 18 անդամների *«կողմ»* քվեարկության արդյունքում բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Դավիթ Գյուրջինյանն ընտրվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտորի պաշտոնում՝ 5 տարի ժամկետով:

*«Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը եւ այն փաստը, որ արդեն շուրջ մեկ տարի Դավիթ Գյուրջինյանն իրականացնում է ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունները եւ այս ընթացքում հաջողությամբ է կատարել այդ աշխատանքները, առաջարկում եմ հաստատել ընտրության արդյունքները»,-* նշել է Ժաննա Անդրեասյանը:

Դավիթ Գյուրջինյանը շնորհակալություն է հայտնել բուհի հոգաբարձուների խորհրդին՝ ի դեմս դրա նախագահ, փոխվարչապետ Տիգրան Խաչատրանի, ինչպես նաեւ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին: *«Այս մեկ տարվա ընթացքում նրանք ինձ աջակցել են՝ բուհը ճգնաժամից դուրս բերելու եւ նոր ծրագրեր իրականացնելու հարցում: Կարծում եմ՝ առաջիկա տարիներին բուհը կվերադառնա իր նախկին կոչմանը, այն է՝ լեզվաբանական եւ լեզվահասարակագիտական կրթությունը, օտար լեզուների ուսուցումը»,-* նշել է Դավիթ Գյուրջինյանը՝ այս հարցում ակնկալելով ՀՀ կառավարության եւ լիազոր մարմնի աջակցությունը:

Շնորհավորելով ռեկտորին՝ ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** նշել է, որ բարձրագույն կրթության ոլորտում առկա է բարեփոխումների հավակնոտ ծրագիր, սակայն անհրաժեշտություն կա նաեւ օբյեկտիվորեն հասկանալու բուհական համակարգի կարիքները, եւ կարեւոր է հենց բուհի ներսից ստանալ շահագրգիռ ուղերձներ: Անդրադառնալով Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գործունեությանը՝ Վարչապետը կարեւորել է պրոֆեսիոնալ թարգմանիչներ պատրաստելու անհրաժեշտությունը, այդ թվում՝ տարածաշրջանային լեզուների:

Կառավարության որոշումով

# Արցախից բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության նպատակով

ՀՀ կառավարության որոշմամբ՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագրի շրջանակում 2024 թվականին ուսուցիչներին լրավճարներ տրամադրելու նպատակով հատկացվել են միջոցներ:

Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը:** Նախարարը հիշեցրել է, որ նախորդ տարվա հոկտեմբերին Կառավարության որոշմամբ հաստատվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրը, որով այդ ուսուցիչներին հնարավորություն է տրվել արտամրցութային կարգով աշխատանքի անցնել մարզային դպրոցներում: Ըստ ծրագրի՝ հանրապետության բոլոր մարզերի դպրոցներում աշխատանքի անցնելիս ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչները կստանան 30 տոկոս հավելավճար 2 տարվա ընթացքում, իսկ որոշ մարզերում՝ Սյունիքի, Վայոց ձորի հանրակրթական ուսհաստատություններում, Գեղարքունիքի մարզի որոշ համայնքներում աշխատանքի անցնելու դեպքում 30 տոկոս հավելավճարից բացի կունենան նաեւ 50 հազար դրամ լրավճար:

*«Բավականին մեծ հետաքրքրություն կա ծրագրի նկատմամբ. այս պահի դրությամբ ծրագրի շրջանակում ունենք ԼՂ-ից բռնի տեղահանված 330 ուսուցիչ, որոնք գործուղվել են մարզեր, եւ դիմողների թիվը գնալով ավելանում է: Զուգահեռ՝ շրջանառում ենք մեկ այլ նախագիծ, որով երկարացվում են դիմումների ընդունման ժամկետները, եւ ուսուցիչները կունենան այս ընթացակարգով աշխատանքի անցնելու հավելյալ հնարավորություն: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ երբ մարդիկ երկարաժամկետ կտրվածքով կողմնորոշվում են բնակավայրի հարցում, նրանք ավելի մեծ պատրաստակամությամբ են օգտվում ուսուցիչների աջակցության ծրագրից»,-* նշել է նախարարը՝ ընդգծելով, որ ընդունված որոշմամբ բաշխվում են անհրաժեշտ միջոցները՝ ըստ մարզերի:

Նշենք, որ ԼՂ ուսուցիչների աջակցության նպատակով ԿԳՄՍ նախարարությունը գործարկել է հարթակ. մարզերի դպրոցների թափուր աշխատատեղերը հրապարակված են https://kadrer.emis.am համակարգում, որտեղ գրացվելով՝ նրանք կարող են գործուղման հայտ ներկայացնել:

Ըստ նախարարի՝ հանրակրթական համակարգում այս պահին ներգրավված է ԼՂ-ից բռնի տեղահանված ավելի քան 500 ուսուցիչ, որոնց մի մասն աշխատում է Երեւանի դպրոցներում կամ ուղղակի մասնակցել է թափուր տեղի համար հայտարարված մրցույթներին եւ ընդհանուր հիմունքներով անցել աշխատանքի:

Ժաննա Անդրեասյանը նաեւ հայտնել է, որ ԼՂ-ից բռնի տեղահանված գրեթե բոլոր երեխաները ներգրավված են հանրակրթական համակարգում. *«Կրթությունից հիմնականում դուրս են մնացել այն երեխաները, որոնց ընտանիքները մի քանի բնակավայր են փոխել: Նման հատուկենտ ահազանգեր կան, որոնցից ամեն մեկի դեպքով մարզերի հետ աշխատել ենք ու հարցին արագ եւ օպերատիվ լուծում տվել»:*

Նախագիծ

# Կստեղծվի Հայաստանի տաղանդների զարգացման հիմնադրամ

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել *«Հայաստանի տաղանդների զարգացման հիմնադրամ»* ստեղծելու, *«Տաղանդների զարգացման ծրագրի»* հայեցակարգը եւ հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Նախագծով առաջարկվում է ստեղծել Տաղանդների զարգացման հիմնադրամ, որի աշխատանքները միտված են լինելու ՀՀ ամբողջ տարածքում մարդկային տաղանդի հայտնաբերմանն ու այդ տաղանդի դրսեւորմանն աջակցելուն՝ ընդհուպ իր տաղանդի առավելագույն դրսեւորմամբ հավելյալ արժեք ստեղծող, ինքնուրույն եւ մրցունակ անհատականությունների ու թիմերի կայացումը: Տաղանդի դրսեւորումը կարող է լինել տարբեր եղանակներով, ներառյալ՝ մտավոր, ստեղծագործական, արտիստիկ, աթլետիկ կամ ձեռնարկատիրական հակումները:

Համաձայն հիմնավորման՝ ՀՀ-ում տաղանդի զարգացումը հիմնականում տեղի է ունենում սեփական նախաձեռնությամբ եւ հնարավորությունների սահմաններում: Բացի այդ՝ ներկայում չկան անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգեր, որոնք հնարավորություն կընձեռեն վաղ տարիքից անհատի հակումներին եւ տաղանդի բացահայտմանը ու դրա դրսեւորմանը եւ առաջխաղացմանը մասնագիտորեն աջակցելուն: Հատկապես՝ գյուղական համայնքներում կամ սահմանամերձ բնակավայրերում տաղանդների դրսեւորումը եւ զարգացումը կարող են ստորադասվել առօրյա գործունեությանը, եւ վաղ տարիքից ցածր արդյունարարությամբ աշխատանքի անցնելը էապես խոչնդոտում է որոշ դեպքերում անգամ բազային կրթություն ստանալուն: Որոշ դեպքերում ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով՝ հնարավոր է, որ անհատի որոշակի առանձնահատուկ ունակություններն անտեսվեն եւ չստանան համապատասխան իրացում: Տաղանդների անտեսումը հնարավոր է նաեւ այն պայմաններում, երբ ոչ բոլոր բնակավայրերում են առկա տարբեր նախասիրությունների զարգացման համար անհրաժեշտ ծառայություններ, ինչպես, օրինակ, արվեստի կամ մարզական խմբակներ, որոնք հնարավորություն են տալիս նկատել երեխաների մոտ այս կամ այն տաղանդի դրսեւորումը:

Հիմնադրամը պետք է իրականացնի իրավիճակի վերլուծություն, առանձնացնի թիրախային խմբերը, յուրաքանչյուր թիրախային խմբի համար մշակի տաղանդի հայտնաբերման գործուն մեխանիզմներ եւ աջակցության մեթոդաբանություն՝ առանցքում պահելով ինքնուրույն եւ մրցունակ անհատի կամ թիմերի ձեւավորումը:

Հայեցակարգի շրջանակում հիմնական շահառուներն են.

*- Հայաստանի Հանրապետությունում գործող կրթական հաստատություններում սովորողները՝ ներառյալ բուհերի ուսանողները,*

*- ֆիզիկական անձինք, որոնք դրսեւորում են բացառիկ ընդունակություններ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ոլորտներից որեւէ մեկում,*

*- թիմերը, որոնց անհրաժեշտ է որոշակի աջակցություն՝ ինքնուրույն գործունեության համար:*

Աջակցությունը կարող է տրամադրվել անհատույց՝ կրթաթոշակի, նյութական աջակցության տեսքով, անտոկոս փոխառության տրամադրմամբ կամ կազմակերպություններում ներդրումների միջոցով:

Հիմնադրամի ֆինանսական միջոցները գոյանալու են ՀՀ բյուջետային հատկացումներից, հիմնադրամի կողմից բաժնետիրական գործունեության արդյունքում գոյացած եկամուտներից, անհատ բարեգործների, ինչպես նաեւ բարեգործական կազմակերպությունների միջոցներից: Հիմնադրամն իր գործունեության ընթացքում պահպանելու է ֆինանսական լիակատար հաշվետվողականություն եւ թափանցիկություն:

Նախագծի վերաբերյալ առաջարկությունները կարելի է ներկայացնել մինչեւ 2024թ. մայիսի 1-ը ներառյալ, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ հետեւյալ հղումով՝ https://www.e-draft.am/projects/7127

***Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

# Հայ մարմնամարզիկները շարունակում են հաղթել

Հայաստանի սպորտային մարմնամարզության հավաքականի անդամ **Վահագն Դավթյանը** հաղթող է ճանաչվել Դոհայում ընթացող սպորտային մարմնամարզության աշխարհի գավաթի խաղարկության 4-րդ փուլի օղակների վարժությունում՝ եզրափակչում հավաքելով 14,833 միավոր: Այս հաղթանակի շնորհիվ՝ Վահագնը Փարիզի 2024 թվականի Օլիմպիական խաղերին մասնակցելու իրավունք է վաստակել:

Աշխարհի գավաթի խաղարկությունում հաղթող է ճանաչվել նաեւ աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն, Տոկիոյի Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր **Արթուր Դավթյանը:** Հենացատկի վարժության եզրափակչում Դավթյանը հավաքել է 15,166 միավոր եւ ոսկե մեդալ նվաճել:

Հայաստանի մյուս ներկայացուցիչ **Արթուր Ավետիսյանը** օղակների վարժությունում գրավել էր 5-րդ տեղը, իսկ **Հարություն Մերդինյանը** 6-րդ արդյունքն էր ցույց տվել նժույգ-թափեր վարժությունում:

Վահագն Դավթյանը նվաճել է Հայաստանի 11-րդ օլիմպիական ուղեգիրը: Մարմնամարզիկներից ավելի վաղ Փարիզի ամառային 33-րդ Օլիմպիական խաղերում իր մասնակցությունն ապահովել էր Արթուր Դավթյանը:

Համո Սահյան - 110

# Վերջին լեռնանցք

***Սկիզբը՝ նախորդ համարում***

*«Ականջդ կանչի»* ժողովրդական խոսքը, որ նաեւ բանաստեղծության վերնագիր է, ստեղծում է իր անդրադարձը՝ *«Անհայտ մի հեռվից մի կանչ է հասնում Լռության փչակ դարձած ականջիս»* եւ գնում ու դառնում կենսապատումի մի նոր էջ՝ որպես արձագանքն այդ *«ականջդ կանչի»* խոսքի.

*Եվ քանի անգամ աշխարհում այսպես*
*Ինձանից փախել ու դարձել եմ ՆԱ,*
*Ու դարձել եմ ԴՈՒ, դարձել՝ ԵՍ ու ՆԱ,*
*Դարձել ԵՍ ու ԴՈՒ...*
*ԵՍ ու ՆԱՆ հաճախ,*
*ԵՍ ու ԴՈՒՆ հաճախ,*
*Եսերն իմ հաճախ, բոլորը հաճախ*
*Հավաքվում գալիս,*
*Մերթ խեղճ ու խոնարհ,*
*մերթ ամբարտավան՝*
*Մեղքերս մեկ–մեկ երեսով տալիս*
*Հետո ամոթով նայում երեսիս*
*Եվ ներշնչվում են*
*Կատարելության հավատով եսիս...*
*Գալիս են նրանք, մերժում են իրար,*
*Փարվում են իրար,*
*հաստատում, հերքում*
*Եվ թափառում են իմ փոքրիկ սրտի*
*Մեծ տիեզերքում...*

Այս նույն տարիքային անցումների *«վեպն»* է *«Թխահեր պատանու, սպիտակ մորուքավորի եւ կանաչ–կարմիր աշխարհի բալլադը»*, նույն կյանքը՝ նույն բնաշխարհի մեջ ու մանկության եզերքին. *«Ուր ոչ մի շուն այնտեղ վրաս չի հաչում Ինձ անգամ չվող հավքն է ճանաչում»:* Ս. Եսենինը կգրեր. *«Տվերյան թաղի շները բոլոր ճանաչում են իմ քայլվածքը մոլոր»:*

Պատմողական դրվագներն ու քնարական ապրումները հաջորդում են իրար, լրացնում միմյանց, եւ հստակորեն տեսնում ես մարդու կյանքի պատմությունն ու հոգու պատմությունը: Կյանքի պատմությունը, որից ինքը երբեմն փախչում է, եւ հոգու պատմությունը, որ բանաստեղծի իր ճակատագիրն է՝ *«Ամառային...»*.

*Ամառային գիշերի մեջ ամեն ինչ*
*Խառնվել է... Չեմ տարբերում*
*լեռ ու լիճ:*

*Երկնքի մեջ քարափներն են*
*հորանջում,*
*Եվ աստղերն են ձորերն ի վար*
*ղողանջում:*

*Երկինքն իջել, մեջքը տվել է հովտին,*
*Փոխս են ընկել տիեզերքն*
*ու իմ հոգին:*

Որերորդ անգամ լինելով՝ Սահյանն անդրադառնում է այն, թվում է թե, ավարտված, բայց դեռեւս չմարող բանավեճին, ճշտում այն հարցի պատասխանը, թե ի՞նչ է գտել իր լեռներում: Պատասխանը նույնն է, բայց ոչ թե որպես ասածի կրկնություն, այլ իմաստի լրացում, ըստ որի՝ նա գտել է իր ակունքներն ու տոհմածառի արմատները եւ այդտեղի ամենաջինջ աղբյուրներով կարող է *«Լվանալ ու պարզաջրել Ապականված մի ողջ աշխարհ»* եւ ապրում է այդ կյանքը. *«Ամեն տիտղոս ու պարգեւից, Ամեն դիրքից ամաչելով <...> Երգ երգելու հրճվանք կոչված Տառապանքին ինձ խաչելով»* (*«Ի՞նչ ես գտել»*): Եվ նորից նույնը. *«Իմ սար ու ձորից ձեռ չեմ քաշելու <...> Եվ արձագանքն եմ նրանց լռության <...> Կածանը՝ տողն իմ կենսագրության»* (*«Իմ սար ու ձորից»*): Այս ամենը խտանում եւ դառնում է ժողովածուի վերնագիրը իմաստավորող տողի նմանությամբ ծնված առաջին բանաստեղծությունը՝ *«Սարեր...»*.

*Սարեր, ես ձեր երգիչն էի,*
*Ձեր խղճի կանչն ու խիճն էի...*
*Ես ձոր կիջնեմ, ժամն է էլի,*
*Իսկ դուք երկինք թռեք:*

*Ականջ արեք վերջին անգամ,*
*Մի սպասեք, թե ես կգամ,*
*Ձեր երթի մեջ արդեն չկամ,*
*Ինձ բացակա դրեք:*

*Ինձ որձաքար մի ծանրադիր,*
*Ինձ տապան ու տապանագիր,*
*Հողիս վրա՝ կանաչ–կարմիր*
*Ձեր փեշերը փռեք:*

*Ինչ որ բաժին դարձրի ջրի,*
*Ինչ որ տողեր չդարձրի,*
*Ինչ որ գրել չհասցրի,*
*Իմ փոխարեն գրեք:*

Հրաժեշտի զգացողությունն այս գրքի՝ մի դեպքում՝ *«տնական»*, մյուս դեպքում՝ *«տոնական»* թախիծը փոխում է մահվան աչքերին առանց խուսափելու ուղիղ նայելու ճակատագրական անհրաժեշտության: *«Ի՞նչ երաշխիք, ի՞նչ իմանամ՝ Կապրե՞մ մինչեւ եկող մայիս...»* (*«Լինեմ վկան»*), — ներքնատեսության այս հոգեբանական վիճակն անգամ կենսաբանական ճշգրտություն ունեցավ: Մարդ ու բնություն հարաբերությունից նա անընդհատ անցում է կատարում դեպի բանաստեղծ լինելու եւ որպես բանաստեղծ աշխարհում իր ներկայությունն ունենալու նախապայմանին: Հարաբերության եզրն այս անգամ ոգու աշխարհն է՝ բանաստեղծական անունների անդրադարձով՝ *«Ճակատիդ...»*.

*Ճակատիդ այդպես էր գրված,*
*Ոչ տխրիր եւ ոչ էլ լացիր...*
*Ոչ Բորիս Պաստերնակ եղար,*
*Ոչ էլ Սերգեյ Եսենին:*
*Շշուկդ հեռուն չգնաց,*
*Շատերին անհայտ մնացիր,*
*Ինչպես որ քարի մեջ խրված*
*Քո երկրի խոնարհ մասրենին...*

Ինքնաճանաչողության այս պահը շատ նման է Ե. Չարենցի մի խոստովանությանը՝ *«Կես–գիշերային էսքիզ. XVI»*.

*Քայլի՛ր, քայլի՛ր քո ճանապարհով.*
*Դու ո՛չ Գյոթե ես, ոչ Վերհարեն.*
*...Դու լոկ Չարենց ես, միայն Չարենց՝*
*..... ու վարանոտ...*

Համանման մի ինքնաճշտում–խոստովանություն արել է նաեւ Թ. Ս. Էլիոթը *«Մեռյալ երկիր»* պոեմում. *«Ո՛չ, ես իշխան Համլետը չեմ, ոչ էլ կարող էի լինել»:*

Իսկ հիմքը Լերմոնտովի հայտնի տողն է. *«Ո՛չ, ես Բայրոն չեմ, Ուրի՛շ եմ ես...»:* Այս *«ուրի՛շն»* է, որ դառնում է գրական նոր անհատականություն եւ նոր հեղինակություն: Նույնը Հ. Սահյանի դեպքում՝ այս անգամ նաեւ լսարանի փոքրության, այդ իսկ պատճառով՝ *«Շատերին անհայտ մնալու»* ծանր զգացումով:

Ինքնաորոնումն ու ինքնաճշտումը Սահյանին հասցնում են բանաստեղծի



հայտնությանը, իր ծնունդին, իր ինքնածնունդին՝ որպես ստեղծագործող՝ *«Ես քար ու քերծ էի»*.

*Վերջին աստղը քնում,*
*Ես արթնանում էի,*
*Կիսատ երազն առնում,*
*Հետս տանում էի:*
*Դաշտերն էի տանում...*
*...Քարն ու քերծը՝ մարդիկ,*
*Ես քար ու քերծ էի,*
*Բոլորի հետ մոտիկ,*
*Բոլորին մերձ էի...*
*...Երբ քար ու քերծ՝ մարդիկ,*
*Ես քար ու քերծ էի,*
*Այն ժամանակ արդեն*
*Ես բանաստեղծ էի:*

Բանաստեղծի ինքնաճանաչումն իր սկիզբի ու վերջի մեջ է միաժամանակ: Աչքը որսաց բնության կենդանի կերպարը՝ բանաստեղծ է: Բանաստեղծ է ամբողջ կյանքում, եւ այդ բանաստեղծի ինքնաբնութագրությունն այս է. *«Ես խղճի շշուկն եմ իմ ցեղի»* (*«Ինձ մարել...»*): Եվ սա է երջանկությունը, ավելին ի՞նչ պիտի երազի ստեղծագործող անհատը, երբ փառքն ու գանձը մերժել է ի սկզբանե՝ *«Եթե գտնում ես...»*.

*Աստված, քեզանից էլ բան*
*չեմ խնդրում,*
*Թեկուզ սովից ու ցրտից հալածված,*
*Ես բանաստեղծի բախտն եմ*
*նախընտրում:*

Այդպես է, որովհետեւ. *«Ինչ է ծնունդը բանաստեղծության...Հավիտենությունն ապրելու մի պահ...»* (*«Ձեր ինչի՞ն է պետք»*): Այսպես քանի՞ հավիտենություն է ապրել Հ. Սահյանը:

Սահյանը նաեւ իր բանաստեղծական ճակատագրի մասին է պատմում: Մի կողմից բաց է եղել *«միջակության գամփռերի»* երախը, որ հոշոտեն նրան եւ նրա նմաններ-ին. *«Հոտը չե՞ք առել հերթական զոհի»* (*«Թե ունենայիք»*), մյուս կողմից ցավով է հիշում իր սերնդակից բանաստեղծներին, քանզի. *«Նույն վերքն է մխում մեր կրծքի տակ, Բայց իրար ցավից չենք հառաչում»* (*«Բանաստեղծներին իմ սերնդակից»*), եւ երրորդ կողմից իրենով ուրվագծվում է բանաստեղծի կայացումն այդ միջավայրի մեջ. *«Մենք ուշ աճում ենք, վաղ՝ հասունանում»*, իսկ *«Հասունանալը վախճանն է հասկի»* (*«Ես դառնացած եմ...»*):

Բնության մեջ՝ նայած տարին երաշտ է, թե ջրարբի, բույսը կարգավորում է իր կյանքը. եթե տարին երաշտ է, շուտ է հասունանում, որպեսզի սերմը պահ տա հողին: Հ. Սահյանի ասածն այդ է. աճը երկար է տեւում, որովհետեւ ուշացած է, իսկ հասունացումն՝ արագ, որովհետեւ հանրային կյանքում ոչ թե երաշտ, այլ չարություն ու նախանձ է, ավելին, քան երաշտը, որ մարդ կսպանի:

Բանաստեղծի եւ մարդու ճակատագիրը Սահյանի վերջին գրքի առանցքային գիծն է: Ինքն է ու իր գործը, ինքն է ու իր կյանքի ժամանակը, ինքն է ու իր միջավայրը, ավելի լայն՝ ինքն է ու աշխարհը: Աշխարհին հրաժեշտ տալու զգացողությունն է՛լ ավելի է հստակեցնում ամեն ինչ. կա ե՛ւ ներում, ե՛ւ ինքնաբաշխում, ե՛ւ ինքնաճանաչում, բայցեւ այդ ամենի մշտական ուղեկիցն է իրատեսությունը՝ *«Հերկս թողնում են...»*.

*Հերկս թողնում են, բերքս տանում,*
*Լավ է, որ հերկս խլող չկա:*
*Մեղքս թողնում են, խելքս տանում,*
*Ո՞ւմ է պետք, մեղքս խլող չկա:*
*...Ուրիշ ի՞նչ տեսակ մի փորձ անեմ,*
*Որ ոմանց պատվին ինձ կործանեմ:*

Այս տագնապների մեջ, երբ բանաստեղծն արդեն խրտնում է իր *«խոնարհ ձայնից»*, վերստին ինքնաճշտման անհրաժեշտություն է առաջանում, որովհետեւ նորից խախտվում է գտնված ամբողջությունը՝ *«Ի՞նչն է հոգիս...»*.

*Ի՞նչն է հոգիս այսքան բեկել,*
*Որ իմ խորքից դուրս եմ եկել,*
*Խրտնել եմ իմ խոնարհ ձայնից*
*Ու փախել եմ ես ինձանից,*
*Ու կորել եմ անհայտ հեռվում,*
*Որտեղ այս էլ քանի տարի*
*Քացի տալով հազար քարի,*
*Ոչ ապրում եմ, ոչ էլ մեռնում...*
*Անձրեւի տակ ու կարկուտի,*
*Ստվերներում մայրամուտի*
*Եվ գիշերվա թանձր մթնում*
*Փնտրում եմ ինձ ու չեմ գտնում:*

Չի գտնում, որովհետեւ խախտվում է հավասարակշռության մյուս բեւեռը՝ հանրային կյանքը: Բնության հետ ամեն ինչ ճշտված է, բայց ահա հանրային կյանքը շարունակում է այնպիսի վիճակներ ստեղծել, երբ *«Ձոկել չի լինում էլ ճիշտը ստից»*, երբ կյանքի տերը դարձել է մի *«տիրական անտերություն»* (*«Գլուխ չեմ հանում»*), երբ *«Ամպերը գալիս ձորերն են մտնում, Ու ձորերի հետ ես էլ եմ մթնում»* (*«Ամպերը գալիս...»*): Այս ամենը հասունացնում է մի հռետորական հարցում. *«Ուր է տանում հոգնած Հոբիդ Քանդուքարափ եղած հոգիդ»* («Ո՞ւր է տանում»): Քանի կար խաչված Քրիստոս էր, հիմա էլ դարձավ Հոբ Երանելի՝ ամեն մեկը մի ճակատագիր, բայց բազում ճակատագրերի խորհրդանշան: Սա նշանակում է, որ չքմեղանալու պահ չէ: Աշխարհի մեղքը եթե կա, յուրաքանչյուր ոք մեղավոր է: Մեղքի գիտակցման եւ խոստովանության ոգին խորքից միշտ էլ առկա է Սահյանի պոեզիայում: Նախ՝ առկա է հան-րույթի եւ հանրույթի մեջ յուրաքանչյուրի փոխադարձ կապի պարզ պատկերը՝ *«Քչանում ենք»*.

*Աշխարհը փուչ... փուչ աշխարհում*
*Այսքան փուչ ու փշերի մեջ,*
*Ի՞նչ իմանաս, մենք էլ գուցե,*
*Ինչ–որ չափով փչանում ենք:*

***շարունակությունը էջ 15***

# Վերջին լեռնանցք

*սկիզբը՝ էջ 14*

Այս դեպքում արդեն Սահյանը հենակետ է գտնում Նարեկացու *«Մատյան ողբերգության»* գրքի եւ իր իսկ՝ Նարեկացու կերպարի մեջ: Անընդհատ մեղքի գիտակցումն ուղեկցում է նրան: Ընդ որում, պարտադիր չէ, որ այդ մեղքը ինքը գործած լինի, իր չգործած մեղքն էլ իրենն է, որ ամեն կերպ փորձում է խոստովանել՝ ազատագրվել, մաքրագործվել, հոգու լույսը չստվերել: Այդ մեղքը նրա համար բազմաթիվ ձեւեր ունի, որոնցից մեկն էլ իր ավելորդության, կյանքում իր քիչ տվածի գիտակցումն է՝ *«Կյանքս...»*.

*Կյանքս շատ երկարեց...*
*Բայց այնքան էր բարակ,*
*Որ չշարժեց անգամ մի ջրաղաց...*
*Պոչը սարում... գլուխն*
*ավազներին տարավ,*
*Եվ նրա մեջ ոչ մի ձուկ չխաղաց:*
*Գետ էր, ասենք, մեղքը*
*ինքն իր վրա առավ,*
*Որ ինձ լքեց, այսպես, դեռ չթաղած:*
*Եղանակն էլ, տեսեք,*
*փորձեց փոխվել արագ,*
*Որ չասեն, թե ինքն էր հիմքը մեղաց:*

Սահյանը շատ խորքից գիտակցում էր նաեւ մեր իրականությանը բնորոշ մի դառը ճշմարտություն. *«Լրիվ մաքրված մարդուն կամ խաղից դուրս կդնեն, կամ՝ կսպանեն»* (Խոսում է Համո Սահյանը, էջ 57): Ա՛յս է մեր բարոյականության բարձրագույն օրենքը, ինչն է՛լ ավելի արատավոր դրսեւորումներ ունեցավ ժողովրդավարական համարվող ժամանակներում: Այն-պես որ, մեղքի ու անմեղության հաճախանքը որքան անհատի ներսում է, նույնքան եւ ավելի հանրույթն է որոշում:

Մեղքի ու անմեղության, արդարի ու անարդարի, ճիշտի ու սխալի այս վեճ ու կռիվն էլ դադար ունի: Եվ այդ դադարն այս է. *«Երբ որ թրջված արտույտների Թառ է դառնում ծիածանը, Եվ ծաղկում է առվույտն էլի, Դու ինչպե՞ս ես նստում տանը»* (*«Խրատում է»*): Բնությունը խրատում է եւ ասում՝ մի՛ սրտնեղիր, գնա՛ ինքնանորոգ հավիտենության գիրկը եւ տե՛ս աշխարհի հրաշքը: Այդ հրաշքներից մեկը *«Ծառը»* բանաստեղծությունն է՝ բնության ձեւերի ու անցումների մի խորհրդավոր արարչագործություն.

*Օրը գալիս է մայրամուտ դառնում,*
*Ստվերներն էլի երես են առնում:*
*Ծառի ստվերը ընկնում է ժայռին,*
*Ժայռը այնպես է նմանվում ծառին*
*Եվ այնքան թանձր է տերեւակալում,*
*Որ իրեն ծառ է երեւակայում:*

Նույն արարչական փոխակերպումներն են նաեւ *«Կածան»* բանաստեղծության մեջ, ուր բնության փոխակերպումներին ավելանում են մարդկային սերունդների ժառանգորդական տեղաշարժերը: Նույն կածանը, որի ճամփորդն է ինքը, հիշում է նաեւ իր նախապապին, որը *«Ծաղիկ կդարձներ կայծակն ամպերում»*, ուստի կածանի համար մեկ է. *«...նա դու ես, դու՝ նա, Եվ ես նրանից քեզ չեմ տարբերում<:* Այս դեպքում կածանն է դառնում հավերժության ներկայացուցիչը: Այդ իսկ պատճառով՝ *«Կենսագրություն ես չեմ գրելու, Ապրած իմ կյանքն էլ պատմիր դու, կածան, Ինձանից հետո աշխարհ եկողին»*:



Այս վերջին գրքում, ինչպես բազմիցս ակնարկեցինք, աստիճանաբար խորանում, խոհի ու պատկերի տարբեր վտակներից հունավորվում է վերջի, ամենավերջի, անդառնալիորեն հավիտենության մեջ անէանալու զգացողությունը, որը մահն է: Որքան էլ մահից անդին անմահությունն է՝ որպես իրական ու անիրական զգայախաբություն, որքան էլ մահից այն կողմ հուշն է ու հիշատակը, այդուամենայնիվ Սահյանը լուսավոր օրհներգի է վերածում մահը՝ իրեն տեսնելով հավերժական ժամանակի հավերժական շրջապտույտի մեջ:

Գիրքը եզրափակվում է հրաշալի մի բանաստեղծությամբ, որի մեջ կրկնաբանվում է *«Ինձ բացակա չդնեք»* հանգերգը: Մեկ խոսքով՝ բանաստեղծությունների մեջ Հ. Սահյանն իր մահն է ապրել՝ *«Ի՞նչ հոգեհանգիստ ու ի՞նչ հոգեհաց»*, *«Հավքի հետ էիր թեւ առած թռչում»*, *«Խելոք–խելոք, բարի–բարի»*, *«Չծերանայինք...»* եւ այլն: Ինքնահիրա-ժեշտի տխուր պատարագ, լաց լռության ու մենության մեջ, ինքն իր մեջ, որպեսզի ոչ ոք չտեսնի: Այդ ամենն ամփոփող մի հուզիչ սգերգ, որ նույն պատարագի շարունակությունն է, բայց առանց ողբ ու հառաչի, այնպես, ինչպես վերջին շնչում մարում է մեռնող մարմինը՝ հավերժության մեջ ամփոփվելու համար.

*Ձեր լռությունը զնգում,*
*Զրնգում է ծորով մեկ,*
*Ձեր լռության համերգում*
*Ինձ բացակա չդնեք:*

*...Ես եմ քարե պատարագ,*
*Ձեզնից սերված, ընդունեք,*
*Դուք, ձեր կամքին հակառակ,*
*Ինձ բացակա չդնեք:*

*Ոչ խոստումներ, ոչ երդում,*
*Ցսպասեք ու չքննեք...*
*Անվերջ, անշարժ ձեր երթում*
*Ինձ բացակա չդնեք:*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտությունների***
***դոկտոր, պրոֆեսոր***

# Դպրոցական միջոցառումներ

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը** *«Նարեկացի»* արվեստի միությունում ներկա է եղել *«Առ քո թեւերին, տար ինձ ժամանակ»* խորագրով գրական ցերեկույթին՝ նվիրված Համո Սահյանի ծննդյան 110-ամյա հոբելյանին:

Սահյանաշունչ օրվա մտահղացումը կյանքի էր կոչվել Երեւանի հ. 185 եւ Մ. Մեծարենցի անվան հ. 146 հիմնական դպրոցների համատեղ նախաձեռնությամբ: Միջոցառմանը մասնակցել են երկու դպրոցների 50 աշակերտներ՝ ներկայացնելով սահյանական պոեզիան:

Միջոցառմանը ներկա են եղել նաեւ Երեւանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի, հանրակրթական դպրոցների ներկայացուցիչներ, Համո Սահյանի որդին:

Ողջունելով ներկաներին՝ Արաքսիա Սվաջյանը շնորհակալություն է հայտնել նախաձեռնության եւ դպրոցների միջեւ ձեւավորված գեղեցիկ համագործակցության համար՝ ընդգծելով, որ նախարարությունը խրախուսում է դպրոցների միջեւ փորձի փոխանակումը եւ համատեղ նախագծերի իրականացումը, ինչը հանրակրթության նոր չափորոշչի պահանջներից է:

*«Համոզված եմ, որ Համո Սահյանի անկրկնելի պոեզիայի շուրջ ստեղծված բարեկամությունն ամուր հիմքեր ունի, որը կարող է նոր դրսեւորումներ ստանալ՝ իր շուրջը համախմբելով դպրոցականներին, ուսուցիչներին, գրականության եւ այլ ոլորտի ներկայացուցիչներին»*,- ասել է Արաքսիա Սվաջյանը:

Միջոցառման ընթացքում մեծանուն բանաստեղծի մասին հուշեր է պատմել նրա որդին՝ **Նաիրի Սահյանը:**

*«Հայրս համեստ ու հասարակ մարդ էր, միշտ ասում էր՝ «Ոնց գյուղացի եղել եմ, այդպես էլ կամ», ու պարծենում էր դրանով: Բայց, միեւնույն ժամանակ, նրա ամեն ինչն էր տպավորիչ: Նրա ամեն խոսքը գնում, հասնում էր մինչեւ տիեզերք: Նրա հավերժական սերերն էին Հայրենիքը, բնությունը եւ մայրը»*,- ասել է Նաիրի Սահյանը՝ շնորհակալություն հայտնելով միջոցառման կազմակերպիչներին:

Միջոցառման ավարտին հյուրերը գրքեր են նվիրել դպրոցների գրադարաններին եւ հույս հայտնել, որ լավագույն փորձի տարածմանը նպաստող նախաձեռնությունները կլինեն շարունակական:

* * *

Երեւանի Վ.Համբարձումյանի անվան հ. 12 հիմնական դպրոցում կայացած *«Կգամ»* խորագրով միջոցառումը եւս նվիրված էր Համո Սահյանի ծննդյան 110-ամյակին: Միջոցառումը կազմակերպել էր դպրոցի հայոց լեզվի եւ գրականության շնորհաշատ ուսուցչուհի **Ռիմա Երիցյանը:**

Գրական-երաժշտական ցերեկույթը սկսվեց դպրոցի՝ սահյանասեր ուսուցիչների ասմունքով եւ երգեցողությամբ: Այնուհետեւ բեմ բարձրացան 7-րդ *«գ»* դասարանի՝ արդեն թատերական հմտություններ ձեռք բերած աշակերտները: Ներկայացվեցին մեծ բանաստեղծի կյանքի եւ ստեղծագործության նշանակալի մի քանի դրվագներ:

Միջոցառման առիթով դպրոց ժամանած հյուրերի թվում էին Համո Սահյանի որդին՝ **Նաիրի Սահյանը,** Երեւանի քաղաքապետարանի եւ Շենգավիթի թաղապետարանի ներկայացուցիչներ, բազմաթիվ մրցույթների դափնեկիր, վաստակավոր արտիստուհի **Սվետլանա Երիցյանը**, երգիչ-երգահան **Արթուր Խաչենցը,** ում կատարումներով էլ եզրափակվեց ցերեկույթը:

Նաիրի Սահյանը, շնորհակալություն հայտնելով միջոցառման մասնակիցներին, դպրոցին պարգեւատրեց *«Համո Սահյան»* հուշամեդալով:

Ճանաչի՛ր, որ սիրես

# Արագածոտնի մարզի նշանավոր վանքերն ու եկեղեցիները

ՀՀ Արագածոտնի մարզը կազմավորվել է 1995 թվականին: Մարզն իր անունը ստացել է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի անունից: Արագածոտնի մարզը ներառում է Արագածի, Աշտարակի, Ապարանի եւ Թալինի նախկին վարչական շրջանները: Մարզի տարածքը շուրջ 2753 քառ. կմ է եւ կազմում է ՀՀ տարածքի շուրջ 9,3 %-ը: Մարզկենտրոնն է Աշտարակ քաղաքը: Մարզն ունի երեք քաղաքային (1. Աշտարակ, 2. Ապարան, 3. Թալին) եւ 111 գյուղական համայնք: Մարզի տարածքում է գտնվում ՀՀ ամենաբարձր լեռնագագաթը՝ Արագածը, որն ունի ծովի մակարդակից 4096 մ բարձրություն:

Արագածոտնի մարզը սահմանակցում է Շիրակի, Լոռու, Կոտայքի, Արմավիրի մարզերին եւ մայրաքաղաք Երեւանին, իսկ արեւմուտքում՝ Թուրքիայի Հանրապետությանը:

Արագածոտնի մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որոնք վերաբերում են մարդկության պատմության գրեթե բոլոր ժամանակաշրջաններին:

## Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի

Օշական գյուղը գտնվում է Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանում՝ մարզկենտրոն Աշտարակ քաղաքից մոտ 6 կմ հարավ-արեւմուտք, Երեւանից 25 կմ հեռավորությամբ: Օշականի մուտքի մոտ սգ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600–ամյակի առթիվ կանգնեցված է հուշարձան (1962 թ., ճարտարապետ՝ Ջիմ Թորոսյան). այն իրենից ներկայացնում է բացված գրքի նմանվող երկու հուշասալեր, որոնցից ձախակողմյանի վրա քանդակված է հայոց այբուբենը:

Օշականի կենտրոնում է գտնվում հայոց ամենանշանավոր սրբերից մեկի՝ սուրբ Մեսրոպ Մաշտոցի դամբարանը: Երբ 440 թ. փետրվարի 17–ին մայրաքաղաք Վաղարշապատում մահանում է հայոց գրերի ստեղծող սուրբ Մեսրոպ Մաշտոցը, իր աշակերտ, հազարապետ Վահան Ամատունին սրբի մարմինը տանում եւ ամփոփում է Ամատունիների կալվածքում՝ Օշական գյուղում: Մոտ 443 թ. Մաշտոցի դամբարանի վրա Վահան Ամատունին կառուցում է գմբեթավոր եկեղեցի:

Հետագայում եկեղեցին բազմիցս ենթարկվել է ավերածությունների, սակայն կրկին ու կրկին վերաշինվել-վերանորոգվել է: Այն իր ներկայիս տեսքով վերակառուցվել է 1873–1879 թթ. եւ 1879 թ. հոկտեմբերի 21–ին օծվել:

1960–1964 թթ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա. Պալճյանի հոգածությամբ եւ բարերարների օժանդակությամբ՝ բարեկարգվել է եկեղեցու շրջակայքը, նորոգվել են Մեսրոպ Մաշտոցի դամբարանը եւ եկեղեցին, մեսրոպյան այբուբենի երկաթագիր տառերով քանդակազարդ կոթող է պատրաստվել, որը դրվել է դամբարանի արեւելյան խորշում (ճարտարապետ՝ Բ. Արզումանյան):

Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու տարածքը բարեգործական միջոցների հաշվին 2000 թ. բարեկարգվել է:

Յուրաքանչյուր հայ, աշխարհի որ ծագում էլ նա ապրի, իր հոգու պարտքն է համարում գոնե մեկ անգամ ուխտի գալ Սուրբ էջմիածին եւ Օշական:

Շատ առաջին դասարանցիներ ամեն տարի սեպտեմբերին այցելում են Օշական, Մաշտոցի շիրիմի մոտ հանդիսավոր երդում են տալիս՝ խոստանալով լավ սովորել եւ անաղարտ պահել ու պահպանել մեր մեծասքանչ, ոսկեղենիկ մայրենի լեզուն:

Գյուղից հյուսիս-արեւելք՝ *«Մանկանոց»* կոչվող վայրում, կանգուն է Սուրբ Սիոն եկեղեցին (VII դ.): Օշականում կանգուն է վաղ միջնադարյան ինքնատիպ կոթող (VI–VII դդ.), որն ավանդաբար համարվում է Մորիկ կայսեր կամ նրա մոր գերեզմանաքարը: Գյուղում եւ շրջակայքում պահպանվել են Սուրբ Թադեոս առաքյալ, Սուրբ Գրիգոր, Սուրբ Սարգիս, վիմափոր Սուրբ Աստվածածին, Թուխ Մանուկ մատուռները (XIII դ.):

* * *

Հնավանդ ավանդազրույցի համաձայն՝ Նոյ Նահապետն ու իր ընտանիքը Մասիսի գագաթին նստած տապանում անհամբեր սպասում էին ջրերի իջնելուն եւ ցամաքի երեւալուն: Որոշ ժամանակ անց նրանք տեսնում են Արագած եւ Արայի լեռնագագաթները, ապա ստորոտը, սակայն դաշտը տակավին ծածկված էր ջրով, հետեւապես չէին համարձակվում փոփոխել իրենց վիճակը եւ դուրս գալ տապանից: Մի քանի օր անց կրկին դուրս նայելով տապանի պատուհանից՝ տեսնում են ջրից ազատված Օշականի սքանչելի վայրերը եւ ծիրանափայլ չեչաքարերի բլուրը, որ մինչ օրս բոսորափայլ երանգում է գյուղը, ապա զվարճացած բացականչում են. *«Օ՜շ ական, օ՜շ ական... »* Այսինքն՝ *«Երանի՝ մեր աչքերին, որ տեսանք սա եւս ջրից ազատված»:*

* * *

Իսկ Օշականի հանրահայտ Կաթնաղբյուրի անվան առաջացման մասին պատմում են հետեւյալ ավանդությունը. երբ 440 թ. Վաղարշապատում վախճանվում է սուրբ Մեսրոպ Մաշտոցը, իր աշակերտ եւ Հայոց հազարապետ Վահան Ամատունին համաձայնություն է ստանում իր հայրենի կալվածք Օշական գյուղում ամփոփելու պաշտելի ուսուցչի աճյունը: Վաղարշապատից Օշական շարժվող հուղարկավորների թափորը Ճանապարհին, երկար քայլելուց ու ծարավից նեղվելով, դագաղը իջեցնում է գետնին՝ մի փոքր հանգստանալու, ապա ճանապարհը շարունակելու: Հանկարծ հրաշքով պատռվում է այնտեղ ընկած քարը եւ միջից սկսում է զուլալ ու կաթնահամ աղբյուր բխել: Բոլոր հուղարկավորները խմում են այդ անուշահամ ջրից, հագեցնում ծարավը: Հրաշածին աղբյուրը ստանում է Կաթնաղբյուր անունը:

## Ամբերդի Սուրբ Աստվածածին եկեղեցի



Արագածոտնի մարզի նշանավոր սրբավայրերից է Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը գտնվում է Ամբերդի համալիրում՝ ծովի մակարդակից շուրջ 2300 մ բարձրության վրա: Ամբերդ ամրոցը գտնվում է Երեւանից մոտ 65 կմ հյուսիս-արեւմուտք, իսկ Բյուրականից մոտ 7 կմ հեռավորության վրա: Ամրոցը կառուցվել է Ամբերդ եւ Արքաշեն (Արխաշան) գետերի միախառնման վայրում գտնվող եռանկյունաձեւ հրվանդանի վրա: Համալիրը ներառում է ամրոցից պահպանված պարսպամասերը, դղյակը, դղյակի մուտքը, Արքաշենի եւ Ամբերդաձորի դարպասները, մատուռը, ձիթհանը, խմելու ջրի ցանցն ու ջրամբարները, բաղնիքը եւ Վահրամաշեն Սուրբ Աստվածածին (Կաթողիկե) եկեղեցին, ինչպես նաեւ արտաքին պաշտպանական կառույցներ եւ դեպի կիրճ տանող սալարկված գաղտնուղին:

Որոշ աղբյուրների համաձայն՝ դղյակը եւ պարսպամասերի մի մասը կառուցել են ամրոցի տեր Կամսարական իշխանները (VII դ.): Հետագայում (X դ. սկիզբ) բերդն անցել է նշանավոր Պահլավունի իշխանների ձեռքը:

Պահլավունի իշխանների նստավայր դարձած Ամբերդում նշանավոր պետական եւ ռազմական գործիչ (980–1020 թթ.՝ Իշխանաց իշխան, 1020–1045 թթ.՝ Հայոց սպարապետ), իշխան Վահրամ Պահլավունին 1026 թ. կառուցել է Սուրբ Աստվածածին եկեղեցին, որի կառուցման մասին վկայում է հյուսիսային մուտքին պահպանված արձանագրությունը:

Եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն է, ներքուստ՝ խաչաձեւ հատակագծով, հովհարաձեւ վեղարով կենտրոնագմբեթ կառույց է:

*շարունակությունը էջ 17*

# Արագածոտնի մարզի նշանավոր վանքերն ու եկեղեցիները

*սկիզբը՝ էջ 16*

Ամբերդի եկեղեցին Հայաստանում այն առաջին եկեղեցիներից է, որոնց խաչաթեւերի չորս անկյուններում կառուցված են կրկնահարկ ավանդատներ: Ավանդատների անկյուններից բարձրացող կամարներն իրենց վրա կրում են 12-նիստանի թմբուկը: Եկեղեցին համաչափ է, ունի զուսպ արտաքին հարդարանք եւ ներդաշնակում է շրջապատին: Հարավային կողմում գտնվում է հոյաշեն սյունափնջերով զարդարված կամարակապ մուտքը:

Եկեղեցու շրջակայքում կան խաչքարեր: Դրանցից մեկը հենված է եկեղեցու պատին, ունի պարզ հորինվածք եւ խաչքարային արվեստի վաղ ու սիրուն օրինակներից է. այն ստեղծվել է եկեղեցու կառուցումից շատ տարիներ առաջ: Խաչի ներքեւում փորագրված է հստակ ուրվագծվող, բայց համեստ Կենաց ծառը՝ չորս զույգ օղակներով:

## Աշտարակի Սուրբ Աստվածածին (Ծիրանավոր) եկեղեցի

ՀՀ Արագածոտնի մարզկենտրոն Աշտարակ քաղաքը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1130 մ բարձրության վրա՝ Քասաղ գետի երկու ափերի ընդարձակ հարթության վրա, քաղաքամայր Երեւանից մոտ 22 կմ հեռավորության վրա: Հնում մտել է Մեծ Հայքի Այրարատա շխարհի Արագածոտն գավառի մեջ: Լինելով հին բնակատեղի՝ Աշտարակը հարուստ է պատմաճարտարապետական արժեքավոր կոթողներով:

Աշտարակի այն մասում, որը նախկինում անվանվել է ամրոցային, կանգնած է այստեղի ամենահին եկեղեցին՝ Ծիրանավորը: Այն կառուցել է Ներսես Բ. Բագրեւանդցի կաթողիկոսը (548–557 թթ.):

Ծիրանավորը (Սուրբ Աստվածածին) ուղղանկյուն հատակագծով, պայտաձեւ խորանով, նրանից աջ ու ձախ երկու ավանդատներով, թաղածածկ եռանավ բազիլիկ է: Հետագա դարերում հյուսիսային եւ արեւմտյան պատերը կրկնակել են, հարավից ավելացրել հրակնատներ եւ օգտագործել որպես ամրոց: Պահպանվել են որմերը, խորանը՝ սենյակներով եւ հարավային նավը: Ներքուստ նշմարելի են արեւմտյան զույգ լուսամուտները: Արեւելյան ճակատին կան ատամնաշար քիվի մնացորդներ:

Հին բազիլիկը շրջապատված է եղել պարիսպներով, որոնք շինությանը հաղորդել էին դղյակի տեսք: Գտնվելով Քասաղ գետի ձորեզրին՝ այն կատարել է նաեւ պատշտպանողական կառույցի դեր, այդ պատճառով էլ անվանվել է նաեւ Փոկաբերդ:

1827 թ. երկրաշարժից եկեղեցին զգալիորեն տուժել է, փլուզվել են տանիքը, հյուսիսային կողմի մույթերը: 1962 թ. փլատակների մաքրման եւ ամրակայման աշխատանքներ են կատարվել, իսկ 1988 թ. կազմակերպվել են պեղումներ, հեռացվել է արեւմտյան ճակատի կրկնապատը, հայտնաբերվել Գագիկ Ա. Բագրատունի արքայի (990-1020 թթ.) թողած արձանագրությունը (1013 թ.):

* * *

Հինավուրց ավանդազրույցը մեզ է փոխանցում մի տխուր հուշ՝ կապված Աշտարակ քաղաքի երեք եկեղեցիների՝ Ծիրանավորի, Կարմրավորի ու Սպիտակավորի կառուցման մասին:

Անհիշելի ժամանակներում Աշտարակում ապրող երեք գեղանի քույրեր սիրահարվում են Սարգիս անունով մի երիտասարդի: Քանի որ քույրերն այնքան էին իրար սիրում եւ այնքան կապված էին միմյանց, որ նույնիսկ մի աննշան, չնչին գաղտնիք չունեին միմյանցից, իմանում են, որ իրենք՝ երեք քույրերն էլ սիրահարվել են Սարգսին: Ավագ երկու քույրերը որոշում են իրենց զոհաբերել, միայն թե կրտսեր քրոջը երջանկություն պարգեւեն: Կրտսեր քրոջ սիրո ճանապարհն անխոչընդոտ դարձնելու համար ավագ քույրերը ծիրանագույն ու կարմիր զգեստ են հագնում եւ իրենց նետում են Քասաղի անդնդախոր ձորը: Այս լուրն իմանալով ու չցանկանալով ավագ քույրերի կյանքի գնով երջանկանալ՝ փոքր քույրը, սպիտակ զգեստ հագնելով, գահավիժում է Քասաղի ձորը:

Դժբախտ Սարգիսը, ծանր վշտից կոտրված սրտով, դառնում է ճգնավոր: Հետագայում կարեկից ու ավանդապահ ժողովուրդի աջակցությամբ Սարգիս ճգնավորը Քասաղի ձորի եզերքին երեք եկեղեցի է կառուցում եւ, ի հավերժումն բարեհոգի, սիրասուն քույրերի հիշատակի, անվանում Ծիրանավոր, Կարմրավոր ու Սպիտակավոր:

## Աշտարակի Սուրբ Աստվածածին (Կարմրավոր) եկեղեցի



Կարմրավոր (Սուրբ Աստվածածին) եկեղեցին գտնվում է Աշտարակի հյուսիսարեւելյան բարձրադիր մասում: Կառուցվել է VII դ.: Այն խաչաձեւ գմբեթավոր փոքր կառույցներին բնորոշ եւ անաղարտ պահպանված նմուշներից է: Այս տիպը Հայաստանում զարգացած է եղել դեռեւս V դ. եւ ունեցել բազմաթիվ օրինակներ: Կարմրավորը արտաքուստ եւ ներքուստ խաչաձեւ գմբեթավոր եկեղեցի է: Ութանիստ թմբուկը պսակված է կղմինդրածածկ կորագիծ վեղարով, որը նույնանյութ եւ նմանաձեւ տարրի պահպանված հնագույն օրինակն է: Հարավային, արեւելյան եւ հյուսիսային որմերը երիզված են մեկտողանոց շինարարական արձանագրությամբ: Ներսում պահպանվել են որմնանկարների մնացորդներ: Վարպետորեն ընտրված համաչափությունների շնորհիվ ներդաշնակված ծավալներով կառույցը թողնում է միաձույլ արձանի տպավորություն: Կարմրավորի շուրջը կան շատ հետաքրքիր խաչքարեր, որոնցից առավել հայտնի է Ծակքարը (1268 թ.), որն իր անունը ստացել է պատվանդանում ունեցած անցքից:

Կարմրավորը կուսանաց վանք (կուսանոց) է եղել: Այնտեղ մինչ օրս պահվում են ուշադրության արժանի երկու հնություններ: Դրանցից առաջինը մի հնդկական նկարազարդ վարագույր է, որը բերվել էր 1798–1799 թթ., Կալկաթայից, մյուսը՝ *«Շուխոնց Ավետարան»*-ը. այս ձեռագիր Ավետարանը 1873 թ. նվիրաբերել է աշտարակցի Շուխյանց ընտանիքը:

Այստեղ է գտնվում նաեւ հայ անվանի բանաստեղծ Գեւորգ Էմինի գերեզմանը:

* * *

Շուխոնց նկարազարդ (ունի 13 մանրանկար) Ավետարանը գրվել է 1669 թ. Խոջա Մանասի պատվերով եւ Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի կրոնավոր Բարսեղի ձեռքով: 1750–1760 թթ. Ավետարանն արդեն գտնվում էր Աշտարակում եւ Շուխյան գերդաստանի սեփականությունն էր: Ավետարանը եկեղեցուն նվիրաբերելուց հետո դարձել է ամբողջ Աշտարակի պարծանքը, սրբությունը եւ հայտնի է եղել *«Շուխոնց Ավետարան»* անունով: Աշտարակից ու նրա եկեղեցիներից խորհրդային իշխանության տարիներին իրականացրած բռնագրավումների հետեւանքով Ավետարանը, ի վերջո, հանգրվանել է Մատենադարանում:

Արդեն գեղեցիկ ավանդույթ է դարձել, երբ ամեն տարի Սրբոց Թարգմանչաց տոնի առիթով՝ Արագածոտնի թեմի առաջնորդանիստ Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվող ուխտի սուրբ պատարագին Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի պահոցից դուրս է բերվում եւ Օշական տարվում ավելի քան երկու դար Աշտարակի սրբություն հանդիսացող, Սուրբ Ամենափրկիչ եւ Սուրբ Կարմրավոր եկեղեցիներում երկար ժամանակ հանգրվանած Շուխոնց հրաշագործ սուրբ Ավետարանը, որպեսզի ուխտավոր հայորդիները հնարավորություն ունենան հպվելու եւ օրհնություն ստանալու այդ զորավոր Ավետարանից:

***շարունակությունը էջ 18***



# Արագածոտնի մարզի նշանավոր վանքերն ու եկեղեցիները

*սկիզբը՝ էջ 17*

## Աշտարակի Սուրբ Աստվածածին (Սպիտակավոր) եկեղեցի

Սուրբ Աստվածածին (Սպիտակավոր) եկեղեցին գտվում է Աշտարակի հնագույն հատվածի՝ Բերդաթաղի հարավային մասում՝ Քասաղ գետի աջ ձորաեզրին՝ փոքրիկ հրվանդանի վրա: Եկեղեցին նաեւ դիտակետ է ծառայել՝ հսկելով դիմացի լանջով դեպի կամուրջ իջնող ու Բերդաթաղ բարձրացող ճանապարհը: Սուրբ Աստվածածին (Սպիտակավոր) եկեղեցին կառուցվել է XIII դարի սկզբին: Հավանական է, որ եկեղեցին կառուցվել է ավելի վաղ հիմնադրված եկեղեցու տեղում: Կառուցվել է դեղնակարմրագույն սրբատաշ տուֆով՝ կրաշաղախի օգտագործմամբ: Եկեղեցին եղել է գմբեթավոր, կառուցվել է քառակուսի հիմնատակի եզրաձեւերով ձգվող կամարների վրա: Խաչվող կամարների վրա բարձրացել է գմբեթը: Սպիտակավորն ունի երկու մուտք՝ հարավից, որը բացվում է ուղիղ ձորաեզրին, եւ արեւմուտքից, որը գլխավոր մուտքն է:

Սուրբ Աստվածածին (Սպիտակավոր) եկեղեցին զգալիորեն վնասվել է երկրաշարժերից, գտնվում է կիսավեր վիճակում: Նախատեսվում է իրականացնել եկեղեցու ամրակայման եւ վերականգնման աշխատանքներ:

## Աշտարակի Սուրբ Սարգիս եկեղեցի

Քասաղ գետի ձորաեզրին գտնվող Աշտարակի Սուրբ Սարգիս եկեղեցին կառուցվել է XIX դարում, հին եկեղեցու (հավանաբար՝ XIII դ. կառույց) տեղում: Գմբեթավոր Ս. Սարգիս եկեղեցու թմբուկը զարդարված է չորս փոքրիկ պատուհաններով: Եկեղեցու ներքին քարերը փոխված չեն, սակայն ճակատը վերջերս ենթարկվել է վերանորոգման: Սուրբ Սարգիսը նոր տեսք ունի, սակայն հին քարերի արձանագրությունները եւ քանդակները վկայում են եկեղեցու՝ ավելի վաղ ժամանակաշրջանի կառույց լինելու մասին: Սուրբ Սարգիս եկեղեցուց առինքնող, գեղեցիկ տեսարան է բացվում դեպի Աշտարակի երեք եկեղեցիները՝ Կարմրավորը, Սպիտատկավորը եւ Ծիրանավորը:

Աշտարակի Սուրբ Սարգիս եկեղեցին վերանորոգվել է 1985 թ.՝ ճարտարապետ Հ. Գասպարյանի ղեկավարությամբ եւ Աշտարակի գործկոմի նախագահ Ալֆրեդ Շահնազարյանի ջանքերով:

## Աշտարակի Սուրբ Մարինե եկեղեցի

Սուրբ Մարինե եկեղեցին գտնվում է Աշտարակ քաղաքի հյուսիս-արեւելքում: Կառուցվել է 1281 թ., դարչնագույն սրբատաշ տուֆից: Եկեղեցին ունի շեշտված վերձիգ համաչափություններ, ճակատների միանման, պարզ մշակում: Հարդարանքից ուշագրավ են պատուհանների կիսագլանային հատվածքի քառանկյուն պարակալները՝ խաչաձեւ դասավորված եռաթեւ հավելումներով: Կառույցը պատկանում է ներքուստ՝ խաչաձեւ, արտաքուստ՝ ուղղանկյուն հիմքով, *«գմբեթավոր սրահ»* տիպի եկեղեցիների շարքին: Աղոթասրահի արեւելյան՝ ավագ խորանի երկու կողմերում, տեղադրված են կրկնահարկ ավանդատներ: Գմբեթատակ քառակուսուց անցումը դեպի թմբուկը իրականացված է առագաստների միջոցով: Թմբուկը ներքուստ շրջանաձեւ է, արտաքուստ՝ տասանիստ, բոլոր տասը նիստերին բացված են եղել պատուհաններ: Եկեղեցին ունի երկու մուտք՝ հարավային եւ արեւմտյան ճակատներից: Հարավային խաչաթեւի կտուրի զանգաշտարակը կառուցվել է 1838 թ.: Շուրջը պահպանվել են խոշոր, անմշակ բազալտով շարված պարսպի մնացորդներ:

* * *

Աշտարակում մի ուշագրավ ավանդություն է պահպանվել Սուրբ Մարինե եկեղեցու կառուցման մասին: Հին ժամանակներում Աշտարակի եկեղեցիներից մեկում քահանայագործել է երիտասարդ ու գեղեցկատես մի քահանա: Դժբախտաբար, այս քահանան վաղաժամ այրիանում է՝ զրկվելով իր սիրեցյալ երեցկնոջից: Որոշ ժամանակ անց՝ այրիացյալ քահանան կրկնամուսնության խնդրանքով դիմում է կաթողիկոսին: Կաթողիկոսը մերժում է քահանայի խնդրանքը: Բայց որպեսզի քահանային խորհրդածելու ժամանակ տա, որ նա այդ ընթացքում վերջնական որոշում կայացնի կրկին ամուսնանալու կամ ամուսնանալու մտադրությունից հրաժարվելու, կաթողիկոսը քահանային պատվիրում է վերջնական որոշում կայացնելուց առաջ մի եկեղեցի կառուցել: Քահանային հաջողվում է երկարուձիգ տարիների տքնաջան աշխատանքով գործը գլուխ բերել ու կառուցել է Սուրբ Մարինե եկեղեցին: Վեհաշուք եկեղեցին կառուցելուց հետո քահանան նույն խնդրանքով նորից է դիմում կաթողիկոսին: Վեհափառը քահանային կրկնամուսնության թույլտվություն է շնորհում՝ պատվիրելով ամուսնանալուց առաջ եկեղեցին առնել ամուր ու բարձրաբերձ շրջապարիսպների մեջ, իսկ ճգնակյացների համար մենախցեր կառուցել: Քահանան խոնարհությամբ իրականացնում է կաթողիկոսի պատվերը: Սակայն, արդեն ալեհեր դարձած քահանան, հրաժարվում է ամուսնանալու ցանկությունից, դառնում է ճգնավոր եւ ապաշխարում միաբանակից եղբայրների հետ իր իսկ կառուցած եկեղեցում:

***շարունակությունը էջ 19***



# Արագածոտնի մարզի նշանավոր վանքերն ու եկեղեցիները

*սկիզբը՝ էջ 18*

## Աղցք (Աղձք)



Աղձք գյուղը գտնվում է Աշտարակի տարածաշրջանում, Աշտարակ քաղաքից 7–8 կմ հյուսիս-արեւմուտք: Այստեղից էր Հայոց կաթողիկոս Կոմիտաս Ա Աղցեցին:

Գյուղը նշանավոր է IV դ. կեսերին կառուցված դամբարանով, ուր ամփոփված էին հայ Արշակունի արքաների աճյունները, ինչպես նաեւ V դ. մի բազիլիկ եկեղեցով, որը վերակառուցվել է XIX դարում:

Դամբարանը կանգուն է մնացել մինչեւ Արշակունյաց թագավորության անկումը (428 թ.): Հետագայում այն մեծապես վնասվել ու ավերվել է բազմաթիվ ասպատակությունների ու երկրաշարժերի հետեւանքով:

